Վ. ՇԿՎԱՐԿԻՆ

ՈՒՐԻՇԻ ՅԵՐԵԽԱՆ

891.71
Շ-70

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ — 1935

891.71
Շ-70
ար

22 JUN 2007
25 NOV 2010

Վ. ՇԿՎԱՐԿԻՆ

ՈՒՐԻՇԻ ՅԵՐԵԽԱՆ

ԿՈՄԵԴԻԱ
3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ 5 ՊԱՏԿԵՐՈՎ

Թարգմանություն Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ

1935
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

15.07.2013

12461

Գլավլիտ 8671 (բ)
Հրատար. № 4004
Տիրաժ 3000

1124
40

Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Դավթյան

Հանձ է արտ. 2/I Ստորագրված է տպելու 16/II-35 թ.
Ստատֆորմատ Բ6 125x176 պատվեր № 31
Типография им. Стачки 1902 г. АЧКПТ Ростов на-Дону.

ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿԱՐԱՈՒԼՈՎ ՍԵՐԳԵՅ ՊԵՏՐՈՎԻՉ — Ծեր յերաժիշտ, նվագում է նվագախմբում թավ ջութակի վրա:

ՈՅԼԳԱ ՊԱՎԼՈՎՆԱ — Նրա կինը, 35 տարի առաջ ավարտել է գիմնազիան, սակայն հետագայում զբաղվել է բացառապես տնային տնտեսությամբ:

ՄԱՆՅԱ — Նրանց աղջիկը, 20 տարեկան, սկսնակ դրամատիկ դերասանուհի:

ՊՐԻԲԼՅՈՎ ՖԵՈԴՈՐ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ — Ինժեներ մոտ 40 տարեկան:

ԿՈՍՏՅԱ — Ուսանող-պրակտիկանտ:

ՅԱԿՈՎ (ՅՈՒՍՈՒՖ) — Ուսանող-պրակտիկանտ, աջարացի:

ԱԳՐԻՊԻՆԱ ՍԵՄՅՈՆՈՎՆԱ — Մանկաբարձուհի:

ԶԻՆԱ — Մանյայի ամառանոցային ընկերուհին:

ՍԵՆԵԶԿԱ ՊԵՐԶԱՏԿԻՆ — Ցերիտասարդ ատամի տեխնիկ:

ՌԱՅԱ — ԲՈՒՀ-ի ուսանողուհի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻՐՈՆՈՎԻՉ — Ռայայի հայրը:

ՌԸՎԿԻՆԴ — Հասակավոր ատամնարույժ սոլիդ արտաքինով:

ԱՆՆԵԶԿԱՅԻ ԲԱՐԵԿԱՄԸ — Գրեթե անխոս, միայն հորդորում է:

ՓՈՍՏԱՏԱՐ

Դործողությունը կատարվում է Մոսկվայի տակ, ամառանոցում, 1933 թ. ամառը:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Անտառոտ վայր։ Ցերկու հին «լալկան կեչիներ»։ Շուրջը՝ մատղաշ թփուտ։ Փոքրիկ ամառանոցի ճակատը՝ տերբասով, և պատշգամբը՝ վերնատան վրա։ Հրապարակ, փոքր սեղան, նստարաններ, ծաղկաթումբ

Կոստյան դուրս է գալիս պատշգամբ։ Ցերազկոտ դիտում է շուրջը։ Նրա յետեվից՝ Յակովը։

ՅԱԿՈՎ

Կոստյա, դու ուր ես յեկել։ Ամառանոց թե պրակտիկայի։ Յես հարցնում եմ. — Ինչու համար ես յեկել։ Ճանապարհ անցկացնելու։

ԿՈՍՏՅԱ

Դե, իհարկե։ Ճանապարհ անցկացնելու։

ՅԱԿՈՎ

Սպիտակ շալվարով կարելի յե ժամանակ անցկացնել, և վոչ թե ճանապարհ։

Գիրք է տալիս Կոստյային։

Կարդա։

ԿՈՍՏՅԱ

Զայնս ինչ վոր մի տեսակ... խզզում է...

ՅԱԿՈՎ

Ա՜խ, խզզում է։ Լավ։ Նստիր։

Վերցնում է գիրքը, փնտռում է։

Խճուղային ճանա-

պարհը... Այսպես... Իսկ լսել՝ առողջություն թույլ է տալիս։

ԿՈՍՏՅԱ

Նու, թույլ է տալիս։

ՅԱԿՈՎ

Լայնական պրոֆիլը...

Կոստյան շուրջն է նայում։ Հրապարակ է գալիս Մանյան՝ տետրը ձեռին։

ՅԱԿՈՎ (Կարդում է)

«Նախագծվող ճանապարհի լայնական պրոֆիլի տակ հասկացվում է նրա լայնական կտրվածքը»։

ԿՈՍՏՅԱ (Նայելով Մանիային)

Ճիշտ է։

ՅԱԿՈՎ (Շարունակում է)

«Այդ կտրվածքը ցույց է տալիս ճանապարհի դրությունը յերկրի մակերեսի նկատմամբ»։

ԿՈՍՏՅԱ

Ճիշտ է։

ՅԱԿՈՎ (Բարձրաձայնում է գլուխը յեվ շարունակում է նույն տոնով)

Ցես տրաքվում եմ, բարձրաձայն կարդում եմ նրա համար, ինչպես ծծկեր մանուկին, իսկ նա, այս եշը չի լսում։

ԿՈՍՏՅԱ

Ճիշտ է։

Ցակովը լուռ է։

Դե՞։ Ճանապարհի պրոֆիլը...

ՅԱԿՈՎ (Բարձրանում է, տեսնում է Մանիային)

Ստում ես, պրոֆիլը ճանապարհի վրա է։ Հիմա և խզզոցները և շալվարը — բոլորը պարզ է։

ԿՈՍՏՅԱ

Կամաց, խնդրում եմ։

ՅԱԿՈՎ

Դու պետք է ինձ նախազգուշացնեյիր, «խնդրում եմ»։

ԿՈՍՏՅԱ

Ինչի՞ մասին։

ՅԱԿՈՎ

Քո վողբալի վիճակի մասին։ Տիֆով վարակվածները, գրիպով վարակվածները պետք է նախազգուշացնեն։

ԿՈՍՏՅԱ

Դե յես հո տիֆով հիվանդ չեմ։

ՅԱԿՈՎ

Միևնույն է։ Սիրահարված կնշանակի՝ հիվանդ։

ԿՈՍՏՅԱ

Ցակով, նա այստեղ է... Հայհոյիր կիսաձայն։

ՅԱԿՈՎ

Ա՛յ քեզ փորձանք՝ ապրիր սիրահարվածի հետ միևնույն սենյակում...

ԿՈՍՏՅԱ

Բայց դա հո վարակիչ չե։

ՅԱԿՈՎ

Սակայն անհաճելի յե։ Ամեն որ պետք է սափրվես, այսոր՝ շալվար, վաղը՝ ոձիք, հետո եվ մինչև փողկապը կհասնես։ Ազնվորեն ասա. — փողկապ բերե՞լ ես։

ԿՈՍՏՅԱ

Ասենք՝ բերել եմ։

ՅԱԿՈՎ

Դե սրանից հետո մարդ վո՞նց ապրի քեզ հետ։

ԿՈՍՏՅԱ (Տեսնելով վոր Մանյան գնացել է. բարձրաձայն)

Իսկ չի՞ կարելի արդյոք չգոռալ քոսոտ դայակ։

ՅԱԿՈՎ

Նորմալ մարդուց յես «քոսոտ դայակը» չեյի մարսի։

ԿՈՍՏՅԱ

Դու մի՛ կատաղի, հասկացիր, ախր յես, ախր ինձ հետ, ախր իմ մեջ... Ցա՛շա, բարեկամս...

Գրկում է Ցակովին։

ՅԱԿՈՎ

Սկսել է մարդկանց վրա հարձակվել։ Ուղղակի լուսնոտ է...

Մանյան նորից դուրս է գալիս հրապարակ։

ՅԱԿՈՎ

Յես նրան կգանգատվեմ։ Մա...

Կոստյան տանում է Յակովին դեպի վերնատան դուռը։

ՄԱՆՅԱ (դերը ձեռքին)

*Յես միայնակ եմ բեմի վրա... Այստեղ ռամբան է, այնտեղ՝ հասարակությունը... ահավոր է... Ո՛յ, ինչ ահավոր է։ Ահա նրանք՝ հանդիսականները։ Ի՞նչ սարսափելի յեն բոլորը... Ավելի լավ է չնայել։ Բայց չե՞ վոր նրանք չգիտեն, վոր սա իմ առաջին դերն է։ Գլխավորը՝ չհուզվել։ Այսպես։ Լռություն։ Լավ է, յեթե լռություն է, իսկ վոր դահլիճում հաղում են ինչպես թոքախտավորների սանատորիայում։ Յեվ հանկարծ տապալում։ Ասում են՝ մի դերասանուհի այնպես է տապալվել, վոր վշտից գլխի պարիկն է ճերմակել։ Բեմի վրա ամեն ինչ հնարավոր է։ Վոչ, յես սքանչելի կխաղամ։ Բայց ինչպե՞ս խաղամ, յերբ յես դերը չեմ հասկանում։ Գործողությունը կատարվում է նախ քան հեղափոխությունը։ Մի աղջիկ կապվել է սիրած մարդու հետ։ Ի՞նչ կա վոր, առանձնապես վոչինչ։ Տղան թողել է նրան։ Խնդրեմ — բնավ ել չեյի վշտանա։ Նա պետք է յերեխա ունենա։ Դարձյալ զերբնական վոչինչ չկա։ Այդ մասին իմանում են ծնողները և աղջկան վռնդում տնից։ Մեծ բան է՝ տրագեդիա — վեր կենար և փոխադրվեր մի այլ բնակարան։ Բոլոր ծանոթները յերես են դարձրել աղջկանից։ Յես կը թքեյի այդ տեսակ ծանոթների վրա։ Ի վերջո հերոսուհին հանդիպում է մի ուսանողի։ Նա ամբողջապես կլանվում է տղայով, տղան ել կլանվում է նրանով։ Բայց իմանալով յերեխայի մասին, տղան այլևս չի գալիս։ Ե՛հ, չի գալիս, թող չգա։ Իսկ նա տանջվում է, ամբողջ չորս գործողություն ուրը պատկեր տանջվում է։ Ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար, ինչ անհեթեթ եյին ապրում մարդիկ։ Ա՜խ, յերանի թե հիմա հանդիպեյի այդպիսի մեկին։ Դիտեյի, հարց ու փորձ անեյի... Չեմ հասկանում... Ուզում եյի դիմել հեղինակին, պարզվեց, վոր մահացել է... բնական մահով, հոնորարի քչությունից։ Հեղինակին ինչ, նա իրեն լավ է զգում։ Իսկ յես մեկ ամսից պրեմյերա ունեմ։ Այստեղ ռամպան, այնտեղ՝ հասարակությունը... Յես մտնում եմ... և վոչինչ չեմ հասկանում։

Տնից տերբաս է դուրս գալիս Ոյլգա Պավլովնան։

ՄԱՆՅԱ

Մայրիկ, մայրիկ։

ՈՅԼԳԱ

Ի՞նչ է։

ՄԱՆՅԱ

Դու սիրեկաններ ունեցե՞լ ես։

ՈՅԼԳԱ (Բաժակը վայր է գցում ձեռքից)

Յեվ ինչպես լեզուդ չի պապանձվում մորիցդ այդպիսի նողկալի բաներ հարցնելիս։ Քո յուրաքանչյուր հարցից յես ամանեղեն եմ ջարդում։

ՄԱՆՅԱ

Իսկ ծանոթներդ քեզնից յերես չե՞ն դարձրել։

ՈՅԼԳԱ

Հիմարանում ես դու ամառը։

Ամառանոցից լսվում է թավ ջութակի նվագ։

ՄԱՆՅԱ

Վոչ, պատասխանիր լրջորեն. — մի՞թե քո յերիտասարդությունն անցել է առանց վորևե արկածների։

ՈՅԼԳԱ

Յես Շերլոկ Հոլմսը չեմ։

ՄԱՆՅԱ

Ապա ել ինչո՞ւ յեք գոյություն ունեցել։

ՈՅԼԳԱ

Շնորհակալ եմ, ամեն ինչ ասվեց։

ՄԱՆՅԱ

Ապա ել ինչի՞ վրա յես վատնել դու քո կյանքը։

ՈՅԼԳԱ

Քեզ վրա, քեզ վրա յեմ վատնել յես իմ կյանքը։

ՄԱՆՅԱ

Յեվ կատարելապես ապարդյուն։

ՈՅԼԳԱ

Այժմ յես ել եմ տեսնում, վոր ապարդյուն է։

ՄԱՆՅԱ

Ուզո՞ւմ եք յես ձեզ վերադաստիարակեմ։

ՈՅԼԳԱ (Ձեռքից գցում է ատաղձն)

Վոչինչ մի ասա, յերբ ձեռքիս ամանեղեն կա։

Կանչում է։

Սերյոժա, Սերգե՛յ Պետրովիչ։

Գալիս է Կարաուլովը ջուրակի աղեղը ձեռքին։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՛յլդա Պավլովնա, ախր դու Զայկովսկուն ջարդ ու փշուր արիր...

ՈՅԼԳԱ

Ի՞նչ Զայկովսկի, յես ամանեղենը ջարդ ու փշուր արի։ Դու մի աղջկանդ լսիր։

ՄԱՆՅԱ

Հա՛յր, ասա՛ խնդրեմ, քո պատճառով վորևե կին կործանվե՞լ է։

ՈՅԼԳԱ

Ահա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Իմ պատճառո՞վ։ Իմ պատճառով քիչ եր մնացել յերկու հոգի կործանվեյին։

ՄԱՆՅԱ

Դե ի՞նչ, նրանք անձնասպանությունն գործեցին, ջրահե՞ղձ յեղան։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Թունավորվեցին։ Հազիվ փրկեցին։

ՄԱՆՅԱ

Դու մի՞ քաշվիր, պատմիր՝ վորտե՞ղ եր այդ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մեր տանը։

ՄԱՆՅԱ

Ինչպե՞ս, ինչո՞վ թունավորվեցին նրանք։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Զկով։ Յես հյուրասիրում եյի։

ՄԱՆՅԱ

Դե յես դրա մասին չեմ հարցնում։ Սիրուց, դեպի քեզ ունեցած սիրուց, վոչ վոք չի՞ տանջվել։ Դու արվեստագետ ես, յերաժիշտ, հավանորեն — հետաքրքիր ես յեղել։

ՈՅԼԳԱ

Յերբեք չի՞ յեղել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յեղել եմ, յեղել եմ։

ՄԱՆՅԱ

Զվիճել։ Ե՞-Ե։ Կանանց նահատակե՞լ ես։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Չեմ հասկանում ինչպիսի վոճրագործություն ես պահանջում դու ինձնից։ Յես գրեթե իմ ամբողջ կյանքը

Նվագել եմ նվագախմբում, իսկ կանայք միայն սոլիստներից եյին նահատակվում, բայց իհարկե մահվան դուռը չեյին հասնում։

ՄԱՆՅԱ

Ինչո՞ւ յեք դուք այդչափ դժգույն։

ՈՅԼԳԱ

Մենք դժգո՞ւյն։ Վիրավորական է լսել։

ՄԱՆՅԱ

Ա՛խ, յեթե դուք կարողանայիք վռնդել ինձ տնից... Գիշեր է, սառնամանիք... Յես հեռանում եմ առանց մուշտակի, փաթաթված թատրոնական կլասիկ շալի մեջ... Արցունքները սառչում են աչքերիս, և ձյունախառն մրրիկը քշում է ինձ ամայի փողոցներով...

Հեռանում է «տրրազ»-ի մեջ։

ՈՅԼԳԱ

Տեր աստված, այս ինչի՞ց կարող է լինել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Կամ սիրուց է, կամ վատ սննդից։

ՈՅԼԳԱ

«Կլասիկ գիշեր, առանց մուշտակի» — սիրուց է։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Լա՛վ, ո՞ւմն է նա սիրում։

ՈՅԼԳԱ

Յես գլխի յեմ ընկնում... Վորևիցե տղամարդու։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դու ավելի լավ է գլխի մի՛ ընկնի, այլ ասա... ովքե՞ր են լինում մեր տանը։

ՈՅԼԳԱ

Հիմիկվա յերիտասարդները տներում չեն լինում, նրանք իրենց տեղը գիտեն. — պատշգամբից այն կողմը չեն անցնում։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դժվարամարս կլին է... Նու, պատշգամբի վրա ո՞վ է Մանիայի հետ սիրաբանություն անում։

ՈՅԼԳԱ

Վոչ պատշգամբի վրա, վոչ էլ ուրիշ տեղերում. — հիմա վոչ վոք, վոչ վոքի հետ սիրաբանություն չի անում։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ապա վո՞նց են նրանք... հանդիպում, բացատրվում...

ՈՅԼԳԱ

Թե ինչպես են նրանք այդ անում, յես չգիտեմ, իսկ գլխի ընկնելուց վախենում եմ։ Ժամանակակից կավալերները բացառապես խուժանային թեքում ունեն։ Յես աշխատում եմ նրանց հեռու քշել մեր ամառանոցից։ Ահա... մեկը լուսը չբացված գալիս է...

Հրելով ամուսնուն դեպի դուռը։

Գնացրու,

իբր թե մենք տանը չենք։

ՍԵՆԵՉԿԱ (Գալիս է գիրքարով։ Նայում է լուսամուտին։ Նստում է ամառանոցի դեմը, հրապարակի հակառակ ծայրին։ Յերգում է)։

Զլսի մեր եղոխան բառերս
Հայտնում եմ քեզ գաղտնի մտքերս.
Թե քեզ վերջերս շատ վատ է,
Իսկ հալս այնքան էլ լավ չէ։

Նայում է լուսամուտներին, նրանցից մեկը փակվում է, Սենեչկան յերգում է կամաց։

Գիտեմ, վոր դու ինձ մերժելու յես,
Հույսերս դու ջարդելու յես,
Գիթարս կտամ յես ժայռերին,
Թե ժայռ չկա, կտամ թփերին։

Փակվում է մյուս լուսամուտը։ Սենեչկան յերգում է տրագիկական շշուկով։

Ուղին իմ կյանքի շատ մռայլ է,
Կլուծեմ իմ հարցերն այս ցավոտ.
Կընկնեմ յես արագ գնացքի տակ
Ուրախ իսկ՝ մեռած ժամանակ։

Լուսամուտը աղմուկով բացվում է։ Ցերեվում է Կարաուլովի գլուխը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ցեթե դուք Մանիայի համար եք ջանք թափում, իզուր է, նա տանը չէ։ Այնտեղ, այն կողմ յերգեցեք։

Բարկացած փակում է լուսամուտը։

ՍԵՆԵԶԿԱ

Ելի մի տեսակ անհարմար դուրս յեկավ։

Մոտենում է կամացուկ բաղխում է լուսամուտը։ Ցերկու լուսամուտները բացվում են։ Մեկում Կարաուլովի գլուխն է, մյուսում՝ Ոլգա Պավլովնայի։ Սենեչկան դիմում է մերթ մեկ, մերթ՝ մյուս գլխին։

ՈՅԼԳԱ

Ել ի՞նչ եք ուզում։

ՍԵՆԵԶԿԱ

Ներեցեք անհանգստության համար։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ուրիշ վոչի՞նչ։

ՍԵՆԵԶԿԱ (Ոլգա Պավլովնային)

Իմ կողմից մի տեսակ անկուլտուրական դուրս յեկավ։

Ոլգա Պավլովնան փակում է լուսամուտը, Սենեչկան՝ Կարաուլովին։

Այսինքն յես ուզում եյի ներումն խնդրել իմ անկազմակերպ յերգի համար ամառանոցային վայրի շրջանակների սահմաններում։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Պրծաք։

ՍԵՆԵԶԿԱ

Պրծա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Փակելով լուսամուտը)

Կարո՞ւզո։

ՍԵՆԵԶԿԱ (Հեռանալով)

Կարո՞ւզո... Ինչո՞ւ համար։ Ցեթե անտերես չես ծնվել՝ մեզանում չես կարող ապրել։

Քաղաքավարի, յերկչոտ գլուխ է տալիս ամառանոցին յեվ հեռանում։ Պատշգամբի վրա յերեվում են Ոլգա Պավլովնան յեվ Կարաուլովը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ցես նրան կեղծ հետքով ճամբեցի։ Մի տես, իսկ նա ո՞վ է։

ՈՅԼԳԱ

Վո՞ւրտեղ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ա՛յ, ճանապարհի վրա, մոտենում է Մանիային։

ՈՅԼԳԱ

Դա չէ վոր Պրիբելյոմն է, Ֆեոդոր Ֆեոդորովիչ։ Դա թող մոտենա։ Նա այստեղ խնդրի յե անցկացնելու։ Նայիր — ձեռքն է համբուրում։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ի՞նչ ես աչքերդ չռել։ Ցրված դեմք շինիր, ոդ շնչիր։ Սպասիր, չե՞ վոր հիմա հասարակության մեջ ձեռք չեն համբուրում։

ՈՅԼԳԱ

Նրանք հասարակության մեջ չեն, այլ անտառում։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ահա նորից, ափն է համբուրում... Անտառումն ել պետք է չափ ու սահման լինի։

ՈՅԼԳԱ

Նրան ներելի յե. — սեփական ամառանոց ունի, ինժեներ է, բարեզուսպ է, գրեթե ոտաբերկրացի։ Ասաված տա, աստված տա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՞ւմ տա, ինչ տա։

ՈՅԼԳԱ

Մանյային տա, բաղդ տա, բաղդ։ Նրանք այս կողմն են գալիս...

Կարաուլովին հրում է սենյակը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՞ւր ես հրում ինձ։

ՈՅԼԳԱ

Հեռացիր պատշգամբից, աչքներին մի՛ յերևա։

Գնում են։ Գալիս են Մանյան յեվ Պրիբելյովը։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Մանյա, Մարուսյա, Մարգո... Դուք դերասանուհի յեք։ Կիրք չզգացած, դուք իրավունք չունեք բեմ դուրս գալու։

Ձեռքը մեկնում է։ Մանյան մի քայլ կողմ է քաշվում։

Դուք կարծում եք, թե այժմ դուք հեռացաք ինձնից։ Վոչ, դուք հեռացաք արվեստից։ Գիտցեք, վոր բոլոր մեծանուն դերասանուհիները սիրել են։

ՄԱՆՅԱ

Բայց չէ՞ վոր նրանք ձեզ չեն սիրել։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Մանյա, Մարուսյա, Մարգո, դուք չեք ուզում հասկանալ։ Ցես կբացատրեմ...

Բռնում է նրա ձեռքից։

Մտնենք ձեր սենյակը։

ՄԱՆՅԱ

Վոչ, այդ յես սենյակումն յել չեմ հասկանա։

Խլում է ձեռքը։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Սրանից հետո յել ի՞նչպես ընդհուպ մոտենալ յերիտասարդությանը։ Ի՞նչ արած, վանեցեք, հրեցեք... Ցես

կփակվեմ, կամփոփվեմ ինքս իմ մեջ... Ծանոթ եք դուք արդյոք ինդիվիդուալիզմի վողբերգությանը։

Գլուխն առնում է ձեռքերի մեջ։

Ցանկանում եք ավտոմոբիլով զբոսնել։

ՄԱՆՅԱ

Վոչ։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ի՞նչ դառն է միայնակությունը։ Իսկ մոտորային մակուլկով։

ՄԱՆՅԱ

Դարձյալ վոչ։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ել ինչով եք դուք տարբերվում առաջվա որիորդներից, վորոնց վերացրեց հեղափոխությունը։

ՄԱՆՅԱ

Նրանով, վոր յես ձեզ չեմ հավատում։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Գեղեցիկ, յես կապացուցեմ։ Ցես կապացուցեմ։ Բայց ներս թափանցեք իմ սրտի խորքերը գեթ դերասանական հետաքրքրությունից դրդված։

ՄԱՆՅԱ

Լավ։ Ցերբևիցե կթափանցեմ, իսկ այժմ յես պետք է աշխատեմ։

Գալիս է Սենեչկան։

ՊՐԻԲԵԼՅՈՎ (Ցետ-յետ հեռանալով)

Մանյա, Մարուսյա, Մարգո...

Բաղխվելով Սենեչկային։

Ծառ է։ Ներեցեք, յես փոքր ինչ սխալվեցի։

Գնում է։

ՍԵՆԵՉԿԱ

Ցես հասկանում եմ, որ մի սենյակ է հանդուգն։

Պետք է նրան հակահարված տալ, չզիջել և ահա չկա իմ մեջ ճեպընթաց անպատկառություն։

Գոռում է Պրիբրյաժվի յետեվից։

Ծառը ինքդ ես, ծառից եմ լսում։ Մարիա Սերգեևնա, այդ ձեր պապանձն ինչ ունի իմ դեմ։

ՄԱՆՅԱ (Նայում է տետրին)

Ինչից յեզրակացրիք։

ՍԵՆԵԶԿԱ

Ունի։ Ունի։ Ցես հարցրի ձեր մասին, իսկ նա ինձ այլ կողմ՝ դեպի ձորը ճամբեց։ Վոչ, յես ծնվել եմ անվայել մոլորակի տակ։

ՄԱՆՅԱ

Որինակ։

ՍԵՆԵԶԿԱ

Ասում են՝ կան այդպիսի անպատկառ ու անվայել համաստեղություններ — խեցգետին, ջրհոս... դուցե ստում են։ Ցես անպայման ծնվել եմ այդ կեղտոտություններից վորևե մեկի տակ։ Նստել կարելի՞ յե։

ՄԱՆՅԱ

Նստեցեք, միայն վոչ յերկար։

Կարդում է դերը։

ՍԵՆԵԶԿԱ

Ի հարկե՝ իմ այս բախտով յես միայն բանտում կարող եմ յերկար նստել։ Մարիա Սերգեևնա, տանջում է ինձ մի հարց, զուտ թեորետիկական։ Շատ ստոր ու նողկալի յե իմ արհեստը։

ՄԱՆՅԱ

Ինչո՞ւ։ Դուք պետքական մարդ եք, տեխնիկ եք...

ՍԵՆԵԶԿԱ

Բայց ի՞նչ տեխնիկ։ Ատամի։ Իմ գործունեության դաշտը, ներեցեք մտերմության՝ դա բերանի խոռոչն է։

Ցես նախամտածեցի դուրս պրծնել նրա միջից։ Ուզում եմ, վոր կյանքում հեռանկարային հորիզոններ ունենամ, իսկ բերանի խոռոչում — ի՞նչ հորիզոններ կան։

ՄԱՆՅԱ

Դե, ի՞նչ կա վոր, սովորեցեք, աշխատեցեք ինքներդ ձեզ վրա։

ՍԵՆԵԶԿԱ

Իսկ յես չե՞մ աշխատում։ Մեր մեջ ասած՝ մեծ հանրագիտական բառարանն եմ կարդում... Անտեր ինացածը շատ դժվարամարս է։

ՄԱՆՅԱ

Ցեվ շատ եք կարդացել։

ՍԵՆԵԶԿԱ

Առաջին հատորում մինչև «արսուրդն» եմ հասել։ Ցես ապրում եմ ըստ պլանի։

Հանում է ծոցատետրը։

Ահա ինքնառաջադրանք. — հունիսին — մի կոստյում սարքել՝ պատահմունքով, հուլիսին՝ վերակառուցել հոգեբանություն։ Մարիա Սերգեևնա...

Ուզում է գրկել Մանյային, սակայն չի համարձակվում, նրա ձեռքը մնում է ոդում։

Մարիա Սերգեևնա, յես վորոշել եմ աներես լինել։

Ցատկում է։

Իմ կենսագրությունը ձեր ձեռքին է։

ՄԱՆՅԱ

Ի՞նչ է պատահել ձեզ։

Թողնում է դերը։

ՍԵՆԵԶԿԱ

Այն, վոր յես կարծես սավառնակից պարաշյուտով պիտի թռնեմ։ Շուրջս՝ մրրիկ է, մինչև գետինն ութը վերստ է, մեջքիցս հրում են, իսկ թռնելու համար

պակասում է սրտապնդություն։ Իսկ հանկարծ պարաշուտը չբացվի։ Այն ժամանակ ի՞նչ։ Տձև կերպարանափոխություն և քաղաքացիական հոգեհանգիստ։

ՄԱՆՅԱ

Սենեչկա, դե ի՞նչ է պատահել ձեզ։

ՍԵՆԵՉԿԱ (Ձեռքով ծածկում է աչքերը)

Տեսնք։ Թռչում եմ։ Յես ձեզ սիրում եմ։ Թռչում և սպասում եմ պատասխանի։ Յեվ մեկ, և յերկու, և յերեք, և չորս...

Ամառանոցից դուրս են գալիս Ոլգա Պավլովնան յեվ Կարաուլովը։ Մոտենում են Սենեչկային։

ՍԵՆԵՉԿԱ

Սիրում եմ... և հինգ, և վեց... և յոթ...

ՈՅԼԳԱ

Դուք այդ ի՞նչ է։ Աչքներդ փակած մեր աղջկան վարկաբեկո՞ւմ եք։

ՍԵՆԵՉԿԱ (Բացելով աչքերը)

Զարդ ու փշուր յեղա։ Պարաշուտը չբացվեց։

ՈՅԼԳԱ

Սերգեյ Պետրովիչ, դուրս ճնշեցեք այդ քաղաքացուն, դուրս ճնշեցեք։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Սենեչկային թեվանցուկ հեռացնելով)

Զբոսնեցեք յերիտասարդ, այնտեղ զբոսնեցեք...

ՍԵՆԵՉԿԱ

Առաջ ծանոթացեք ինձ հետ, դուցե յես լավն եմ։

ՄԱՆՅԱ

Սենեչկա, անցեք մեզ մոտ, դուք ինձ շատ դուր եք գալիս...

ՍԵՆԵՉԿԱ

Դո՞ւր եմ գալիս։ Ձեզ։

Համբուրում է Կարաուլովին։

Պապիկ...

Գնում է յերջանկությունից որորվելով։

ՄԱՆՅԱ

Ինչո՞ւ համար նրան վռնդեցիք։

ՈՅԼԳԱ

Բանակի համար։ Զափից դուրս շատ են դրանք։ Մանյա, պահիր քեզ դեպի Ֆեոդոր Ֆեոդորովիչը։ Ֆեոդոր Ֆեոդորովիչներ կյանքում յերկու անգամ չեն պատահում։

ՄԱՆՅԱ

Ինչի՞ մասին եք խոսում։

ՈՅԼԳԱ

Մենք տեսանք, թե ինչպես նա քեզ մոտ բոցավառվում եր։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ի՞նչ եր ասում քեզ։

ՄԱՆՅԱ

Անհամություններ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ինչպիսի՞ անհամություններ։

ՄԱՆՅԱ

Սովորական։

ՈՅԼԳԱ

Բացատրվո՞ւմ եր։

ՄԱՆՅԱ

Ինչո՞ւ դուք պառավներդ այդչափ երոտիկ եք տրամադրված։ Ո՞վ ասաց, «ի՞նչ ասաց»։ Չի կարելի, չէ, այդքան հետապնդել։ Ինչպես կուզենայի մեկ ընդմիշտ ձեզ մի լավ խրատ տալ։ Դե, ի՞նչ եք քարացել։ Նստեցեք։

Կարաուլովը յեվ Ոլգա Պավլովնան նստում են կողք կողքի՝ նստարանի վրա յեվ աչքերով հետեվում են Մանյային, վոր անց ու դարձ է անում։

ՄԱՆՅԱ

Ինքս ինձ վրա չեմ զարմանում։ Ի՞նչպես կարող եմ չես ծնվել այսպիսի ընտանիքում։ Մորս դեռ ներելի չե։ Նրան ամուսինը շահագործել է վորպես տնային տնտեսուհու։ Բայց դու արտիստ ես։ Ո՞ւր է քո նրբագեղ զգացմունքդ։ Դե վիրտեղ է նա։ Ի՞նչ եք ուզում դուք։

ՈՅԼԳԱ

Քո չերջանկությունն ենք ուզում։

ՄԱՆՅԱ

Հիանալի մասնագետներ, չերջանկության հրահանգիչներ։ Ինչո՞ւմն է ձեր կարծիքով՝ չերջանկությունը։

ՈՅԼԳԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչի մեջ է։

ՄԱՆՅԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչի՞... Դե, չեթե չես ուզենում, նրա նման տասը կունենամ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Հենց դրանից է, վոր մենք վախենում ենք։

ՈՅԼԳԱ

Գլխիդ ճարը տես, ամուսնացիր, խնդրում ենք, թող վոր մենք հանգիստ մեռնենք։

ՄԱՆՅԱ

Չեմ թողնի հանգիստ մեռնեք։ Հիշեցեք մեկ ընդմիշտ՝ չես պետք է հանդիպեմ՝ ում հետ ուզենամ։

ՈՅԼԳԱ

Ո՞չ։

ՄԱՆՅԱ

Վորտեղ ուզենամ։

ՈՅԼԳԱ

Ո՞չ...

ՄԱՆՅԱ

Ցեվ ինչպես ուզենամ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Լայնածավալ ծրագիր է։

ՄԱՆՅԱ

Այո, իսկ ձեզ խնդրում եմ, իմ անձնական կյանքում չխառնվել։ Դա անտակտություն է։ Աշխատեցեք ուղղվել և ցնդաբանություններով, վորպիսին ամուսնությունն է, հոգիս մի հանեք։ Ցես հիմա դրամա չեմ վերապրում։

Խփում է տետրակին։

Տրագեդիա։

Գնում է։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դու մեզ պատմիր դարտդ։ Ել ո՞ւր ես վերապրելու համար թափերը վազում։

ՈՅԼԳԱ

Իսկ մենք նորից աերբորի չենթարկված նստած ենք...

Գալիս է Զինան

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Զինա, Զինոչկա...

ՈՅԼԳԱ

Զինոչկա, մի վանեք մեր խնդիրը...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մենք ձեզ դիմում ենք վորպես նրա ավագ ընկերոջը...

ԶԻՆԱ

Ի՞նչ կա վոր, ի՞նչ կա վոր։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մանչան ձեզ վոչ մի այնպիսի վոդբերդական բան չի՞ պատմել։

ԶԻՆԱ

Ի՞նչ կա վոր, ի՞նչ կա վոր։

ՈՅԼԳԱ

Զգիտենք, միայն նրա գլխին ինչ վոր բան է պայթել, կամ պայթում է հիմա... Ահա նա...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Տեսնում եք, ինչ սոսկալի քայլվածք է...

Ոյլզա Պավլովնային

Թագնվիր,

թե չե նորից կհարձակվի։

Գնում են ներս։ Գալիս է Մանյան։ Զինան կամացուկ մոտենում է նրան յետեվից։

ՄԱՆՅԱ (խոսում է դերից)

«Ի՞նչ անեմ յես»։ Վոչ, այսպես չե։ «Ի՞նչ անեմ յես... Ասե՞մ մորս... նա չի դիմանա դրան։ Գնա՞մ... Հեռանա՞մ... բայց ո՞ւր... Իսկ ի՞նչ կլինի յերեխայիս վիճակը... Ինչպիսի կյանք է սպասում նրան։ Իմ զավակիս... իմ զավակիս... Մեռնել»...

ԶԻՆԱ

Միայն թե մի՛ հուսահատվի։ Մանյա, սիրելիս, յես բոլորը լսեցի։ Մի՞թե կարելի յե դրա համար մեռնել։

Մանյան մի պահ չի հասկանում, ապա հիհռում է։

Ի հարկե՝ դու դերասանուհի յես և ծիծաղում ես չափազանց բնական, միայն թե յես ամեն ինչ հասկանում եմ։

ՄԱՆՅԱ

Յես պարզապես բարձրաձայն խոսում եյի ինքս ինձ հետ — դերս եյի պատրաստում։

ԶԻՆԱ

Ստում ես, դու խոսում եյիր արցունքներն աչքերիդ։ Ծնողներին, իհարկե, պետք է խաբել, բայց ընկերուհուն՝ դա խղդուկություն է։ Յես նման վերաբերմունքի չեմ արժանացել։

ՄԱՆՅԱ (Վեհու ընդունելով)

Լավ։ Ոգնիր ինձ։ Ի՞նչ անել։ Ի՞նչ անեմ։

ԶԻՆԱ

Նախ և առաջ՝ չհուսահատվես, յերկրորդ՝ խոսք տուր՝ վոչ մի դեպքում չմեռնել։ Յես չեմ հարցաքննի, միայն ասա՛ դա Կոստյան է։

ՄԱՆՅԱ

Հետո՞, հետո՞։

ԶԻՆԱ

Յես հասկանում եմ։ Լսիր. — յես մի մանկաբարձուհու հասցե ունեմ։ Նրան կոչում են Ագրիպինա Սեմյոնովնա։ Յես քեզ կտանեմ նրա մոտ։

ՄԱՆՅԱ

Յես դեմ եմ դրան։

ԶԻՆԱ

Ինչո՞ւ։ Մենք բնավ էլ պարտավոր չենք մի ինչ վոր բնության պոչից գնալու, մենք պետք է հակառակենք նրան։ Այդպես են կարծում բոլորը, և սոցիալիստները և յես... Վոչ, զավակները մեր այս կյանքին չեն հարմարվում։ Յես հիշում եմ մեկին, բուլվարում տեսա. — աջ ձեռքին յերեխա, ձախում՝ պորտֆել։ Շարժվել չի կարողանում, մտածել չի կարողանում։ Յես նրան ուղղակի խորհուրդ տվի, — դնել մանուկին պորտֆելի մեջ, իսկ պորտֆելը մոռանալ նստարանի վրա։ Վոչ, գնանք Ագրիպինա Սեմյոնովնայի մոտ։ Նրա մոտ բոլորը գալիս են միանգամայն հանգիստ։

ՄԱՆՅԱ

Իսկ հեռանո՞ւմ են։

ԶԻՆԱ

Իսկ հեռանում են առավել ևս հանգիստ, դա բնական է։

ՄԱՆՅԱ

Սպասիր, սպասիր... կնշանակի՝ մենք այնտեղ այդ աղջիկներին, կանանց կհանդիպե՞նք։

ԶԻՆԱ

Նրանք չե՞ վոր քեզ չեն ճանաչում։

ՄԱՆՅԱ

Յես չեմ վախենում... Յես նույնիսկ... Սքանչելի յե... Յես համաձայն եմ...

ԶԻՆԱ

Ուրեմն հենց վաղն առավոտյան գնացքով դեպի Մոսկվա։ Մանյա, յես չեմ հարցաքննի, միայն՝ դա Կոստյանն է։

ՄԱՆՅԱ

Հետո կիմանաս։ Զինա, հիշիր, վոչ մեկին վոչ մի խոսք։

ԶԻՆԱ

Մանյա,

Ցույց տալով իր կուրծքը։

մոռացված, համբ գերեզման է։

Պատշգամբում յերևվում է Կոստյան։

ԶԻՆԱ

Նա՞ յե։ Այո։ Չեմ խանգարի։

Գնում է։

ՄԱՆՅԱ

Այսոր իմ որագրի համար առատ նյութ կա։

Կոստյան պատշգամբից ձեռք է մեկնում Մանյային։

ԿՈՍՏՅԱ

Մանյա, յես շատ բան ունեմ քեզ ասելու։

ՄԱՆՅԱ

Յես ել։

ԿՈՍՏՅԱ

Դե, ասա։

ՄԱՆՅԱ

Վոչ, առաջ դու ասա։

Պառկա։

ԿՈՍՏՅԱ

Քեզ համար լավ է։

ՄԱՆՅԱ

Լավ է։

Պառկա։

ՄԱՆՅԱ

Իսկ քեզ համար։

ԿՈՍՏՅԱ

Շատ լավ է։

Դռներում յերևվում է Յակովը, բռնում է Կոստյայի վզակոթից յեվ քաշում սենյակ։

Քոսոտ դայակ։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Սենյակ Ագրիպինա Սեմյոնովնայի բնակարանում
Յերկու դուռ: Շիրմաներ:

ԱԳՐԻՊԻՆԱ (Մենակ յերգում է):

Յերեկ տեսա քեզ յերազում,
Բախտս ինձ ժպտում էր,
Ա՛խ, յերանի քո գրկում՝
Միշտ քնած մնայի:

Դուռը բաղխում է:

Ո՞վ է:

Բացում է: Ներս է գալիս Սենեչկան:

Վո՞ւրտեղ եյիր կորել: Ութ հոգեմաշ որ ու գիշեր: Իսկ այժմ ներկայանում եք իմ ընդունման ժամերին, յերբ յես մի քաղաքացուհու հետ պիտի հանդիպեմ, ինչո՞ւ: Հասկանալի յե, վորպեսզի ավելի քիչ մենք յերկուսով մենակ լինենք: Տեր աստված, ել ո՞ւմ համար յես այրիացա:

ՍԵՆԵՉԿԱ

Ինչպե՞ս թե ում համար: Չե՞ վոր դուք պատահաբար եք այրիացել:

ԱԳՐԻՊԻՆԱ

Վոչ, յես այրիացել եմ գիտակցաբար:

ՍԵՆԵՉԿԱ

Ագրիպինա Սեմյոնովնա, Ագրիպինա Սեմյոնովնա...

ԱԳՐԻՊԻՆԱ

Յես յերեսուն տարի Ագրիպինա Սեմյոնովնա յեմ:

ՍԵՆԵՉԿԱ

Իսկ ի՞նչպես եյին ձեզ կոչում առաջին տասը տարում,

ԱԳՐԻՊԻՆԱ

Դուք ուզում եք ասել, վոր յես քառասուն տարեկան եմ և պառավել եմ:

ՍԵՆԵՉԿԱ

Չեյի ասի պառավել եք, բայց հունար չեք ունեցել պահպանվելու:

ԱԳՐԻՊԻՆԱ

Ախ, այդպե՞ս: Ապա ել ինչո՞ւ համար եյիք գալիս այստեղ:

ՍԵՆԵՉԿԱ

Յես գործով եյի գալիս: Դուք ինձ համար վոսկի եյիք ճարում առաքնապակների համար, իսկ մեր մեջ մտերմություն չի յեղել:

ԱԳՐԻՊԻՆԱ

Ապա ել ի՞նչ եք տածում սրանից հետո դեպի ինձ:

Կալիս է:

ՍԵՆԵՉԿԱ

Տվյալ մոմենտում — կարեկցություն:

ԱԳՐԻՊԻՆԱ

Կնշանակի՝ բազմոցի վրա կողքիս նստում եյիք կարեկցությունից: Մնում եյիք թեյ խմելու նո՞ւյնպես կարեկցությունից: Սրանից հետո, դուք վոչ թե խղճալ, այլ պետք է սիրեք ինձ:

ՍԵՆԵՉԿԱ

Տրամաբանորեն, իհարկե, պետք է, բայց ֆիզիքապես չեմ կարող: Ագրիպինա Սեմյոնովնա, տվյալ այս մթնոլորտում յես կարող եմ իմանալ մինչ մակարդակը: Մի քանի որ առաջ պաշտոնավայրում մեզ առաջար-

կեցին գրել մեր կենսագրությունները։ Նստեցի։ Թուղթ կա, գրչածայր կա, բայց կենսագրություն չկա։ Յերկու ժամ նստեցի — չկա ու չկա կենսագրություն։ Սկսեցի վերհիշել և ծառացավ իմ առաջ իմ կյանքն ավելի գորշ, քան հրշեջի ուսերին բաճկոնակ մի։ Աչք գցեցի, թե ինչ են գրում հարևաններս. բոլորն ել մի ինչ վոր բան ունեն։ Մեկը ութ շունչ ունի խնամակալության տակ, մյուսը յերկու անգամ դատի տակ դատվածություն ե կրել։ Միմիայն յես եյի վորպես կյանքի տոնահանդիսին զանցառված։ Տվեք ինձ անձնական բախտավորություն գեթ մասամբ։ Չեմ ցանկանում այլևս գոյություն ունենալ առանց կենսագրության։ Յեվ յերեկ նա սկսվեց։ Պատրաստվեցեք, մեր փոխհարաբերությունները սպառված են։

ԱԳՐԻՊԻՆԱ

Դուք պաղե՞լ եք ինձնից։

ՍԵՆԵԶԿԱ

Այո, պաղել եմ։ Ինձ հետ պատահել է մի լիրիկական, հովվերգական պատահմունք, թե ինչպիսին, իրավամբ մի հարցնեք, պատահմամբ ձեզ անհաճելի կլինի։

ԱԳՐԻՊԻՆԱ

Լիրիկական պատահմունք ուրիշի՞ հետ, վոչ. կներեք, յես կհարցաքննեմ։ Յե՞ր, վո՞րտեղ և ո՞ւմ հետ է այդ պատահմունքը։

ՍԵՆԵԶԿԱ

Յես հանդիպել եմ ժամանակակից մի աղջկա։ Պորնոգրաֆիկ դեմք մի՛ շինեք։ Մեր մեջ վոչ մի ռեալ փաստեր, — զուտ վերացական զրոսանքներ անտառում։

ԱԳՐԻՊԻՆԱ

Անտառո՞ւմ։ Ո՞... Ո՞վ է նա։

ՍԵՆԵԶԿԱ

Նրա անունը յես չեմ տա։

ԱԳՐԻՊԻՆԱ

Յես անունը չեմ հարցնում, ինձ աղգանունն է պետք։ Ո՞վ է նա։

ՍԵՆԵԶԿԱ (Հպարտ)

Դերասանուհի։

ԱԳՐԻՊԻՆԱ

Դերասանուհի՞։ Եդ թատրոնից, հա։ Ա՛խ, դերասանուհի յե, այդ դեպքում կործանվեցեք, բարով-խերով։ Դերասանուհի։ Խնդրեմ։ Սարսափում եմ, բայց չեմ խանդում։

ՍԵՆԵԶԿԱ

Այսինքն՝ ինչո՞ւ։

ԱԳՐԻՊԻՆԱ

Յեթե յես տեսնեյի, վոր ձեզ կուլ է տալիս մի կոկորդիլոս, մի՞թե յես կխանդեյի դեպի կոկորդիլոսը։ Դուցե դուք դեռևս կվերանայեք ձեր խելացնորությունը։

Գրկում է Սենեչկային մերթ մեկ, մերթ՝ մյուս կողմից։

Նայեցեք ձեր շուրջը — մի՞թե քիչ կան գրավիչ կանայք։ Ձեր շուրջը նայեցեք։

ՍԵՆԵԶԿԱ (Հեռանալով)

Մի արթնացնեք իմ մեջ մութ բնազդները։ Յես աճել ու դերաճել եմ ձեր այս բնակարանը։ Դեպի ո՞դ։

ԱԳՐԻՊԻՆԱ

Սենեչկա, մի՞թե դուք վոչինչ չեք տածում դեպի ինձ։

ՍԵՆԵԶԿԱ

Դուք մի ետապ եյիք և յես ձեր վրայով անցա։ Ընդունեցեք իմ վերջին «ցը»-ն։

ԱԳՐԻՊԻՆԱ

Սենեչկա...

Դուռը բաղխում են։

Դա հիվանդ է։ Դուք նրան կվախեցնեք։

Նստեցեք շիրմայի յետևը. յես դեռ ամբողջապես չեմ արտահայտվել։

ՍԵՆԵԶԿԱ

Ավելի լավ է յես գնամ։

ԱԳՐԻՊԻՆԱ (Գոռում է)։

Մենք պետք է հրաժեշտ տանք։

Սենեչկան ծլկում է շիրմայի յետեվը։ Դռան բաղխոցը կրկնվում է։

ԱԳՐԻՊԻՆԱ

Ո՞վ է։

Բացում է դուռը։ Գալիս է Ռայան։

ՌԱՅԱ

Յես ձեզ զանգահարել եյի... Յես յեկել եմ խորհրդակցելու...

ԱԳՐԻՊԻՆԱ

Անցեք այստեղ։

Ռայային անց է կացնում հարեվան սենյակը։ Գնում է նրա յետեվից։ Դուռը նորից են բաղխում։

Յես իսկույն...

Դեպի դուռը։

Ո՞վ է։

Բացում է։ Գալիս է Զինան։

ԶԻՆԱ

Բարև՛ ձեզ, Ագրիպինա Սեմյոնովնա... Մանյա, ներս մտիր, յեկ։ Ներս յեկ, խնդրեմ։

Մանյայի ձեռքից բռնած ներս է բերում։ Շիրմաճ ցնցվում է։

ԱԳՐԻՊԻՆԱ

Քաշվելը, սիրելիս, ուշ է։ Այդ առաջ պետք է քաշվեյիք։ Դուք յե՞րկուսդ ել ինձ մոտ եք։

ԶԻՆԱ

Ի՞նչ եք ասում — յես վոչ։ Յես պարզապես ընկերուհին եմ։

ԱԳՐԻՊԻՆԱ

Սպասեցեք, յես իսկույն կազատվեմ։

Գնում է դեպի ներսի դուռը։ Կանգ է առնում չընայելով Մանյային։

Ժամը քանի՞սն է։

ՄԱՆՅԱ (Նայելով ժամացույցին)։

Յերեքին մոտ։

ԱԳՐԻՊԻՆԱ

Ուշ եք գալիս։

ՄԱՆՅԱ

Ներեցեք, մենք չգիտեյինք։

ԱԳՐԻՊԻՆԱ

Ինչպե՞ս չե...

Գնում է դեպի ներսի դուռը։

ՄԱՆՅԱ (Շուրջը նայելով)

Մենք այստեղ մենակ ենք։ Կարծեմ յես վոչ վոքի չեմ հանդիպելու։

ԶԻՆԱ

Իհարկե՝ վոչ վոքի։ Միայն թե մի հուզվիր։

ՄԱՆՅԱ

Դու չես հասկանում, թե ինչ դժվար է ներս մտնել այստեղ... Պատերն ասես մի սաժեն հաստություն են, իսկ մարդիկ, փողոցը՝ այստեղից հարյուր վերստ։ Խուլ։ Փակված։ Նա ել յերևի սպասել է այսպիսի մի սենյակում...

ԶԻՆԱ

Ո՞վ նա։

ՄԱՆՅԱ

Իմ մի ծանոթը։

Նստում է։

Նստել է ահա այսպես... Կամ այսպես... Իսկ մի գուցե, քայլել է...

Քայլում է։

ԶԻՆԱ

Մանյա, հանգստացիր, յես լաց կլինեմ։

ՄԱՆՅԱ

Ի՞նչ զզվելի յե այստեղ... Զինա, յես գնում եմ։

ԶԻՆԱ

Ո՞ւր, ինչու։

ՄԱՆՅԱ

Ուր ուզում ես, միայն թե չմնամ այստեղ։

Գալիս է Ռայան։ Նա ճնշված է։ Նստում է յեվ գլուխն առնում ձեռքերի մեջ։ Մանյան հետագա տեսարանի ընթացքում հանախ նայում է նրան։

ՄԱՆՅԱ

Չեմ հասկանում այն կանանց, վորոնք գալիս են այստեղ։ Ի՞նչն է մղում նրանց։ Ծայրաստիճան կամքիք։ Թեթևամտություն։ Վախկոտություն։

ԶԻՆԱ

Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում։ Չի կարելի, չե՞, հիմա յերեխա ունենալ։

ՄԱՆՅԱ

Իսկ յե՞րբ է կարելի։ Յերբ վոր յես ձեռք կբերեմ բնակարան, կահավորում, դայակնե՞ր։ Այո։ Քառասուն տարեկան հասակում։ Այն ժամանակ կահ-կարասիքի հետ միասին կարելի յե յերեխանե՞ր եվ ունենալ։ Այո։ Հասգիստ՝ բուրժուական և գարշելի։ Վախենալ յերեխա ունենալուց, կնշանակի չհավատալ ապագային, չհավատալ մեր կյանքին...

Ռայան բարձրացնում է գլուխը։

Փչացնել ամենաթանկագինը, ամենասիրելին, ամենաբերկրալին... և գուցե մինչև կյանքի վերջը հիշել այս գարշելի նկուղը... Յես հեռանում եմ...

Ռայան ցատկում յեվ գրկում է Մանյային։

ՌԱՅԱ

Ճիշտ է, ճիշտ է... Բոլորը ճիշտ է։

ԶԻՆԱ

Նոր գործ է սկսվում։

ՌԱՅԱ

Յես ինքս եվ հաճախ այդպես եմ մտածել... Մինչև վերջին վարկյանը չեյի կարողանում վճռել... և հանկարծ դուք... այնքան ճիշտ... այնքան լավ ասացիք այդ... Յես եվ այլևս այստեղ չեմ գա։

ՄԱՆՅԱ (Շփոթված)

Սպասեցեք... Յես բնավ չեյի ուզում, վոր իմ խոսքերն այդքան խորն աղդեյին։ Գուցե իմ և ձեր պայմանները, հանգամանքները տարբեր են։

ՌԱՅԱ

Դուք ամուսնացած եք։

ՄԱՆՅԱ

Վ...վոչ։

ՌԱՅԱ

Յես եվ վոչ։

ՄԱՆՅԱ

Սիրելիս, այնուհանդերձ իմ դրությունն ավելի թեթև է։

ՌԱՅԱ

Ինչով։

ՄԱՆՅԱ

Թեթև է, հավատացեք խոսքիս։ Դուք իվուր եյիք ինձ լսում։

ՌԱՅԱ

Վոչ, վոչ։ Դուք սքանչելի եյիք խոսում։ Յես վճռեցի։ Գնանք միասին։

ԶԻՆԱ

Իսկ քո ծնողնե՞ր։ Այս ի՞նչ ստացվեց։ Մտածեցի՞նք։

Վորոշեցինք և հանկարծ փոշմանեցինք։ Վոչ, յես չեմ գնա։

ՄԱՆՅԱ

Դե, մնա։

ԶԻՆԱ

Յես մնալու վոչ մի կարիք չունեմ։ Այդ նույնիսկ խոզություն է։

ՌԱՅԱ (Մանյային)

Կարելի՞ յե ձեզ հետ մտերմանալ։

ԶԻՆԱ

Հետո կմտերմանաք։ Յեթե փոշմանել եք, ծլկվեք շուտ։

Ագրիպինա Սեմյոնովնան բացում է դուռը։

Ո՛յ...

ԱԳՐԻՊԻՆԱ

Անցեք այստեղ։

ՄԱՆՅԱ

Ներեցեք, յես փոշմանել եմ։

ՌԱՅԱ

Ներեցեք, յես էլ։ Դուք մի՛ նեղանաք։

ԱԳՐԻՊԻՆԱ

Կնշանակի՝ յերկուսդ էլ փոշմանե՞լ եք։

Մանյան յեվ Ռայան հեռանում են։

Զինային

Իսկ դո՞ւք։

ԶԻՆԱ

Իսկ յես ըսկի չեմ էլ մտածել։ Յես ախը ընկերուհին եմ։

ԱԳՐԻՊԻՆԱ

Թույլ տվեք...

ԶԻՆԱ

Ցտեսություն, տատիկ...

Վազում է դուրս։

ԱԳՐԻՊԻՆԱ

Սպասեցեք... քաղաքացուհիներ... Ապա էլ ինչո՞ւ համար եյին յեկել նրանք։ Պայուսակիս մեջ ամեն ինչ տեղն է... Իսկ յեթե հանկարծ նրանք վորևե ֆնասակար բրիգադից եյին... Դեռ կմատնեն էլ... Սենյա... Սենեչկա... Նրանք սպառնական վոչինչ չասացին։ Սենեչկա, դուք քնե՞լ եք։

Շիրմայի յետևից դուրս է գալիս Սենեչկան։

Ի՞նչ է պատահել ձեզ։

Սենեչկան վշտալից, շփոթված, անց ու դարձ է անում սենյակում, դեմ է ընկնում աթոռներին ձեռք է մեկնում ասես դռներին։

Տեր աստված, չլինի՞ թե կուրացել եք։

ՍԵՆԵՉԿԱ

Վոչ թե կուրացել, այլ բացվել են աչքերս։ Ինքս տեսա... Նա... Այստեղ... հենց այս տեղում — նա յեր։

ԱԳՐԻՊԻՆԱ

Ո՞վ նա։ Չլինի՞ թե ձեր դերասանուհին։ Անկեղծորեն շնորհավորում եմ։ Թույլ տվեք, այստեղ նրանք յերեք հոգի եյին... վո՞ւրն եր, վո՞ւրը։

ՍԵՆԵՉԿԱ (Հեծկլտալով)

Կապույտ շորով։

ԱԳՐԻՊԻՆԱ

Այնքան էլ վատը չեր։

ՍԵՆԵՉԿԱ

Հանկարծ իմ հինգ զգայարանների խաբանք... Ե՛յ, Սեմյո՛ն, արթնացիր։ Վոչ... Յեկավ, փոշմանեց... գնաց։

ԱԳՐԻՊԻՆԱ

Այո, գնաց։ Ներեցեք... Դուք ինչի՞ համար եք տանջվում։ Գուցե նրա համար, վոր նա փոշմանել է։ Դե,

իհարկե... Թույլ տվեք, թույլ տվեք... Ինչո՞ւ նա հատկապես ինձ է դիմել։ Ո՞վ է ցույց տվել։ Ցեվ սրանից հետո, ձեր մեջ միայն զբոսանք եր յեղել անտառում։ Հեռու յեք գնացել։ Մի՞թե չամաչեցիք իմ հասցեն տվիք նրան։ Իմ հասցեն՝ նրան։ Նրան։ Հասցես։ Ի՛մ։

ՍԵՆԵԶԿԱ (Ընդոբինակելով)

«Հասցե՞ս... Ի՛մ», «Ո՛յ»... Ցեվ զոհ եմ... ամեն կողմից շրջապատված զոհ եմ... Իսկ դուք անզգա հիմար եք։

ԱԳՐԻՊԻՆԱ

Դե, փառք աստծո, այդ դեպքում ամեն ինչ լավ է։

ՍԵՆԵԶԿԱ

Կենսագրությունս...

ԱԳՐԻՊԻՆԱ

Ի՞նչ։

ՍԵՆԵԶԿԱ

Իմ կենսագրությունը սկսվեց կոպիտ վրիպակով։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Առաջին պատկերի կահավորումը՝ ամառանոցում Մանյան յեվ Կոստյան դիտում են սեղանի վրայի նախագիծը։ Նրանց ձեռքերն ու գլուխները հետզհետե մոտենում են։

ԿՈՍՏՅԱ

Մանյա, տեսնում ես, այստեղից ել կտեսնենք ճանապարհը... Կայարանից, այսպես, ձեր ամառանոցի մոտով, ահա այսպես, անտառի միջով... Այստեղ կամուրջ է լինելու, հետո՝ այսպես, գյուղի միջով, ուղղակի մինչև սովխոզը։

ՄԱՆՅԱ

Ինձ այդ Ֆեոդոր Ֆեոդորովիչը պատմել է։

ԿՈՍՏՅԱ

Նորից։

ՄԱՆՅԱ

Ի՞նչ նորից։

ԿՈՍՏՅԱ

Վոչ, վոչ, ներեցեք։ Բացարձակ ազատություն, կատարյալ վստահություն, վոչ մի քաղաքենիություն։ Մենք պետք է վերացնենք նախապաշարումները։ Բայց ինչո՞ւ յես թույլ տալիս, վոր նա ձեռքդ համբուրի... Չե՞ վոր դա...

ՄԱՆՅԱ

Դա ի՞նչ է...

ԿՈՍՏՅԱ

Դա հակաառողջապահական է։ Գարշելի յե ու ֆեոդալական։ Մանյա, յես չգիտեմ, թե ինչի յենք մենք սպասում։

Նստում է կողքին յեվ գրկում։ Գալիս է Յակովը։

ՅԱԿՈՎ

Թուլյ տվեք անցնել։

ՄԱՆՅԱ

Յուսուֆ Յաշա, յեկեք այստեղ։

ՅԱԿՈՎ

Չեմ գա։ Դուք գրկախառնվում եք, իսկ ինձ ի՞նչ։ Յես ձեզ մոտ քաշվում եմ։ Միևնույն է՝ վոնց վոր չհարբածը հարբածների մեջ։

ՄԱՆՅԱ

Յաշա, խորհուրդ տվեք։ Ամուսնանամ սրա հետ։

ՅԱԿՈՎ

Խնդրում եմ, ամուսնացեք։ Իմ անունից եմ խնդրում։ Նա ուղղակի զահլաս տարել է։ Ամուսնացեք նրա հետ — բախտավորացրեք ինձ։

ԿՈՍՏՅԱ

Յես առաջարկում եմ այսոր և եթ տեղեկացնել ծնողներիդ և վաղը արձանագրվել։

ՅԱԿՈՎ

Եղպես չի։ Ավելի լավ է, եսոր արձանագրվել իսկ վաղը տեղեկացնել։ Ավելի՞-ճիշտ կլինի։ Իսկ հարսանիքը կանենք մեզ մոտ՝ Կովկասում։ Ընդամենը յերեք հազար կիլոմետր է։ Ենտեղ ֆայտոն կբռնենք։ Ձիերի բաշերին հորտենդիա... պոչերին հորտենդիա... Փեսացուի մազերը կխուճուճացնենք։ Վոչխար կդառնաս, բոլորովին վոչխար։ Ասենք քեզ կարելի յե և չխուճուճացնել։ Կեֆալ ձուկ կտապակենք։ Կեֆալ կերե՞լ եք։ Վո՞չ։ Ուրեմն, դուք ձեր ամբողջ կյանքում վոչինչ չեք կերել։ Գինի կվերցնենք, շատ չե, մի վեդրո կարմիր, մի քիչ ել՝ մի վեդրո ել սպիտակ։ Հետո նորապսակներին կուղեկցենք։ Գիշերով։ Ջահերով կգնանք։ Յերաժշտությամբ։ Մեծ նվագախումբ կսարքենք։ Զուռնա, դհոլ, սրինգ... Շուրջդ կնայես, — ծովը կապույտ, լեռները կանաչ, բնությունը գեղեցիկ... Միայն նա չի յերևում, վորովհետև գիշեր է։ Վոչ մի բան չի յերևում։ Միայն շներն են հաչում և սիրտդ ել ուրախ է։ Գնանք Կովկաս։ Գնա, տոմսեր վերցրու։

ՄԱՆՅԱ

Յակով, դուք լավ մարդ եք։

ՅԱԿՈՎ

Կեսն ել սուտ է, ա՛յ։ Շատ լավը եմ։

ՄԱՆՅԱ

Կոստյա, կանչի՛ր հորս։ Կհայհոյի — ուշադրություն չդարձնես։

ԿՈՍՏՅԱ (Մոտենում է լուսամուտին)։

Սերգեյ Պետրովիչ... Հուզվում եմ, հասկանո՞ւմ ես։

ՅԱԿՈՎ

Դու հուզվում ես, դա հասկանում եմ, բայց յես ինչի՞ յեմ հուզվում, այս չեմ հասկանում։

Ամառանոցից դուրս է գալիս Սերգեյ Պետրովիչը։ Մյուս կողմից յերևում է Սենեչկան։ Նա ծայրաստիճան հուզված է յեվ գուցե բոլորովին զգաստ չէ։ Ձեռքին մի շիշ գինի։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՞վ եր ինձ կանչում։

ՍԵՆԵՉԿԱ

Յես եյի կանչում։

Ուժգնորեն շիշը դնում է սեղանին։

Բոլորին եմ կանչում։ Ձվարճացեք

Սեմյոն Պերչատկինի քաղաքացիական հոգեհանգստին։ Նա թռել է աերոպլանից... թռել է գլխիվայր, բայց պարաշուտը

Ցույց տալով Մանյային։

գեղագեղ, բայց խաբուսիկ պարաշուտը փտած դուրս յեկավ... փտած... և ջարդ ու փշուր յեղավ Սենեչկան մանրակրկիտ կտորտանքով։ Ձեր առաջ կանգնած է հանգուցյալ մի քաջակորով։

ՅԱԿՈՎ

Դա շոգից է։ Ծածկեցեք գլուխդ, ընկեր։

ՍԵՆԵԶԿԱ

Լռիր, գերյալդ Կովկասի։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ամոթ չլինի հարցնելը, ինչո՞ւ յեք նորից այստեղ յեկել։

ՍԵՆԵԶԿԱ

Նրան չեք քշում, ո՞ւմ պիտի քշեյիք։ Ուշ եք քշում։ Լավ չեք դարաուլ քաշել, ընկեր Ղարաուլով։

ՄԱՆՅԱ

Սենեչկա, ի՞նչ է պատահել ձեզ։ Վո՞ւրտեղ եյիք։

ՍԵՆԵԶԿԱ

Դո՞ւք վորտեղ եյիք, դո՞ւք։ Յերեկ, «յերեքին մոտ», այո, այո, «յերեքին մոտ»։ Մարյա Սերգեևնա, յես ձեզ սիրում եյի առանց անհրեսության, քաղաքավարի, ինչպես Դանտեն իր Պետրարկին։ Յեվ լսեցի իմ այս ականջներով. — «Սենեչկա, դուք ինձ դուր եք գալիս»... Ինչո՞ւ։ Մնացեք բարով... և յեթե դուք աղջիկ բերեք, ստել չսովորեցնեք նրան։

Ընդհանուր շփոթմունք։ Յակովն ու Կոտյան բռնում են Սենեչկայի ուսերից։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ի՞նչ աղջիկ։

ՄԱՆՅԱ

Հիմարություն է։ Յեվ դուք հավատացի՞ք։ Վոչ մի տեղ ել չեմ յեղել յերեկ։

Գալիս է Զինան։

ՍԵՆԵԶԿԱ

Ձի՞ք յեղել։

Զինային։

Բաղաքացուհի, մոտեցեք։ Պատասխանեցեք, վոնց վոր նախկին ահեղ դատաստանի առաջ։ Յերեկ դուք գնացի՞լ եք Ագրիպինա Սեմյոնովնայի մոտ։ Յես բոլորը գիտեմ։ Յուրաքանչյուր բառը կարող եմ կրկնել։

ԶԻՆԱ

Մանյա, սիրելիս, այս ի՞նչ բան է։ Աղնիվ խոսք՝ յես վոչ վոքի չեմ պատմել։

Կոտյան յեվ Յակովը հեռանում են Սենեչկայից։

ՍԵՆԵԶԿԱ

Հ՞ը, լինելու՞ յի ծծկերը, թե՞ չի լինելու։

Զինան լալիս է։

Ի՞նչ է, սուտ եմ ասել։ Պապաշա, դուք ինձ վիրավորել եք, բայց պարզվում է, վոր յես չեմ Կարուզոն, Կարուզոն ուրիշն է դուրս յեկել։

Գնում է։

ԶԻՆԱ

Մանյա, վորտեղի՞ց է նա իմացել։ Յես մեղավոր չեմ։ Ո՛յ...

Մանյան հրում է նրան։ Զինան փախչում է։ Կարուլովը քարացած կանգնած է։

ՄԱՆՅԱ (Մոտ վազելով հորը)

Հայրիկ, այդ ճիշտ չէ, յես բոլորը կպատմեմ քեզ, Յես իսկապես յեղել եմ այնտեղ, բայց այդ միայն ծիծաղելի յե...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ծիծաղելի՞ յե։ Քեզ համար ծիծաղելի յե... Հեռու... Հեռու։

Ցերերալով գնում է դեպի ամառանոցը։

ՅԱԿՈՎ

Հինգ բոպե առաջ ամեն ինչ լավ եր և հանկարծ ամեն ինչ փչացավ։ Կոստյա, յես քո ընկերն եմ, հասկանում ես։ Բայց յես ինքս էլ բան չեմ հասկանում։

Գնում է։ Մանյան տերրասին հենված կանգնած է։ Կոստյան դանդաղ մոտենում է յեվ նայում Մանյային, կարծես չի նանաչում։

ՄԱՆՅԱ

Յես չեյի կարծում, վոր հորս վրա այդչափ ուժեղ կազդեր այդ։

ԿՈՍՏՅԱ

Կնշանակի՝ չեմ հավատում... Չե՞ վոր նա քո մասին ստոր բաներ ասաց։

ՄԱՆՅԱ

Ինչու՞ յե ստոր։

ԿՈՍՏՅԱ

Ուրեմն ճի՞շտ է։

ՄԱՆՅԱ

Ցեթե անգամ ճիշտ լինի։ Մի՞թե դրանից վորևե բան է փոխվում։ Մենք յերկուսս էլ նոր մարդիկ ենք։

ԿՈՍՏՅԱ

Յերկուսս էլ։ Վոչ, յես վոչ մի ապականություն չեմ արել։ Իսկ դու... Չե՞ վոր դու ասում եյիր, վոր ինձ... Ինձ համար, հանուն ինձ...

ՄԱՆՅԱ

Այո, յես քեզ սիրում եմ։

ԿՈՍՏՅԱ

Յեվ սրանից հետո... Վոչ, վոչ թե հետո, այլ սրանից առաջ, մի ինչ վոր անզգամի, բանդիտի հետ... Ա-ա-ա...

ՄԱՆՅԱ

Իսկ ինչով է նա անզգամ։

ԿՈՍՏՅԱ

Նրանով, վոր նա սրիկա յե... Ո՞վ է նա։

ՄԱՆՅԱ

Դու նրա ծագումն ես ուզում իմանալ, թե՞ արհեստը։

ԿՈՍՏՅԱ

Յես սպանել եմ ուզում նրան։

ՄԱՆՅԱ

Մի՞թե յես սխալվել եմ քո վերաբերմամբ։

ԿՈՍՏՅԱ

Դու իմ վերաբերմամբ. նա դեռ համարձակվում է սխալվել իմ վերաբերմամբ, անպատկառ կին...

Փախչում է գլուխը բռնած։ Կողքից գալիս է Յակովը, բռնում է նրան յեվ տանում։

ՅԱԿՈՎ

Մի քիչ հուզվում է։

Ցույց տալով Կոստյայի շարժումը։

Վոչինչ նա արդեն հավաքեց իրեն։

ՄԱՆՅԱ (Կանչում է)

Կոստյա, Կոստյա.

Վոտքը խփում է գետնին։

Ա՛խ, այդպես։ Շատ լավ։

Գոռում է նրա յետեվից։

Նոր մարդ։

Յերրորդ գիլդիայի ուսանող։

Վազում է տուն։ Այստեղից նույն բոպեյին գալիս է Կարաուլովը, գլուխը յերեսսրբիչով փաթաթած։ Դառնում յեվ խոսում է Մանյայի հետ դեպի տունը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Տեսնել չեմ ուզում քեզ, անամոթ աղջիկ։ Ախր յես պատահմամբ միայն կաթվածահար չեղա։ Բայց մայրդ

անպայման կաթվածահար կլինի, աղնիվ խոսք՝ կլինի։ Դե, ինչպե՞ս պետք է ասեմ նրան։

Դառնում յեվ տեսնում է վերադարձող Ոյլգա Պավլովնային՝ պայուսակը ձեռքին։

Ո՛յ...

ՈՅԼԳԱ

Ինչո՞ւ յես գլուխդ փաթաթել, մի՞թե այսոր շոգ է։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Այո, շոգ եր։

ՈՅԼԳԱ

Իսկ յես ինչ վոր չեմ նկատել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Հավբերիր, կնկատես։ Դու նստիր։

Ոյլգա Պավլովնան առանց նստելու, պայուսակից հանում է յեվ սեղանին է դնում գնումները։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Կողմ)

Պետք է հեռվից սկսել։ Ո՛յլա։ Հիշո՞ւմ ես, մի այսպիսի յերկիր է յեղել՝ Սպարտա...

ՈՅԼԳԱ

Մածունն կուզե՞ս։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յես շատ կարևոր բան եմ ասում քեզ։ Յեղել է մի այսպիսի յերկիր՝ Սպարտա։

ՈՅԼԳԱ

Դե յեղել է, թող լինի։ Ասված նրա հետ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ականջ դիր։ Հետո հետաքրքիր է լինելու։ Յեվ այս Սպարտայում յեղել է Տարպեյան ժայռը։ Յեվ այդ ժայռից գլորում եյին յերիտասարդներին։

ՈՅԼԳԱ

Խուլիգանների՞ն յերևի, հա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դե, վոչ։ Ընդհանրապես բոլոր յերեխաներին։

ՈՅԼԳԱ

Ա՛յ թե խստություններ են յեղել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յեվ այդ անում եյին նրա համար, վորպեսզի նրանք կարողանան դիմանալ բոլոր անախորժություններին։ Կգլորեն տղային մի 2 — 3 անգամ — իսկ նա դուրս կգա ժայռի տակից, մարդ դարձած։ Հասկանում ես. — ընտելացնում եյին դնցումներին։ Դրա փոխարեն, նրանք հետո ամեն ինչի դիմանում եյին։ Ասա, որինակի համար, այդպիսի մի սպարտացուն — «Ձեր աղջիկը, Մանյան, կունենա... մի անախորժություն... իսկ նա ըսկի աչք եվ չի թարթի. — «Խնդրեմ, թեկուզ յերկուսը»։

ՈՅԼԳԱ

Նո՛ւ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յեվ դու պետք է ընդորինակես այդ սպարտացիներին։

ՈՅԼԳԱ

Ի՞նչ է, յես եվ սարից թռչեմ, հա։ Հիմարանում ես դու ամառը։ Մոտեցիր բուն գործին։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՛խ, մոտենում եմ եդ մոտին. — վերցնենք Ֆրանսիան։ Թվում է թե ծաղկող յերկիր է։ Փարիզ, չորս բոլորը Բուլոնյան անտառներ, Մոպասաններ... Իսկ նրանց մոտ ճեղքվածք կա... Յերեխաները քիչ են։

ՈՅԼԳԱ

Յեվ լավ է։ Գլխացավանք քիչ կլինի։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դե, ախր ազգն է կործանվում։ Դու մտածիր սկզբունքի մասին։

ՈՅԼԳԱ

Յես սկզբունքների համար ժամանակ չունեմ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ախր թշվառ ֆրանսուհիները այդ... Վերին արարածին մաղթանք են անում, վորպեսզի նա յերեխաներ պարգևի նրանց։ Իսկ մենք չենք գնահատում։

ՈՅԼԳԱ

Ի՞նչը չենք գնահատում։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յերեխաներին, յերեխաներին։ Յես թեև ֆրանսիացի չեմ, բայց ուզում եմ, վոր մենք մի զավակ ունենանք։

ՈՅԼԳԱ

Մենք։ Հիմարանում ես դու ամառը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դե չե։ Ա՛յ յեթե Մանյան մեզ մի թոռնիկ պարգևի։

ՈՅԼԳԱ

Յերբ վոր դեռ կամուսնանա։ Դրան յերկար պիտի սպասենք։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յերկար չե, են աստվածը յերկար չե։ Դու նստիր։

ՈՅԼԳԱ

Ուզող կա։ Ո՞վ ե։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Զեյի ասի, վոր ուզող կա, այլ դրա նման մի բան ե։ Դու նստիր։ Պատրաստվիր մի մեծ... ուրախություն։

Գլխից հանում ե յերեսսրբիչը։

Նա ինքն ասաց։ Մի խոսքով... Մանյան յերեխա յե ունենալու։

Ոյլգա Պավլովնայի վոտները ծալվում են, նա նստում ե նստարանին։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յես ասացի՝ նստիր, չե՞։

Յերեսսրբիչը դնում ե Ոյլգայի գլխին։

ՈՅԼԳԱ

Մանյան... Ի՞նչ յերեխա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դե, փոքրիկ և սովորական յերեխա։

ՈՅԼԳԱ

Ո՞ւմից ե յերեխան։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մանրամասնությունները չգիտեմ։

Ոյլգա Պավլովնան գլուխը կախում ե։

Վոչինչ, վոչինչ, ոդ չնչիր։ Հիշիր սպարտացիներին։

ՈՅԼԳԱ

Մանյա։ Վո՞րտեղ ե նա... վոտքերս չեն գնում։ Մանյա։

Տնից դուրս ե գալիս Մանյան։ Յերկու կինն ել վազում են իրար դեմ յել գրկվում։ Ոյլգա Պավլովնան լալիս ե։

Մանյուշա, թանկագինս։

ՄԱՆՅԱ

Մայրիկ, յես չգիտեյի, վոր դու յեկել ես։ Դու լսեցիր։ Դա չե՞ վոր հիմար բան ե, կուրյոզ ե... Դե, մի՞թե կարելի յե այդպես հուզվել դատարկ բաների համար։

ՈՅԼԳԱ (Հեռանալով)

Դատարկ բաների համա՞ր։ Դա դատա՞րկ բաներ են։ Մեր վոտքերը թուլացել են, իսկ սա... սա խոսում, ժպտում ե։ Որինավոր աղջիկը հիմա վշտից կմաշվեր, կվազեր ջուրն ընկնելու, միայն թե չվշտացներ ծնողներին։ Ախր դու փորձանքի մեջ ես, փորձանքի։

ՄԱՆՅԱ

Վոչ մի փորձանք չկա և չի յեղել։

ՈՅԼԳԱ

Զհամարձակվես անամոթ բաներ խոսել։

ՄԱՆՅԱ

Ա՜խ, այդպես։ Այլևս վոչինչ չեք լսի ինձնից։

Գնում ե դեպի ամառանոցը։

ՈՅԼԳԱ (Կարաուլովին)

Յեվ դու համբերում ես։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Գնում է աղջկա յետեվից)

Մաշկա, մի հանդգնիր...

ՄԱՆՅԱ (Դառնալով)

Ի-ի-ինչ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Մոտենալով Ոյլգա Պավլովնային)

Վախենում եմ յես նրանից։

Մանյան գնաց։ Կարաուլովն ու Ոյլգա Պավլովնան նստում են իրար կողքի։

ՈՅԼԳԱ

Ի՞նչ է կատարվում։ Ասված չկա։ Ամոթ չկա։ Մանյան յերեխա պիտի ունենա։ Յեվ այդ բոլորը բոյլշևիկներն արին։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Նու, դուցե և անկուսակցական է։

ՈՅԼԳԱ

Բայց ո՞վ է։ Ո՞վ։ Լավ է, յեթե այդ սրիկան որինավոր մարդ է, թե չե՝ փորձանք է։ Մանյա, աղջիկս... Մի՞թե մենք այդ ենք սովորեցրել նրան։ Յեվ հանկարծ։ Անհասկանալի յերևույթ է։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ժամանակին գիտությունը բոլորը կբացատրի։

ՈՅԼԳԱ

Ժամանակին։ Իսկ հիմա ի՞նչ անել։

Յերկուսն էլ հեկեկում են։ Գալիս է Պրիբելյովը։ Ծերունիները աշխատում են հանգիստ ձեվանալ։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Բարև՛ ձեզ։ Դուք ինչ վոր բանից վրդովված եք։

ՈՅԼԳԱ

Վոչ, ինչից... պետք է վրդովվենք... ընդհակառակը

Հեծկլտում է։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մեզ կատարելապես վոչինչ չի պատահել։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ներկա ժամանակներում ընդունված է ծնողներին հաշվի չառնել...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Այո՛, ուրիշ ընտանիքներում այդ լինում է...

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Յես այդպիսի հարցերում հին հայացքների կողմնակից եմ և վճռել եմ դիմել ուղղակի ծնողներին։ Յես ուզում եմ խոսել ձեր աղջկա մասին։

Ծերունիները իրար են նայում։

Մենք ծանոթ ենք նրա հետ։ Նույնիսկ շատ մոտ ենք ծանոթ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Հուսադրվելով)

Այդպես, այդպես, այդպես...

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Յես սիրում եմ նրան։ Բայց մեր մեջ ինչ վոր տարբերինակ փոխհարաբերություններ են ստեղծվել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՞խ... Մենք արդեն չենք բարկանում...

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ել ի՞նչ կա բարկանալու։ Յես պատրաստ եմ ամուսնանալ, թեկուզ վաղը։

ՈՅԼԳԱ

Այնուամենայնիվ ասված կա։ Դուք ազնիվ մարդ եք։ Սերյոժա...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՛լենկա...

Ծերունիները գրկախառնվում են։

ՈՅԼԳԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ, չեք կարող յերևակայել, թե վորչափ հանդստացրիք մեզ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Նա ինչ Ֆեոդոր Ֆեոդորովիչ է... Ֆեդյա... Ֆեդյուշա...

Գրկում է Պրիբելյովին:

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Բայց Մարիա Սերգեևնան...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մանյան, Մանյան...

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Մանյան ըստ յերևույթին որիգինալ հայացք ունի դեպի ամուսնությունը: Չգիտեմ ինչու, նա կապրիզներ է անում:

ՈՅԼԳԱ

Դե, նրա վիճակում այդ հասկանալի յե:

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Հետևաբար դուք ինձ կոգնե՞ք:

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դեռ ոգնություն ել է խնդրում: Կոկետ-կոկետ տղամարդ է... Ա՛խ, Ֆեդյա, Ֆեդյա... Գինի յեր հարկավոր: Ա՛յ, շատ տեղին է:

Լցնում է բոլորին այն 22ից, վորը թողել էր Սենեկան, Պրիբելյովին:

Մանյայի, քո և... նրա կենացը:

Խմում է:

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ներեցեք, ո՞ւմ — նրա:

ՈՅԼԳԱ

Ուշացել եք խորամանկություն անել, ուշացել եք:

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Այդ լավ չե, Ֆեդյա: Դու կարող եյիր մեզ առաջ ասել, թե մենք այսոր ոտարներից իմացանք: Թռախկ... Մանյան յերեխա յե ունենալու:

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ի՞նչ յերեխա:

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Այդ է, վոր կա: Քիչ մնաց սա անդամալույծ լիներ:

Պրիբելյովը նստում է:

Այո, հենց այդպես ել նստեց:

Պրիբելյովը յեղնում է: Կարաուլովը գինի յե լցնում Պրիբելյովի ձեռքի բաժակի մեջ:

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ո՞ւմ զավակն է:

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Քո... ձեր...

Պրիբելյովն ու Կարաուլովը հեռանում են իրարից: Կարաուլովը գինին լցնում է հատակին:

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Դուք ցնդե՞լ եք:

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Հիմա կցնդեմ:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Նույն կահավորումը։ Կարաուլոմների ամառանոցի առջև

Գալիս է Յակովը։ Մեկ-յերկու շրջան է անում հրապարակի վրայով։ Նրա յետեվից, ընկերոջ՛քեվը բռնած՝ Կոստյան։

ԿՈՍՏՅԱ

Յակով, լսիր ինձ մինչև վերջ...

ՅԱԿՈՎ

Յես արդեն յերկու անգամ լսեցի մինչև վերջը, բայց վերջից հետո դու նորից սկսում ես սկզբից։ Խեղդեցիր ինձ հոգեբանությամբ։

ԿՈՍՏՅԱ

Յակով, իմ բոլոր ջղերը շուռ ու մուռ են յեկել։ Գուցե յես մի վոտքով արդեն խելագարանոցումն եմ... Յեվ չկա մեկը, վորի հետ բաժանեմ վիշտս։

ՅԱԿՈՎ (Նստում է)

Լավ, բաժանիր։ Տուր ինձ իմ փայս։

ԿՈՍՏՅԱ

Լսիր։ Ախր, չե՞ վոր Մանյան հանդիպել է այդ, նու... ինչ վոր մի քաղաքացու հետ, յերբ վոր յես նրա հետ ըսկի ծանոթ ել չեմ յեղել։ Այդպե՞ս է։ Լավ։

ՅԱԿՈՎ

Առայժմ լավ բան քիչ է։

ԿՈՍՏՅԱ

Սպասիր, դու անալիզի յենթարկիր։ Հետո, չե՞ վոր նա ինձ, ինձ է սիրել... դու գիտես չե՞, ինքդ ես տեսել։ Ել ի՞նչ է փոխվել։ Վոչինչ, բառացիորեն վոչինչ։ Խանդել և այն ել դեպի անցյալը, դա չե՞ վոր ստոր է և ֆեոդալական։ Յակով, դու հասկացիր, չե՞ վոր նրա այդ սերը, չէ, ի՞նչ սեր — այլ այնպես, գրավվելը... և վոչ ել գրավվելը, այլ բոպեյական մառախուղը, դա չե՞ վոր վերջացել է... Ճի՞շտ է։ Դա անցյալ է։ Համաձայն ես։

ՅԱԿՈՎ

Համաձայն չեմ։ Առաջին՝ այդ անցյալը, այսպես ասած, հղի յե հետևանքներով։

ԿՈՍՏՅԱ

Հղի՞ յե... Ա՜... ա... ա... հղի յե։

ՅԱԿՈՎ

Յերկրորդ՝ յես Մանյայի մասին ավելի լավ կարծիքի յեմ։ Այն տեսակ աղջիկ չե, վոր բոպեյական տարվածության համար... վոչ, այստեղ իսկական զգացմունք է յեղել։ Նա նրան...

ԿՈՍՏՅԱ

Նրան։ Ո՞ւմ նրան։ Յես կտեսնեմ նրան։ «Նրան» յես կգտնեմ, նրան, այդ «նրան»-ին... Յես այդ «նրան»-ից վրեժս կառնեմ, այո, վրեժս կառնեմ։

ՅԱԿՈՎ

Դու՞ վրեժդ կառնե՞ս։ Ասա, վո՞նց ես վրեժդ առնելու։

ԿՈՍՏՅԱ

Յես կուզենայի Մանիայի ներկայությամբ գետին գլորել նրան... և հետո յես նրան... չգիտեմ թե ինչ կանեցի։

ՅԱԿՈՎ

Ճիշտ է, չգիտես։ Բա եղպես վրեժ կլուծե՞ն։ Ինչպե՞ս

և հարկավոր։ Խանչալ վերցրու, վերցրու ասում եմ։ Դուրս քաշիր նրանից խոստովանություն, իմացիր դառն անունը։ Գտիր թշնամուդ։ Քայլ տուր նրան մի անգամ։ Յեվ յերբ վոր շուռ կդա, կրակիր նրա վրա վեց անգամ։ Տունը կրակ տուր։ Իսկ Մանյային... նրա վզից քար կապիր և գցիր Զորոխը։ Ձեզ մոտ Մոսկվա դետը։ Գնա Կովկաս — ծերունիները կսովորեցնեն։ Գնա, գնա, տոմսեր վերցրու։

ԿՈՍՏՅԱ

Քո վիճակը խիստ վատթար է։ Դու յերկու վոտքով խելագարանոցումն ես։ Հիմար։ Մանյայի վզին քար կապել։ Մանյայի։ Չե՞ վոր յես սիրում եմ նրան, հիմար։ Յես հանցավոր եմ նրա առաջ... «յերբոբդ գիլդիայի ուսանող»։ Յեվ իրոք՝ յես սեփականատեր եմ, ֆեոդալ, խղճալի ասպետ։ Յակով, չե՞ վոր մենք նոր մարդիկ ենք։

ՅԱԿՈՎ

Յերևի։ Իսկ քո մեջ նոր բան միայն գլխարկդ է։ Իսկ յերբ վոր կծնվի այդ... վոչ բոլորովին քո, ասենք, տղադ։ Նա գեղեցիկ կլինի, խելոք — այսինքն քեզ հետ վոչ մի նմանություն...

ԿՈՍՏՅԱ

Ա՜... ա... ա... դա անտանելի յե։

ՅԱԿՈՎ

Հետո, պատկերացրու՝ դու փողոցով գնում ես Մանյայի հետ, և նրան մի տղամարդ ե բարևում։ Յեվ հանկարծ դա նա՞ յե։ Նա։

ԿՈՍՏՅԱ

Յես նրան թույլ չեմ տա, վոր բարևի տղամարդկանց։ Վոչ, թող բարևի։

ՅԱԿՈՎ

Ա՛յ, դու նստած ես նստարանի վրա, իսկ մի դուցե

նույն այս նստարանի վրա Մանյան նստել ե նրա հետ։ Նրանք այստեղ համբուրվել են...

Կոստյան ցատկում, մի քար ե վերցնում յեվ ուզում ե խփել Յակովին։

Նոր մարդ, քարե դարից։

ԿՈՍՏՅԱ

Մի՛ համարձակվի ինձ վախեցնել։ Յես միևնույն ե՝ կամուսնանամ և դուրս կքշեմ իմ միջից այս գարշանքը։

ՅԱԿՈՎ

Ստում ես։ Առաջ դուրս քշիր, հետո ամուսնացիր։

Գնում ե ամառանոց։

ԿՈՍՏՅԱ

Կա՛ց, իսկ յեթե դու սիրահարվես, իսկ նա գնա ուրիշի մոտ։

ՅԱԿՈՎ

Ուրիշի մոտ։ Ինձանի՞ց։ Չի կարող պատահել։

ԿՈՍՏՅԱ

Դե, յենթադրիր՝ դու սիրեցիր և հանկարծ իմացար, վոր նա արդեն ինչ վոր մեկին սիրում ե։ Այն ժամանակ ի՞նչ։

ՅԱԿՈՎ

Այն ժամանակ կամացուկ կփաթաթեյի իմ սերը մի մաքուր թաշկինակի մեջ, վորպես թանկարժեք իր և վոչ վոքին չեյի ցույց տա։

ԿՈՍՏՅԱ

Իսկ քեզ հետ այդ պատահե՞լ ե։

ՅԱԿՈՎ

Վոչ։

Գալիս ե Պրիբելյովը, փաթաթած գծագրությունը ձեռքին, կանգ ե առնում։ Դիտում ե ուսանողներին, վորոնք չեն տեսնում իրեն։

ՊՐԻԲԼՅՈՎ

Այո, յերկուսն եվ յերիտասարդ են, յերկուսն եվ ապրում են նրա հետ միասին միևնույն տան մեջ... Բայց վորն է նրանից։

Մոտենում է։

Ընկերներ, հինգ որից ճանապարհի նախագիծը պետք է ներկայացնել ի հաստատություն, իսկ յես կարծեմ, սխալ եմ արել։

Բացում է պլանը։

Ի՞նչու մեր խճուղին, ահա այստեղ, յերկու անգամ կտրում է առվակը։

ԿՈՍՏՅԱ

Առուն պատվում է, ողակ է կազմում։

ՊՐԻԲԼՅՈՎ

Եվ ինչու համար մենք պետք է խցկվենք այս ողակի մեջ։ Ինչու հետ չքաշվել թեկուզ հենց ահա այստեղ։ Յեվ առանց կամուրջների և կայարանին ավելի մոտ։

Զննող հայացքով նայում է ուսանողներին։

ՅԱԿՈՎ

Այդ կարելի յե։ Ճիշտ է։

ԿՈՍՏՅԱ

Այո, այդպես ավելի լավ է։

ՊՐԻԲԼՅՈՎ

Այո։ Դուք յերկուսդ եվ գտնում եք։

ՅԱԿՈՎ

Իհարկե։

ԿՈՍՏՅԱ

Իհարկե։

ՊՐԻԲԼՅՈՎ

Հրաշալի յե։ Բայց այդ դեպքում, ճանապարհը կանցնի

այն տեղով, վորտեղ մենք այժմ կանգնած ենք և կարաուլոմների ամառանոցը պետք է քանդել։

Հայացքը Կոստյային. հայացքը Յակովին։

ՅԱԿՈՎ

Թուլ տվեք, իսկ յեթե քիչ դեպի հյուսիս։

ԿՈՍՏՅԱ

Թուլ տվեք, իսկ յեթե վոքը ինչ դեպի հարավ։

ՊՐԻԲԼՅՈՎ

Դեպի հյուսիս ձորն է, դեպի հարավ՝ առուն։ Իսկ այնտեղ ամառանոցը, միևնույն է, ընկնում է ոտարման շերտի մեջ։

ՅԱԿՈՎ (Միասին)

Այդ վատ է։

ՊՐԻԲԼՅՈՎ

Մի՞թե դուք յերկուսդ եվ շահագրգռված եք։ Յես եվ եմ ափսոսում Կարաուլոմների ամառանոցը, բայց ձեզնից մեկի համար ավելի ցավալի յե — ստիպված պիտի լինենք քանդել ապագա անեղծ ապարանքը։

ԿՈՍՏՅԱ

Մենք անհերներ չունենք, մենք ամուրի յենք։

ՅԱԿՈՎ

Սպասիր... Կարելի յե ավելի լավ անել...

ՊՐԻԲԼՅՈՎ

Ինչպե՞ս։

ՅԱԿՈՎ

Ճանապարհն սկսել անցկացնել կայարանի մյուս կողմից։ Ահա։ Յեվ ավելի մոտիկ է, և՝ տեղը հարթ է։

ՊՐԻԲԼՅՈՎ

Դուք կարծում եք։ Այդպես... այդպես։ Բայց, բայց այստեղ... վոչ, այդ չեղավ։

ՅԱԿՈՎ

Շատ լավ եվ յեղավ, իսկ կայարանին ավելի մոտիկ է։

ՊՐԻԲԼՅՈՎ

Վոչ, վոչ։ Մի ուրշ կերպ փնտռենք։ Անցնենք։

Ցակովի հետ միասին գնում է։

ԿՈՍՏՅԱ (Դիտելով նախագիծը)

Մթթե պիտի քանդեն։

Գալիս է Սենեչկան։ Զգուշորեն շուրջն է նայում։ Տեսնում է Կոստյային։ Նրանք մի քանի վարկյան իրար են նայում։

ՍԵՆԵՉԿԱ

Կարիճ — հերոսին, հաղթանակողին — ֆիզկուլտ ուռռա...

Վազզունում է Կոստյային, բարձրացված բռունցքով զրգռիչ կերպով անց ու դարձ է անում։

Կարուզո։ Յեթե իրականապես ինձ վորևե անձնավորություն հաղթեր, խնդրեմ։ Թե չե... Յեվ ինչ է գտել Մարիա Սերգեևնան ձեր մեջ։ Զե՞ք պատասխանում։ Յերևակայում եք։ Հայրիկ եք ձևակերպվել։ Իսկ ուզում ես յես քո կերպարանքից կապիկ դարձնեմ։

ԿՈՍՏՅԱ

Ի՞նչ հայրիկ։ Ի՞նչ կապիկ։

ՍԵՆԵՉԿԱ

Վախեցար։ Լավ, ձեռք չեմ տա, միայն բացատրիր, ինչ է գտել նա քո մեջ։

ԿՈՍՏՅԱ

Ուրեմն դուք կարծում եք, այդ յես եմ։

ՍԵՆԵՉԿԱ

Թե չե ու սուտ է։ Վոչ։

Կոստյան տխուր թափահարում է գլուխը։

Ես աստված։ Ո՛ւխ, գրող... Իսկ յես ամբողջ դիշերը ձեզ վրա կասկածներ եմ տածել։ Ստուգենտ է, մտածում եմ, անհերեսություն ունի, արտաքին ձև ունի։ Նա, կարծում եմ, անպայման հա-

ջողություն պիտի ունենա։ Բանից դուրս յեկավ, վոր դուք ել եք եշացել։ Շատ հաճելի յե։

Սղմում է Կոստյայի ձեռքը։ Գալիս է Պրիբելյովը։ Սենեչկան հրում է Կոստյային։

Այս տիպի վրա ել եմ կասկածներ տածում։

ԿՈՍՏՅԱ

Սխալ ես։ Նա Կարաուլովների ամառանոցը քանդել է ուզում։

ՍԵՆԵՉԿԱ

Աչքին թոզ փչելու համար է, — մեկը կքանդի, մյուսը կշինի. դիպլոմատիա յե։

ԿՈՍՏՅԱ

Դուք կարծում եք։

Տղամարդիկ անցնում են հրապարակի վրայով յեվ Կասկածանքով նայում են իրար։ Հավասարվելով Կոստյային՝ Սենեչկան ասում է, ցույց տալով Պրիբելյովին։

ՍԵՆԵՉԿԱ

Պարզ ու վորոշ կարիճ է։ Սարքին, կարգին, հարթուկված։ Համաշխարհային բռևիկ։ Նա յե... նա յե... նրա դեմքը պետք է նախշել։

Պրիբելյովը մոտենում է Սենեչկային յեվ թեվանցում է անում։ Մի կողմ է քաշում։

ՊՐԻԲԼՅՈՎ

Կարծեմ, դուք եք տեսել Մարիա Սերգեևնային այն... տիկնոջ մոտ։

ՍԵՆԵՉԿԱ

Դե յես եմ, հետո ինչ։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ասացեք խնդրեմ, վոչ մի տղամարդ նրան չե՞ր ուղեկցում։

Ցույց տալով Կոստյային։

Իմ պրակտիկանտը նրա հետ չե՞ր։

ՍԵՆԵԶԿԱ (Ուրախ)

Ե՜Հ, վոչ, պրակտիկանտը զանց է լինում։

Դառնում է։

Կոստյա, այստեղ դատական սխալ է։ Նա յել է այս թյուրիմացության ընկերակիցը։

Կոստյան մոտենում է։ Ցերկուսն էլ սրմում են Պրիբելյովի ձեռքը։

Իսկ յես ձեզ վրա եյի կասկածում։ Մարդն, ասում եմ, ավարտած բարձրագույն կրթություն ունի, նա ամեն ինչիը նդունակ է։ Ուրեմն՝ վոչ։ Շատ հաճելի յե։ Նստեցեք, դե, յեթե այսպիսի կորիճը եշանում է, այդ դեպքում մեզ համար էլ ենքան մեծ հիմարություն չե։ Թուլ տվեք։ Բոլոր աչքի ընկնող տղամարդիկս այստեղ ենք և բոլորս «վոչ» ենք։ Այդ դեպքում ով է «այո»-ն։ Ուրեմն, այսորվա համար մենք նորից հանելուկ ունենք։ Տը-ս-ս-ս... Ցաշկային աչքաթող ենք արել։ Գուցե հենց նա յե վոր կա Կարուզոն։

ԿՈՍՏՅԱ

Յակովը չի, վոչ Յակովը չի։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Բայց ով է։ Ո՞վ է այդ դեպքում։

Գալիս է Յակովը։

ՅԱԿՈՎ

Այնտեղով ճանապարհը շատ լավ կանցնի։

Ցերեք տղամարդիկն էլ Յակովի շուրջը պտտվելով նայում են նրան։

ՍԵՆԵԶԿԱ

Նա յե, էլ ուրիշ վոչ վոք չի կարող լինել։

ՅԱԿՈՎ

Ի՞նչ եք անում։

Տղամարդիկ շարունակում են քայլել շրջանով։

Եղ ի՞նչ է, խմբ եք խաղում։ Գնամ մյուս կողմից նայեմ։

Գնում է։

ԿՈՍՏՅԱ

Նա չե, նա չե։

ՊՐԻԲԵԼՅՈՎ (Զարկելով յուր նակատին)

Նա չե՞ վոր դերասանուհի յե։ Մենք թատրոնն ենք ժողացել։ Դերասաններին։

ԿՈՍՏՅԱ

Դերասաններին։ Այո՛, այո, դերասանները... ա-ա-ա...

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Փորձերը, կուլիսները, վարագույրը — այդ բոլորը սա է տրամադրում։

ԿՈՍՏՅԱ (Հառաչում է)

Կուլիսնե՛րը... վարագո՛ւյրը...

ՍԵՆԵԶԿԱ

Հուշարարի բուդկան։

ԿՈՍՏՅԱ

Մի՞թե դերասան է։ Անպատկառ, սափրված, լայնաթիկունք պինջակով։

Գալիս է Մանյան յեվ ուղեվորվելով դեպի ամառանոցը, կանգ է առնում խմբակի յետեվը։

ՍԵՆԵԶԿԱ

Առաջարկում եմ յերեքովս սահմանադրենք զորսի դաշնադրությունը։ Մենք կգտնենք նրան։ Ցես թատրոնում եղ ամբողջ ռամպան... տակն ու վրա կանեմ։ Քաղաքացիներ, դեպի թատրոն

Բոլորը դառնում յեվ քարանում են Մանյայի առջեվ։ Կոստյան փախչում է։ Պրիբելյովը բարձ-

բացնում է գլխարկը, քաղաքավարի գլուխ է տալիս յեվ հեռանում է: Սենեչկան հանում է գլխարկը, շուրջն է նայում, բայց չի համարձակվում հեռանալ:

ՄԱՆՅԱ

Ինչո՞ւ յեք դուք այստեղ:

ՍԵՆԵՉԿԱ

Յես: Յես զբոսնում եյի... ժոլորվեցի:

ՄԱՆՅԱ

Յերեկ դուք լսել և մատնել եք իմ գաղտնիքը: Սենեչկա, ինչո՞ւ: Մի՞թե յես հանցավոր եմ ձեր առաջ: Կամ յես ձեզ վորևե բա՞ն եմ խոստացել: Ինչի՞ արժանացաք դուք: Ինձնից բոլորը յերես են դարձրել: Անապատ է... Վոչ մի մարդ չկա: Ե՛խ, դուք... և դեռ հոգեբանություն եյիք վերակառուցում: Հորիզոնների մասին եյիք յերազում: Դրա մեջ ինչ վոր նոր, թարմ բան կար... Յեվ ինձ թվում եր, վոր դուք, Սենեչկա...

Դառնում յեվ գնում է ամառանոց:

ՍԵՆԵՉԿԱ

Յես... յես Մարիա Սերգևնա...

Մանյան գնաց:

Յես նրան խայտառակեցի, իսկ նա... «Սենեչկա»:

Նստում է նստարանի վրա յեվ յերգում է:

Կհազնեմ յես մի սև շլյապա,
Կերթամ յես ի քաղաքն Անապա,
Վողջ կյանքս այնտեղ կնստեմ
Հեռն եվ դառը-դառը լաց կլինեմ:

Ի՞ խորհրդային հասարակայնության առաջ մեղադրյալների նստարանի վրա յե — քաղքենի Սեմիոն Պերչատկինը: Հարցաքննությունը սկսյալ է.—

— Սեմիոն Պերչատկին, արդյոք դուք ձեզ սրիկա ճանաչո՞ւմ եք:

— Ճանաչում եմ:

— Գիտակցո՞ւմ եք արդյոք, վոր յերեկ դուրս եք տվել վորպես մի սակավակուլտուրական ձու ծախող:

— Գիտակցում եմ:

— Ի՞նչ կարող եք փչել ձեզ արդարացնելու համար:

— Քաղաքացի դատախազ, յես իմ հետաքրքրությունը կմաքրազարդեմ, են սուրբ խաչը՝ կմաքրազարդեմ:

Վորպես ռեմարկա:

Արցունքները խեղդում են մեղադրյալին:

— Նկատի առնելով անկեղծ խոստովանությունը՝ դատապարտյալ Սեմիոն Պերչատկինին պայմանական մի անգամ ռեխին հասցնել:

Մի լավ ապտակ է հասցնում իրեն:

Դահլիճը դատարկվում է:

Գնում է: Ամառանոցից դուրս են գալիս Ոյլգա Պավլովնան յեվ Կարաուլովը՝ սրվակը յեվ բաժակը ձեռքին:

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՛յլա, ընդունիր այս կաթիլները:

ՈՅԼԳԱ

Հոգիս մաշվել է: Ի՞նչ ես դու քո վալերյանկայով հոգիս հանում:

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Պետք է Մանյայի հետ խոսել հանդիստ: Նա դերասանուհի յե, դյուրազգաց է... Իսկ դու յերեկ քիչ եր մնում խեղդվելու ուղարկեյիր:

ՈՅԼԳԱ

Դերասանուհի յե, դերասանուհի յե... հաջողություն ունի... Աստված հեռու պահի մեզ այդ տեսակ հաջողությունից: Արժանացանք դափնիների, ծաղկեփնջերի:

Հոչակվեցինք։ Դերասանուհի... Ավելի լավ կլիներ առանց հոչակի մեքենագրուհի լիներ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Հասկացիր, վոր հիմա կյանքում նոր յերևույթներ են սկիզբ առնում։

ՈՅԼԳԱ

Թե ինչպիսի սկիզբներ են, յես չգիտեմ, իսկ վերջավորությունները նույնն են։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Չեմ վիճում։ Բայց մենք պետք է ոգնենք մեր աղջկան, թե՞ չե։

ՈՅԼԳԱ

Ինչո՞վ...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մենք վճռել ենք չե՞։

ՈՅԼԳԱ

Վճռել ենք։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դե, ուրեմն շատ լավ է։ Դու չե՞ վոր բացառիկ գեղեցկության տեր կին ես, հոգեկան գեղեցկության, իհարկե։ Յես հիմա կկանչեմ Մանյային։ Զհարձակվես նրա վրա։ Հանգիստ... քնքուշ...

Կանչում է։

Մանյա, Մարուսենկա։

Ոյլգա Պավլովնային։

Դե, հանգիստ կաց, աստված քեզ հետ։

ՈՅԼԳԱ

Դու էլ մի հուզվիր, Հիսուս Քրիստոսը քեզ հետ։

Իրար խաչակնքում են։ Գալիս է Մանյան։ Կարաուլովը պատրաստում է սեղանի վրա բաժակն ու կաթիլները։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դե, ահա... Մանյա մենք հիմա ծնող չենք, այլ վոնց

վոր քո ընկերուհիները... ընկերուհիները։ Խոսիր մեզ հետ խնդրում ենք։ Քեզ փորձանք է պատահել։ Այսինքն՝ վոչ, դուցե մինչև իսկ ուրախություն։ Ցեվ մենք ուզում ենք քեզ ոգնել։

ՄԱՆՅԱ

Մեծապես շնորհակալ եմ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Ոյլգա Պավլովնային)

Ա՛յ, տեսնո՞ւմ ես,— ամեն ինչ անցավաղնորեն և լավ։ Մանյա, կուզենայինք իմանալ՝ ո՞վ է, այսպես ասած, հանցավորը։

ՄԱՆՅԱ

Վոչ վոք։ Ամեն բանում հանցավոր եմ միայն յես։

ՈՅԼԳԱ

Միայն դո՞։ Ցերբեք չեմ հավատա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Սու՜սուսուս... Այնուամենայնիվ հայտնիր մեզ ի գիտություն, ո՞վ է նա, վո՞ր տեղ է նա, այդ քո...

ՄԱՆՅԱ

Սիրելիանը։

ՈՅԼԳԱ

Ո՞ւ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Վոչինչ, արիացիր։

Մանյային։

Այո՛, այո, նա։ Վո՞ր տեղ է նա։

ՄԱՆՅԱ

Նա մեկնել է։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ո՞ւր է մեկնել։

ՄԱՆՅԱ

Ը՞Ը՞... շինարարության վրա։

ՈՅԼԳԱ

Բայց վորտեղ։ Հիմա ամեն տեղ էլ շինարարություն է։

ՄԱՆՅԱ

Ցենթադրենք՝ Ղազախստան։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Դու նրա հետ նամակագրություն ունե՞ս։

ՄԱՆՅԱ

Վոչ, նա հիմա տեղափոխվել է մի այլ շինարարության վրա։

ՈՅԼԳԱ

Ուրեմն լետուն է։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Սու-սու-սու... Կաթիլներ խմիր։

Մանյային։

Վոչինչ, նա պառավ կին է։ Մարդուն փոխադրել են, գործուղել են, նա էլ տեղափոխվել է... Դե, և շատ լավ է։ Մանյա, իսկ նա շուտ կվերադառնա։

ՄԱՆՅԱ

Նա յերբեք չի՛ վերադառնա։

ՈՅԼԳԱ

Մեռե՞լ է։

ՄԱՆՅԱ

Վոչ, մենք բաժանվել ենք։

ՈՅԼԳԱ

Այսինքն նա քեզ թողե՞լ է։

ՄԱՆՅԱ

Ցես եմ թողել նրան։

ՈՅԼԳԱ

Դո՞ւ։ Ո՞յ...

Կարաուլովն արագորեն կաթիլներ է լցնում բաժակի մեջ։

Ո՞յ... միայն զարմանքից կարելի յե մեռնել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Զարմանալու բան չկա։ Ցես նրան վոչ թե կթողնեյի, յես այդ շան... հ՞ըմ...

Ինքն է խմում կաթիլները։

Դե, հիմա յերբ վոր, փառք աստծո, ամեն ինչ պարզվել է, դու մի հուզվիր։ Աշխատիր... խաղա... Իսկ յերեխային յես ու տատիկը կմեծացնենք, կփայփայենք... կդաստիարակենք... Մանյա... Հիմա-բիկս...

Մանյան գրկում է նախ հորը յեվ ապա մորը։

ՄԱՆՅԱ

Դուք սքանչելի ծերունիներ եք։ Ձեզ պետք է պարգևատրել։ Ամենադժվար քննությունը տվիք... «գերազանցով»։ Սակայն հիմա ձեր տանջանքները կվերջանան։ Շնորհակալ եմ։

Հորը՝

Իսկ քեզնից մինչև անգամ ակտիվիստ-կոմյերիտական դուրս կգար։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Այո՛, դուրս կգար։

ՈՅԼԳԱ

Գոնե հորդ մի այլասեռի։ Իսկ կնքահայր, Իվան Միխայլիչին պետք է կանչել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Նրան չի կարելի — նա կուլակցական է։

ՈՅԼԳԱ

Լավ ծանոթների մոտ կարծում եմ կարելի յե։

ՄԱՆՅԱ

Իսկ ինչո՞ւ կնքել նրան։

ՈՅԼԳԱ

Նա աստծուն պետք է ճանաչի՞, թե՞ չե։ Թեկուզ իմ

մասին լրագրերում տպեցեք, բայց չմկրտված յերեխային յես ձեռքս չեմ առնի։

ՄԱՆՅԱ

Իսկ յես չեմ թույլ տա նրան մկրտեք։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Սու՛-սու՛-սու՛... Թույլ տանք յերեխային խղճի ազատություն։ Յերբ նա չափահաս կդառնա, թող ինքը գնա և մկրտվի՝ ինչ տեսակ կուզի։

ՈՅԼԳԱ

Հիմարանում ես դու ամառը։

ՄԱՆՅԱ

Ինչի՞ մասին եք վիճում։ Ընդհանրապես տնային դաստիարակությունը վնասակար է։

ՈՅԼԳԱ

Ի՞նչ է ուզում, նա խուժան պիտի դառնա։

ՄԱՆՅԱ

Ինչո՞ւ։ Կան մանկատներ, մսուրներ։

ՈՅԼԳԱ

Մսուրները հորթերի համար է լավ։

ՄԱՆՅԱ

Քաղքենիների հեքիաթներ։

ՈՅԼԳԱ

Ուրեմն յես էլ եմ քաղքենի։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Սու՛-սու՛-սու՛։

ԿՆՈՋԸ։

Կաթիլներ կտամ։ Մանյա, դու մի անհանգստանա, մենք նրան կսիրենք։ Յեթե տղա լինի, դե իհարկե, յերբ հարկավոր լինի, կծեծեմ էլ։

ՄԱՆՅԱ

Իմ տղա յլինի։ Ծեծել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Այդ, յերբ վոր շատ չարություն անի։

ՄԱՆՅԱ

Յերբեք չեմ թույլ տա։ Չեմ թողնի յերեխայիս այլանդակեք։ Նա նրան պետք է ծեծի։ Փոքրիկիս... Չար, հիմար ծերուկ։ Յես չեմ կարող վստահել ձեզ նրա դաստիարակությունը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Շատ բարի։ Լավ։ Չեմ ծեծի։ Թող խուլիգան մեծանա։

ՈՅԼԳԱ

Այն ժամանակ ինքդ նրա ձեռքից լաց կլինես։

ՄԱՆՅԱ

Յեվ լաց կլինեմ, բայց չեմ թողնի ծեծեք։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ինչո՞ւ ծեծել։ Յես նրան յերաժշտություն եմ կսովորեցնեմ։ Դե, պատանեկության համար յես գրքեր ունեմ։

ՄԱՆՅԱ

Յերեի վորևե հնացած խլամ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ուրեմն նրան կուլտուրա հարկավոր չե։

ՄԱՆՅԱ

Այո, բուրժուական կուլտուրան մենք պետք է ընդունենք վերապահությամբ։ Շատ բաներ, վորոնցով դուք հրավել եք, այժմ անհասկանալի յե և վնասակար։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ա՜խ, անհասկանալի յե։ Ձեզ անհասկանալի՞ յե։ Ձեզ վնասակա՞ր է։ Հրաշալի յե։ Կնշանակի դու ինձ չե՞ս վստահում։ Վերջացավ։

Վազում է դեպի ամառանոց։

ՈՅԼԳԱ

Շնորհակալության փոխարեն հորը զժվացրեց։

Կարաուլովը դուրս է վազում ամառանոցից մեկ կապոց գրքերով։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յես այս ՁԼասակար գրքերը թոռներիս համար եյի պահել։ Պարզվում է, վոր իզուր եմ աշխատել... Նրանց անհասկանալի յե... Վերջացավ։

Վերցնում է գրքերից մեկը։

Լերմոնտով «Մեր ժամանակի հերոսը»։ Այլևս հերոսներ չկան և մեր ժամանակը վերջացել է։ Ճիշտ է։ Ո՞վ է ձեզ համար Պեչորինը։ Սպիտակ գվարդիական կովկասյան ճակատից։ Վն... նասակար է։

Գրքերը նետում է ցած։

ՈՅԼԳԱ (Բաժակով)

Մարդ կաթիլներ խմիր։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Շպրտում է բաժակը, վերցնում է մի այլ գիրք)

Ա... անհասկանալի յե։

Շպրտում է։ Ոյլգա Պավլովնան յեվ Մանյան հավաքում են գրքերը։ Կարաուլովը վերցնում է մի ուրիշը։

Տուրգենև «Նախաճաշ պարզկի մոտ»։ Հասկանալի յե։ Վոչ, ձեզ հարկավոր է այսպես «Զխտվելը ողակավարի մոտ»։

Գիրքը թոչում է։

Կործանվիր հին կուլտուրա։

Նորից մի գիրք է վերցնում, ուզում է շպրտել յեվ կանգ է առնում։

Պուշկին... Ալեքսանդր Սերգեևիչ, ներեցեք, չեմ կարող ձեզ շպրտել։

Հատորը դնում է կրծքին յեվ հեռանում։

ՄԱՆՅԱ (Վերցնելով ընկած գրքերը՝ գնում է Կարաուլովի յետեվից)

Խելացնոր ծերուկ։ Մենք սրանից յերբեք չենք հրաժարվի։

ՈՅԼԳԱ (Գրքով)

Հիտլերն է, ուղղակի Հիտլերը։ Տուրգենևի, Իվան Սերգեևիչի ամբողջ շապիկը պատառոտեց։

Գալիս է Գրիբոյեդովը։ Բարեվում է Ոյլգա Պավլովնային։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ո՞վ եր ձեզ մոտ այսպես զոռում... Գրքերն ել ատրճանների վրա յեն...

ՈՅԼԳԱ (Հեռանալով դեպի տունը յեվ հեծկլտալով)

Այդ մենք եյինք... Բարձրաձայն ընթերցում եյինք։

Գնաց։

Գրիբոյեդովը վեր է քաշում ուսերը, ձեռնափայտով շարժում է Կարաուլովի ատրճանների վրա շպրտած գրքերը, բարձրացնում է մի տետրակ, կարդում է։

ՊՐԻԲԼՅՈՎ

«Մանյա Կարաուլովայի ողագիրը»։ Ողագիրը։

Բացում է, շուրջն է նայում։ Թաքցնում է պինջակի ներսի գրպանի մեջ։

Հետաքրքրական է։

Գնում է։ Մյուս կողմից գալիս են Ռայան փոքրիկ չեմոդանով յեվ Զինան։

ԶԻՆԱ

Յես ձեզ կայարանում իսկույն ճանաչեցի։ Ահա Կարաուլովների ամառանոցը։ Միայն նրանք հիմա կոշմարային վիճակի մեջ են։

ՌԱՅԱ

Ի՞նչ է պատահել։

ԶԻՆԱ

Բոլորը ամեն բան իմացել են... և թե վոնց նա Ազրիպինա Սեմյոնովնայի մոտ է գնացել, բոլորը։ Ծնողները կաթվածներ են ստացել։ Ցերկրպագուները

փախել են։ Ցեվ հիմա Մանյայի դեմ մի ամբողջ կամպանյա յե ստեղծվել։

Կանչում է.

Մանյա։ Վոչինչ, չափազանց շատ եր հպարտ — այն ել վոչ ըստ հանգամանքների։ Իհարկե, յես նրան չարը չեմ ցանկանում, բայց թող չարչարվի։

Կանչում է.

Մանյա, քեզ մոտ մարդ է յեկել։

Գալիս է Մանյան։

ՌԱՅԱ

Մանյա։

ՄԱՆՅԱ

Ռայա։

ԶԻՆԱ (Մանյային)

Ինչպես ես նի-հա-բե՛լ...

ՄԱՆՅԱ

Բոլորովին ել չեմ նիհարել։

ԶԻՆԱ

Իհարկե՝ առաջվանը չի վերադառնա, բայց դու մի հուսահատվիր։

ՄԱՆՅԱ

Ինչից ես յենթադրում։ Յես ելի նույնն եմ։

ԶԻՆԱ

Զգիտեմ...։ Առաջ այստեղ տղաներից նեղվածություն եր, իսկ հիմա նրանց համար համատարած հանդստի որ է։

ՄԱՆՅԱ

Ստում ես։ Նրանք բոլորն ել այստեղ են և յեթե յես ուզենամ, վաղն ել թ կամուսնանամ։

ԶԻՆԱ

Մի՞թե։ Վաղեմ հարսանիքի համար զգեստ պատրաստեմ։

Գնում է։

ՌԱՅԱ

Ի՞նչ չարն է նա։

ՄԱՆՅԱ

Նա միշտ ել ինձ նախանձել է։ Ցեվ դեռ կնախանձի, կնախանձի, ասում եմ։ Ռայա, սիրելիս, յես չեյի ուզում Զինկայի ներկայությամբ ասել, բայց իրոք վոր ինձ շատ անախորժություններ են պատահել։ Այս բոլորը շատ ավելի բարդ է ու ծանր, քան յես եյի կարծում։

ՌԱՅԱ

Իհարկե՝ դժվար է, սակայն վորքա՞ն լավ է այդ բոլորը հաղթահարել... Գիտե՞ս, յես մի տեսակ հանդստացել եմ, և հետո... յես նրան շատ պիտի սիրեմ։ Իսկ դու՞ քոնի՞ն։

ՄԱՆՅԱ

Այո, իհարկե... Ռայա, յես ուզում եմ հարցնել — դու... են... նու ինքնուրույն վանտակ ունե՞ս։

ՌԱՅԱ

Վ-վոչ, յես դեռ սովորում եմ։

ՄԱՆՅԱ

Ներիր, իսկ նա-նա կամուսնանա՞ քեզ հետ։

ՌԱՅԱ

Վոչ։ Յես արդեն յերկու ամիս է՝ նրան չեմ տեսել... և յերբեք ել չեմ ուզենա նրան տեսնել։

ՄԱՆՅԱ

Ա՛յ, ա՛յ։ Իսկ քո ծնողները։

ՌԱՅԱ

Յես միայն հայր ունեմ։ Նա ծեր է։ Իսկ հրեական ընտանիքներում առանձնապես խիստ է։ Նա դեռևս վոչինչ չգիտե, բայց ինչ վոր տարորինակ է նայում ինձ։

ՄԱՆՅԱ

Այս ինչ եմ արել յես։ Ռայա, յես սարսափելի կեր-

պով հանցավոր եմ։ Ինչո՞ւ դու այն ժամանակ հավատացիր ինձ։

ՌԱՅԱ

Ես հիմա էլ եմ հավատում։

ՄԱՆՅԱ

Վոչ, վոչ, յես սխալվել եմ։ Պետք չե, չի կարելի յերեխա ունենալ։ Նամանավանդ քեզ։ Ռայա, ներիր ինձ, գնա, նորից վերադարձիր Ագրիպինա Սեմյոնովնայի մոտ։

ՌԱՅԱ

Ի՞նչ ե պատահել քեզ։

ՄԱՆՅԱ

Ես իմ մասին չե, յես քո մասին եմ խոսում։

ՌԱՅԱ

Իսկ ինձ ի՞նչ ե յեղել վոր... Աշնանը գծագրական աշխատանք կունենամ... Ինձ հարկավոր ե միայն մի տարի դիմանալ... Ահա հայրս...

ՄԱՆՅԱ

Ես յերբեք չեմ ների ինձ այս բանը։

Գալիս ե Յակովը։

ՌԱՅԱ

Յաշա։

Յակովը ցնցվում յեվ կանգ ե առնում։

ՄԱՆՅԱ

Դու ճանաչում ես նրան։

ՌԱՅԱ

Մենք չե՞ վոր միևնույն ինստիտուտումն ենք սովորում։ Ինչպե՞ս եք ընկել այստեղ։

ՅԱԿՈՎ

Ես այստեղ գործնական աշխատանքի յեմ։

Լուսամուտում յերեվում ե Ոլգա Պավլովնայի գլուխը։

ՈՅԼԳԱ

Մանյա, հայրդ նոտաներն ե պատռտում,

Մանյան վազում ե տուն։

ՌԱՅԱ

Ո՞վ ե նրա հայրը։

ՅԱԿՈՎ

Սքանչելի մարդ ե։

ՌԱՅԱ

Ինչո՞ւ դուք վեց ամիս չեյիք անցնում ինձ մոտ։

ՅԱԿՈՎ

Ես անցնում եյի։ Առաջ, դուք տանը չեյիք լինում։

ՌԱՅԱ

Հետո։

ՅԱԿՈՎ

Ժամանակ չեր լինում։

Լուսամուտից դուրս են թռչում նոտաների թերթիկները։

Մի քիչ ջղայնանում ե։

Դուրս ե թռչում կազմված մի տետր։

Հեռացեք, այստեղ անվտանգ չե։

ՌԱՅԱ (Գնալով Յակովի հետ)

Յաշա, իմ կյանքում շատ փոփոխություններ կան...

Նրանց ընդառաջ ե գալիս Կոստյան։ Նա բռնում ե Յակովի թեվը։

ԿՈՍՏՅԱ

Ռայա, ինչպե՞ս, դու... վոչ, յես ժամանակ չունեմ զարմանալու... Յաշկա, անհրաժեշտ ե... շտապ... յերկու խոսք... կյանքս ե կախված...

Ռայան գնաց։

ՅԱԿՈՎ

Յերբ վոր գոմեշի սայլին 25 փութ են բարձում, նա տանում ե։ Յերեսունն էլ ե տանում։ Բայց վոր վաթ-

սուն են բարձում, նա շուռ է գալիս և ուղարկում գրողի ծոցը։

Ուզում է գնալ, Կոստյան բռնում է նրան։

ԿՈՍՏՅԱ

Կաց։ Այս յես չեմ քեզ բռնում, այլ միանգամայն նոր, անծանոթ մարդ։ Յակով, մինչև որս իմ զգացումունքն ու կամքը յերկուսի եյին բաժանվում... Նու, վոնց վոր Լերմոնտովի մոտ...

ՅԱԿՈՎ

Յես Լերմոնտովի հետ խոսելու ժամանակ չունեմ։ Գուցե ինձ մոտ ել իմ սեփական հոգեբանությունն է սկսվում։

Ուզում է գնալ։

ԿՈՍՏՅԱ (Գոռում է)

Գոնե կյանքումդ մեկ անգամ լսիր ինձ մինչև վերջ, քոսոտ սատանա։ Յակով, թանկագինս, շնորհավորիր, յես այլևս Լերմոնտով չեմ։

ՅԱԿՈՎ

Հավատում եմ։

ԿՈՍՏՅԱ

Լսիր։ Դեռևս քսան րոպե առաջ, յես այն աստիճանի եյի ստորացել, վոր Պրիբելյովի և Սենկայի հետ միասին դուշակում եյի... փնտռում եյի նրան... Մանյայի նախկին... ծանոթին։ Հիմա այդ վաղուց է անցել, յես վերջնականապես վերացրել եմ իմ միջից և՛ ֆեոդալը, և՛ խղճալի սոպեռը, և՛ Ոթելլոյին...

ՅԱԿՈՎ

Քսան րոպեյում բոլորին։ Կեցցես։

ԿՈՍՏՅԱ

Պրիբելյովն ել, Պերչաակինն ել, քաղքենիներ են. նրանք հրաժարվեցին, իսկ յես սիրում եմ Մանյային առաջվա պես։ Յես անկեղծորեն ուզում եմ ամուսնանալ, յես պետք է ամուսնանամ, պարտավոր եմ։ Յակով, անհրաժեշտ է ամուսնանալ։

ՅԱԿՈՎ

Ախր քեզ է անհրաժեշտ, ել ինչու յես ինձ համոզում։

ԿՈՍՏՅԱ

Վնռված է։ Յեթե նա ներեց, տասը րոպեյից արի շնորհավորելու։

ՅԱԿՈՎ

Լավ։ Միայն թե հինգ րոպեյից քո մեջ Լավ Տոլստոյը չզարթնի։

Գնում է Ռայայի յետեվից։

ԿՈՍՏՅԱ

Կբաղխեմ և կասեմ պարզ և ուղղակի։ Մանյա, ինչ գրված է անցյալում յես ջնջում եմ, իսկ ներկայումս դնում ենք արձանագրվենք։

Ենթադրիկ շարժում է անում յեվ բայլում դեպի ամառանոցը։ Նրա ճամբան կտրում է Պրիբելյովը։ Կոստյան կանգ է առնում։ Պրիբելյովը բաղխում է։ Դուրս է գալիս Մանյան։ Լուսամուտից դուրս են նայում Ոլգա Պավլովնան յեվ Կարաուլովը։ Պրիբելյովի խոսակցությունն ժամանակ Կոստյան դանդաղ մոտենում է, ավելի ու ավելի ապշելով։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Մարյա Սերգեևնա։ Իմ սերը դեպի ձեզ ուժեղ է վորևե անցյալից։ Յես խնդրում եմ ձեզ լինել իմ կինը։

Կոստյան բարանում է։

ՈՅԼԳԱ

Այնուամենայնիվ ասված կա։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Մարի, յես սպասում եմ։

ՈՅԼԳԱ

Մարիա, պատասխանիր։

ՄԱՆՅԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ, յես ձեզ չեմ սիրում, բայց չեմ կարող չհարգել։

Նայում է Կոստյային։

Այն ժամանակ, յերբ վոմանք վիրավորում եյին ինձ, փախչում եյին միայն իմ յերևալուն պես, դուք, դուք վարվեցիք ինչպես իսկական մեծ մարդ։ Մնացեք, յես կաշխատեմ սիրել ձեզ։

Ձեռք է մեկնում նրան։ Ոյլգա Պավլովնան յեվ Կաբաուլովը դուրս են գալիս պատշգամբ։

ՈՅԼԳԱ

Ըսկի աշխատելու բան ել չկա։ Դե մի՞թե կարելի յե չսիրել ձեզ, Ֆեոդոր Ֆեոդորովիչ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ֆեդյա, դու պայծառ անձնավորություն ես։ Մի՞ արդարանա՝ պայծառ ես։ Դու, դու...

Դեմ է առնում Կոստյային։

Մի՞ ընկեք վոտքերի տակ, յերիտասարդ։

ՈՅԼԳԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ, համեցեք սենյակ — կզրուցենք։ Սիրում եմ ձեզ լսել։ Ձեզ վրա ինչ վոր ոտարերկրյա շորշոփ կա։ Հենց են ե, սպասում ես, վոր դուք առնըվազն գերմաներեն կխոսեք։

Շոյելով ու բռնելով Պրիբլյովին տանում են տուն։ Մանյան ուսի վրայով արհամարհական նայում է Կոստյային։ Պաուզա։ Հպարտ դառնում է յեվ անհետանում։

ԿՈՍՏՅԱ

Ձի՞ վոր յես գնում եյի, գնում եյի յես... յես արդեն գնում եյի։

Հեռանում է բեմից։ Գալիս են Ռայան յեվ Յակովը

ՅԱԿՈՎ

Այո, ձեր կյանքում շատ փոփոխություններ կան։

ՌԱՅԱ

Կարծեմ՝ յես իզուր անկեղծորեն պատմեցի։ Դուք շատ եք փոխվել... Յես ձեզ իսկական ընկեր եյի համարում։

ՅԱԿՈՎ

Յես բոլորի համար եմ ընկեր։ Ընկերության բարձրորակ մասնագետ եմ։ Ուրիշների գաղտնիքների և ապրումների շարժական խնայդրամարկղ։ Ավանդները գալիս են անընդհատ։ Ինձ բոլորը համարում են սրտային գործերի հաշվետար, հաշվապահ։ Իսկ դուցե յես ել անցյալում միլիոններ եմ յեղել։ Դուցե յես ել իմ ամբողջ կարողությունը դրել եմ մի հրաշալի ձեռնարկության մեջ, և կոտր եմ ընկել։ Հիմա յես միայն գանձապահ եմ, — պահում եմ ուրիշի գանձերը։ Բերեք։

ՌԱՅԱ

Ինչի՞ մասին եք խոսում։ Չեմ հասկանում։

ՅԱԿՈՎ

Ներեցեք, Ռայա, յես ինքս ել չեմ հասկանում։ Բայց և այնպես յես ընկեր եմ ձեզ, զարդաշ։ Յեվ ամեն ինչ շատ հրաշալի յե։ Յես չեմ հարցնում ով ե նա։ Ինչու։ Նա ձեզնից գնացել ե, կնշանակե վատ մարդ ե, իսկ յեթե վատ մարդն ե գնացել, ապա ուրեմն բարի ճանապարհ նրան։ Ամեն ինչ լավ կլինի։

Շարժում է անում, վորպեսզի խփի նրա ուսին։ Բայց ուշքի յե գալիս յեվ հազիվ ձեռքն է դիպչում,

Հիմա ձեզ հետ հարկավոր ե վարվել ենպես, ինչպես շուշեղին ամանի հետ։

Ամառանոցից դուրս է գալիս Մանյան։

Ո՛չ, նոր ավանդատուներ են գալիս։ Գանձապահը փախավ։

Գնում է։ Մանյան մոտենում է Ռայային։

ՄԱՆՅԱ

Ռայա, մոռացիր այն բոլորը, ինչ վոր այսոր ասացի քեզ։ Վոչնչից մի՛ վախենա։ Ծնիր և ապրիր համարձակ։ Աշխարհիս յերեսին կան նոր, մեծահոգի մարդիկ, և նրանցից մեկն ինձ սիրում է։ Ճիշտ է, յես սիրում եմ, վոչ, սիրել եմ ուրիշին... Ա՜խ... Այսոր յես քառասուն եջ կգրեմ որագրիս մեջ։ Ռայա, նախ և առաջ, դու կմնաս ինձ մոտ։ Լռի՛ր, խնդրում եմ։ Յերկրորդ՝ դու ըստ քո մասնագիտության վաստակ կունենաս։ Նա ինժեներ է։ Նա ինձ համար ամեն ինչ կանի։ Ասենք՝ նա առանց ինձ էլ ամեն ինչ կարքի։ Նա աղնվագույն մարդ է։

ՌԱՅԱ

Շնորհակալ եմ։ Շատ անհարմար է, բայց աշխատանք իրոք վոր ինձ անհրաժեշտ է։

ՄԱՆՅԱ (Տուն վազելով)

Յես հիմա նրան կուղարկեմ։ Յես արդեն ասել եմ նրան։

Պրիբելյովը գալիս է։ Հանդիպելով Մանյային, վորը մտնում է սենյակը, համբուրում է նրա ձեռքը։ Նշան է անում յեվ մոտենում է Ռայային։ Պրիբելյովը մոտենալուն պես Ռայան վոտքի յե կանգնում։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Դո՞ւ։ Դո՞ւք։

Շուրջն է նայում։

Ինչո՞ւ յեք այստեղ։ Յեթե յես ձեզ հարկավոր եմ, կարող եյիք գտնել ինձ Մոսկվայում, վերջապես՝ իմ ամառանոցում։

ՌԱՅԱ

Յես ձեզ չեյի փնտռում։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ի՞նչ եք ուզում։ Փո՞ղ։ Բայց դուք հրաժարվեցիք փողից։ Գուցե սկանդա՞լ եք ուզում... լսել եք, վոր ուզում եմ ամուսնանալ...

ՌԱՅԱ

Մանյայի հետ։ Ուրեմն այդ աղնվագույն մարդը դո՞ւք եք։ Ինչպե՞ս եք խաբել նրան։ Ասենք՝ դուք լավ գիտեք...

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Վոչ վոքի չեմ խաբել յես և Մանյայի հետ պատրաստ եմ ամուսնանալ՝ վորտեղ կուզեք, թեկուզ հենց յեկեղեցում...

ՌԱՅԱ

Մի ամսո՞վ։ Յերկո՞ւ։

Ընդորինակելով նրան։

«Չե՞ վոր ժամանակակից ամուսնությունը վոչ մի բանի չի պարտավորեցնում»։ Վո՛չ, յես Մանյային կրպաշտպանեմ։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Գրող... խորհրդային ֆեմիդա։ Ռայիսա, սկանդալ մի սարքեք, դա ստորություն է։ Յես խնդրում եմ... Հեռացեք այստեղից... Մենք կհանդիպենք իմ ամառանոցի մոտ...

ՌԱՅԱ

Մենք հանդիպելու կարիք չունենք։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Դե՛, գնացեք տուն, ուր կուզեք, միայն մի՛ կանգնեք այստեղ։

ՌԱՅԱ

Յես Կարաուլովների տանն եմ ապրելու։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ռայա, Ռայիսա, Ռայո։ Դուք խելոք աղջիկ եք։ Յեթե ցանկանում եք, վրեժխնդիր յեղեք, միայն՝ հետո։ Յես ընդունում եմ, վոր վորոշ չափով սրիկա յեմ յեղել, մասամբ՝ նույնիսկ ստոր, բայց միայն հեռացեք։ Դե՛, խնդրում եմ։ Նախկին ձեր Թեոդորիկն է խնդրում։

Ա՜...գրրող... Ի՞նչ եք կանգնել հոգեհան հրեշտակի պես։ Ռայա, Ռայիսա, Ռայո...

Տեսնում է մոտեցող Մանյային։

Գոնե լուռ պահեք ձեզ։ Ցավ այսպես, ընկեր, յես ամեն բան կսարքեմ, իսկ հիմա անցեք ինձ մոտ, յես ձեզ յերկտող կտամ, աշխղեկի վրա։ Գնանք, ընկեր։ Ընկեր, դե գնանք։ Դե, խնդրեմ...

ՌԱՅԱ

Յես ձեզ ի՞նչ ընկեր եմ։ Դադարեցեք ձևանալ։

ՄԱՆՅԱ

Ի՞նչ։

ՌԱՅԱ

Մանյա, յեթե դու նրան սիրում ես, դա դժբախտություն է։

ՄԱՆՅԱ

Ինչպե՞ս։ Ինչո՞ւ։

ՌԱՅԱ

Յես ել եյի նրան համարում և՛ մեծահոգի, և՛ ազնիվ։

ՄԱՆՅԱ

Ուրեմն, այդ դո՞ւք եք։ Դուք նրան թողել եք այդ վիճակում։ Ցավ հետո յել համարձակվում եյիք խոսել ինձ հետ։ Դուք սրիկա յեք։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ինչո՞ւ յեմ սրիկա։ Ինչո՞վ է իմ անցյալը ձերից վատ։ Յես ամուսնանում եմ ձեզ հետ ուրիշի յերեխայով։

Պաուզա։

Կամ դուք յենթադրում եյիք իմ մեջ անբիծ կույս տղամարդ տեսնել։ Յես դեպի ձեզ նման առևտրական սահանջներ չեմ ներկայացրել։ Յես չեմ փորփորում ձեր անցյալը։ Բայց յեթե դուք ուզում եք խուզարկել ինձ — խնդրեմ — յես ինքս կբանամ բոլոր արկղները։

Մանյան շարժում է անում, ուզում է ընդհատել։

Մի՛ բոպե... Այո՛, մենք մոտ ենք յեղել։ Ցավ բաժանվել ենք։ Ցավ անա բաժանումից հետո արդեն յես իմանում եմ իմ յերեխայի մասին։ Ցես իսկույն ևեթ փող եմ ուղարկում և խորհուրդ եմ տալիս դիմել բժշկին։

Մանյան շարժում է անում։

Մի՛ բոպե։ Ռայիսա Ալեքսանդրովնան պատասխանում է, վոր համաձայն է, վոր յերեխան չի ծնվելու և վոր... նա այլես ինձ չի սիրում։ Այդ նամակը յես ստացել եմ յերկու ամիս առաջ։ Ճի՞շտ է։

ՌԱՅԱ

Այո, ճիշտ է։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ել ինչո՞ւ համար եք դուք ինձ վիրավորում։

ՄԱՆՅԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ, յես լավ չեյի մտածել։

ՊՐԻԲԼՅՈՎ

Մանյա, Մարուսյա, Մարգո, ո՞ւր են ձեր սկզբունքները, ո՞ւր է ձեր ազատությունը։

ՄԱՆՅԱ

Ներեցեք ինձ։

ՊՐԻԲԼՅՈՎ

Վոչինչ։ Ցես կվերադաստիարակեմ ձեզ։ Իսկ Ռայիսա Ալեքսանդրովնան չի կարող պրետենզիաներ ունենալ իմ դեմ։ Ահա նրա նամակը։

Գրպանից նամակը հանելուց, վայր է գցում Մանյայի որագիրը։

ՄԱՆՅԱ

Իմ որագի՞րը։

Վերցնում է։

Իմ որագի՞րը։ Ձե՞զ մոտ։ Ցավ դուք կարդացել եք։ Ա՛խ, սողո՛ւն։ Ի՛նչ ստոր սողուն եք դուք։

Ամառանոցից դուրս են գալիս Ոլգա Պավլովնան յեվ Կարաուլովը։ Վերնատնից իջնում է Ցակովը։

ՈՅԼԳԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ, համեցեք թեյ խմելու։ Մուրաբա էլ ունեմ։

ՄԱՆՅԱ (Պրիբելյովին)

Յեթե դուք մեկ էլ մոտենաք մեր ամառանոցին, յես ձեզ փայտով կվռնդեմ։

ՈՅԼԳԱ

Այդ ո՞ւմ, Ֆեոդոր Ֆեոդորովիչի՞ն։ Յա՛շա։

Թուլանում է։ Ցակովը պահում է նրան։

ՄԱՆՅԱ

Դուք գող եք։ Կորեք այստեղից։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Տրորում է աչքերը)։

Արթնացրե՞ք ինձ։

Բռնում է Ցակովի ձեռքը մյուս կողմից։ Պրիբելյովը գնում է։ Նրան ընդառաջ է գալիս Կոստյան։

ԿՈՍՏՅԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ, յես պետք է... յես պարտավոր եմ ընդունել ձեր առավելությունը. դուք Մանյային սիրում եք բոլորից ավելի և բոլորից աղնվորեն։ Թույլ տվեք սղմեմ ձեր ձեռքը։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Գնացե՛ք դուք... գրողի ծոցը։

Գնում է։

ՄԱՆՅԱ

Չհամարձակվե՛ս նրան ձեռք տալ։ Ա՛ռ։ Կարդա՛։

Որազիքը շպրտում է Կոստյային յեվ դուրս է վազում։

ԿՈՍՏՅԱ (Մոտենալով Ցակովին)

Յա՛կով, ինչ է պատահել, Յա՛կով։

ՅԱԿՈՎ (Մի ձեռքով պահելով Ոյլգա Պավլովնային, մյուս ձեռքով Կարաուլովին տանում է դեպի տունը)

Այլևս տեղ չկա։ Գնացքը ճանապարհվեց։

ՎԱՐԱԳՈՒՑ

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նույն կահավորումը՝ Կարաուլովների ամառանոցի մոտ։

Նախքան վարագույրը բացվելը՝ վիճող ձայների ժխոր։ Սեղանի շուրջը, վորի վրա փռված է պլանը — Կոստյան, Պրիբելյովը, Կարաուլովը յեվ Ոյլգա Պավլովնան։

ՈՅԼԳԱ

Յերեսուն հինգ տարի ցարի որոք ենք ապրել, ութ ամիս Կերենսկով ենք հիացել, տասնվեց տարի, հանաք բան չի, բոյլշևիկների որոք, բայց այսպիսի բան յերբեք չենք տեսել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Բարձրացնելով մերք մեկ, մերք մյուս ձեռքը)

Խոսք եմ խնդրում... Թույլ տվեք արտահայտվել...

ՅԱԿՈՎ

Սերգե՛յ Պետրովիչ, դուք յերաժշտական մարդ եք,— պաուզա վերցրեք և պահեք այն կես ժամ։

Ոյլգա Պավլովնան յեվ Կարաուլովը կանգնում են իրար մոտ, կարծես սպասում են դատավճռի։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Ճանապարհը կանցնի այսպես։ Վորքան էլ այդ ցավալի լինի, բայց Կարաուլովների ամառանոցը պետք է քանդվի։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ, ըստ առաջին նախագծի, այդ խճուղին գնում եր մեր կողքով, գնում եր հանդիստ, նրբավարի և վոչ վոքին չեր անհանգստացնում։ Բայց հենց վոր Մանյան, ներեցեք, ձեզ վոնդեց, խճուղին ծռվեց։ Ի՞նչպիսի հիշաչարություն։ Ցերբեք չեմ հավատա, վոր նա անաչառ կերպով է ծռվել։ Այսպես չեն վարվում որինավոր ճանապարհները։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ձեր կարծիքով յես վրեժխնդիր եմ լինում։ Ցենթադրենք թե այդպես է։ Դե, իսկ իմ պրակտիկանտներին վստահում եք։

Կոստյային յեվ Ցակովին։

Ասացեք, վո՞ր նախագիծն է ավելի լավ — առաջի՞նը, թե՞ յերկրորդը։

ԿՈՍՏՅԱ (Հառաչելով)

Յերկրորդը։

ՅԱԿՈՎ

Յերկրորդը լաՎն է։ Հավ նախագիծ է։

ՊՐԻԲԼՅՈՎ

Դուք լսեցի՞ք։

ՅԱԿՈՎ

Բայց յերրորդ նախագիծն ավելի լաՎն է։ Յերրորդ նախագծով, ընկեր Պրիբելյով, նույնպես պետք է մի ամառանոց քանդել։ Ձեր ամառանոցը։

ՊՐԻԲԼՅՈՎ

Յերկու որ է լսում եմ միևնույն հիմարությունը։ Դա ինձ ձանձրացրել է։ Բարեհաճեք գծագրել այս նախագիծը, իմ նախագիծը։ Վաղը յես տանում եմ ի հաստատություն։

ՅԱԿՈՎ

Պատրաստ կլինի։

Կոստյայի հետ քաշվում է մի կողմ։ Ոլգա Պավլովնան յեվ Կարաուլովը գնում են Պրիբելյովի յետեվից։

ՈՅԼԳԱ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ…

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ֆեոդոր Ֆեոդորովիչ…

ՊՐԻԲԼՅՈՎ

Յեթե յես ճիշտ չեմ վարվել, բողոքեցեք, բողոքեցեք իմ դեմ։

ՈՅԼԳԱ

Ինչո՞ւ բողոքել։ Ավելի լավ է մի կերպ բարեկամաբար զլուխ բերել։

ՊՐԻԲԼՅՈՎ

Բարեկամաբա՞ր։ Ցավոք սրտի, յես հնարավորություն չունեցա ձեզ հետ բարեկամաբար վարվելու։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Մենք ամբողջ հոգով ուզում եյինք… Մանյան մինչև իսկ չի բացատրել, թե ինչից առաջացավ ձեր փոխհարաբերությունների խզումը։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ահա ուրեմն, դիմեցեք ձեր աղջկան։ Յեթե նա իր համառությունը կկոտրի, այդ դեպքում գուցե յես ել իմ ամառանոցը կկարդեմ, այո, իմը։

Կտրուկ դառնում է յեվ գնում։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Նայում է յերկնքին)

Տեր աստված։ Կամ բնություն։ Կամ ելի ենտեղ վորևե մեկը։ Մինչև իսկ չգիտես՝ ուրմն աղոթես… Ո՞խ…

ՈՅԼԳԱ

Մի փորձանքը յեկավ յերեխայի հետ, յերկրորդը՝

տան հետ, իսկ յերբորդը հայտնի չե, թե ինչի հետ։ Բայց յերբորդն ել կգա, սպասիր Սերյոժա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Սպասում եմ, Ո՛լյա, սպասում եմ...

Կորացած գնում են դեպի տուն։

ՈՅԼԳԱ

Սիրելի ուսանողներ։

Նստում է նստարանին։

ԿՈՍՏՅԱ

Պրիբելյովը իրավացի յե։ Դուք, Սերգեյ Պետրովիչ, պետք է հասկանաք, դուք ինտելիգենտ մարդ եք։ Յերաժիշտ...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Յես ինքս ել յերաժշտական գործիք եմ...

Ցույց տալով տունը.

Այդպես դուրս մի՛ շպրտեք ինձ իմ տուփից։ Յես կխոնավանամ անձրևի տակ։ Յես ակամայից կսկսեմ կեղծել ձայնս...

Գնում է տուն.

ՈՅԼԳԱ

Սիրելի պրակտիկանտներ, զգայուն յերիտասարդություն, չի կարելի արդյո՞ք այդ յերիցս անիծյալ ճանապարհը հեռացնել մի քիչ։

ՅԱԿՈՎ

Լավ։ Կհեռացնենք։

ՈՅԼԳԱ

Իսկապե՞ս։

ՅԱԿՈՎ

Մամաշա, կհեռացնենք։ Գնացեք տուն, ծերուկի հետ միասին մի շիշ կաթիլներ խմեք։ — ճանապարհը կհեռացնենք։

ՈՅԼԳԱ

Ա՜խ, Յակով, դուք լավ պատանի յեք, բայց ափսոս վոր քրիստոնյա չեք։

Գնում է տուն։

ԿՈՍՏՅԱ

Ինչու՞ յես դու նրան հուսադրում։ Ինչու՞։

ՅԱԿՈՎ

Յես ճիշտ եմ ասում։

ԿՈՍՏՅԱ

Ստում ես։ Ի՞նչպես կհեռացնես ճանապարհը։

ՅԱԿՈՎ

Արդեն հեռացրել եմ։

ԿՈՍՏՅԱ

Դարձյալ ստում ես։ Ի՞նչպես ես հեռացրել։

ՅԱԿՈՎ

Իմ գաղտնիքն է, իմ գործն է։

Սեղանի վրա մի թերթ թուղթ է գցում.

Ա՛ռ, գծագրիր յերբորդ նախագիծը։

Կոստյան նայում է.

ԿՈՍՏՅԱ

Ցնդե՞լ ես։ Խճուղին տանել ուղղակի Պրիբելյովի ամառանոցով։

ՅԱԿՈՎ

Նա ինքն այդպես կկարդաղրի։

ԿՈՍՏՅԱ

Ինչպե՞ս կկարդաղրի, յե՞րբ կկարդաղրի։

ՅԱԿՈՎ

Այսոր իրիկնադեմին կկարդաղրի։

ԿՈՍՏՅԱ

Դու կարո՞ղ ես մարդավարի ասել։

ՅԱԿՈՎ

Ինչու՞ ասել, յերբ յես գրել եմ։

ԿՈՍՏՅԱ

Ա՛յ բութ։ Ի՞նչ ես գրել։ Ցեբը ես գրել։ Վո՞ւրտեղ ես գրել։

ՅԱԿՈՎ

Հոդված եմ գրել։ Ցերեկ եմ գրել։ «Կրասնիյ դարոժնիկ» լրագրումն եմ գրել։

ԿՈՍՏՅԱ

Դե ախը հրաշալի նախագիծ է, Պրիբլյոմը ազնիվ, փորձված ինժեներ է, իսկ դու ապուշդ նրան հալածում ես։ Այ, կգցեն քեզ ստորին աշխատանքի, խորխորատները։

ՅԱԿՈՎ

Ստորին... խորխորատները։

ԿՈՍՏՅԱ

Բայց և այնպես դու ի՞նչ ես դրել։

ՅԱԿՈՎ

Իմ գաղտնիքն է — իմ գործն է։ Գծիր պլանն, ասում եմ։

ԿՈՍՏՅԱ

Չեմ գծի, չեմ ուզում մասնակցել ապուշության մեջ։

Ամառանոցից մոտենում է Ռայան.

ՅԱԿՈՎ

Ռաֆչկա, ոգնեցեք խնդրում եմ։ Պետք է գծագրությունն ուղղել

Ցույց է տալիս.

ա՛յ, այս տեղը։ Միայն կայարանից առաջին յերկու կիլոմետրը։ Շարունակությունն առաջվա նման է։

ՌԱՅԱ

Իսկույն կանեմ։

Գծագրությունը տանում է ամառանոցը։ Շեմքում դառնում է։ Հայացքները հանդիպում են։ Արագ դարձում են Յակովը վերցնում է կարն փայտերից մեկը յեվ սկսում է կացնով սրել ծայրը։

ՅԱԿՈՎ

Աշխատանքի բաշխում.— յես կաշխատեմ, իսկ դու կտխրես։

Ծիծաղում է։

Կեցցե՛ս, Մանյա, հրաշալի յե ձեռք առել։ Դերասանուհի յե.—«յերեխա կլինի»։ Յեվ բոլորը հավատացել են։ Յես ել հավատացի... «ո՞ւմ յերեխան է» — ես կողմ կասկած, են կողմ կասկած։ Լավ եր՝ Մոսկվայից խուզարկող շուն չբերել տվին.— շունն ել չեր իմանա՝ ո՞ւմ գտներ։ Որագիրը... Ո՞ւ։ Իսկ ծերունիները, Ռայան, Սենկան, հիմա յել վոչինչ չեն իմանում։ Ուղղակի կոմի-տրագեդիա յե։ Կոստյա, յե՞ր ե հարսանիքը։

ԿՈՍՏՅԱ

Վոչ մի հարսանիք ել չի լինի։

ՅԱԿՈՎ

Նո՞։ Ե՞լի քո մեջ ինչ վոր մեկը զարթնեց։

ԿՈՍՏՅԱ

Յես Մանյային սիրում եմ... բայց ամուսնանալ...

Գոռում է։

Յես սրիկա չեմ։ Ցերը նա այդ վիճակումն եր, յես նրան վիրավորեցի, յես փախա, յես ինձ ցույց տվի վորպես ստոր սողուն... Իսկ հիմա, հիմա ամեն մեկն ել կամուսնանա։ Ավելի լավ կլիներ յեթե իսկապես լիներ այդ անիծյալ ուրիշի յերեխան։ Վո՛չ, յես այլևս ամուսնանալ չեմ կարող։

ՅԱԿՈՎ

Կոստյա, յես սխալվել եմ քո վերաբերմամբ, դու վոչ Լերմոնտովն ես, վոչ ել Լեվ Տոլստոյը — դու Դոստոյեվսկին ես։ Նստիր գրիր «Իդիոտը», քեզ մոտ լավ դուրս կգա։ Դու չե՞ վոր գնում եյիր նշանվելու։

ԿՈՍՏՅԱ

Ա՛յ բութ։ Ի՞նչ ես գրել։ Ցերը ես գրել։ Վո՞ր տեղ ես գրել։

ՅԱԿՈՎ

Հոդված եմ գրել։ Ցերեկ եմ գրել։ «Կրանիյ դարոժնիկ» լրագրումն եմ գրել։

ԿՈՍՏՅԱ

Դե ախը հրաշալի նախագիծ է, Պրիբելյովն ազնիվ, փորձված ինժեներ է, իսկ դու ապուշդ նրան հալածում ես։ Այ, կդցեն քեզ ստորին աշխատանքի, խորխորատները։

ՅԱԿՈՎ

Ստորին... խորխորատները։

ԿՈՍՏՅԱ

Բայց և այնպես դու ի՞նչ ես դրել։

ՅԱԿՈՎ

Իմ գաղտնիքն է — իմ գործն է։ Գծիր պլանն, ասում եմ։

ԿՈՍՏՅԱ

Չեմ գծի, չեմ ուզում մասնակցել ապուշության մեջ։

Ամառանոցից մոտենում է Ռայան.

ՅԱԿՈՎ

Ռաֆ՛էկա, ոգնեցեք խնդրում եմ։ Պետք է գծագրությունն ուղղել

Ցույց է տալիս.

ա՛յ, այս տեղը։ Մի բայն կայարանից առաջին յերկու կիլոմետրը։ Շարունակությունն առաջվա նման է։

ՌԱՅԱ

Իսկույն կանեմ։

Գծագրությունը տանում է ամառանոցը։ Շեմքում դառնում է։ Հայացքները հանդիպում են։ Աբաց դարձնում են Յակովը վերցնում է կարն փայտերից մեկը յեվ սկսում է կացնով սրել ծայրը։

ՅԱԿՈՎ

Աշխատանքի բաշխում.— յես կաշխատեմ, իսկ դու կտխրես։

Ծիծաղում է։

Կեցցես, Մանյա, հրաշալի յե ձեռք առել։ Դերասանուհի յե.—«յերեխա կլինի»։ Ցավ բոլորը հավատացել են։ Ցես ել հավատացի... «ում յերեխան է» — ես կողմ կասկած, են կողմ կասկած։ Լավ եր՝ Մոսկվայից խուզարկող շուն չբերել տվին.— շունն ել չեր իմանա՝ ում գտներ։ Որագիրը... Ո՛յ։ Իսկ ծերունիները, Ռայան, Սենկան, հիմա յել վոչինչ չեն իմանում։ Ուղղակի կոմի-տրագեդիա յե։ Կոստյա, յե՞րբ է հարսանիքը։

ԿՈՍՏՅԱ

Վոչ մի հարսանիք ել չի լինի։

ՅԱԿՈՎ

Նո՛ւ։ Ե՞լի քո մեջ ինչ վոր մեկը դարբնեց։

ԿՈՍՏՅԱ

Ցես Մանյային սիրում եմ... բայց ամուսնանալ...

Գոռում է։

Ցես սրիկա չեմ։ Ցերը նա այդ վիճակումն եր, յես նրան վիրավորեցի, յես փախա, յես ինձ ցույց տվի վորպես ստոր սողուն... Իսկ հիմա, հիմա ամեն մեկն ել կամուսնանա։ Ավելի լավ կլիներ յեթե իսկապես լիներ այդ անիծյալ ուրիշի յերեխան։ Վա՛յ, յես այլևս ամուսնանալ չեմ կարող։

ՅԱԿՈՎ

Կոստյա, յես սխալվել եմ քո վերաբերմամբ, դու վոչ Լերմոնտովն ես, վոչ ել Լեվ Տոլստոյը — դու Դոստոյեվսկին ես։ Նստիր գրիր «Իդիոտը», քեզ մոտ լավ դուրս կգա։ Դու չե՞ վոր գնում եյիր նշանվելու։

ԿՈՍՏՅԱ

Այո գնում եյի... միայն տեղ չհասա։

Գոռում է։

Նա չգիտե, չե՞, վոր յես գնում եյի։ Դե գնում եյի, իսկ ուր եյի գնում, ապացուցել չեմ կարող։

ՅԱԿՈՎ

Յես վկա յեմ։

ԿՈՍՏՅԱ

Յես վկաների ներկայությամբ չեմ ուզում ամուսնանալ։

ՅԱԿՈՎ

Կգնաս Մանյայի մոտ։

ԿՈՍՏՅԱ

Չեմ գնա։

Յակովը ձողը դնում է Կոստյայի գլխին յեվ բարձրացնում է կացինը։

ԿՈՍՏՅԱ

Ի՞նչ ես անում։

ՅԱԿՈՎ

Ուզում եմ քո գլխին այս ձողը տաշեմ. — ասում են ոգնում է։

Կոստյան ազատվում է։

Գնա առանց վորևե միստիկայի։

Ուղղում է Կոստյայի շապիկը յեվ գլխարկը։

Ինչո՞վ չե Դուկլաս Ֆերբենկսը։ Գնա։

ԿՈՍՏՅԱ

Հիմա։ Այ քեզ հիմար... Հենց ուղղակի գնամ։ Դու այնուամենայնիվ հաստատիր, վոր յես յերկրորդ անգամն եմ գնում նշանվելու։

Գոռում է։

Յեվ խնդրում եմ՝ մի տնկվի այստեղ։ Սա ինտիմ գործ է։

ՅԱԿՈՎ

Խնդրեմ։

Վերցնում է ձողերը յեվ գնում։

ԿՈՍՏՅԱ

Հիմա Պրիբելյովը ճանապարհս չի կտրի... Միայն թե Մանյան ների։

Յերկու քայլ է անում դեպի ամառանոցը։ Նրա ետևից կտրում է Սենեչկա Պերչատկինը, վորին ուղեկցում ու պահում են Ագրիպինա Սեմյոնովնան, Ռըկվինդը յեվ յերիտասարդ Բարեկամը։ Կոստյան կանգ է առնում։

ԱԳՐԻՊԻՆԱ

Բռնեցեք, բռնեցեք նրան։ Նա աննորմալություններ կանի...

ԲԱՐԵԿԱՄ

Սյոմկա, թող...

ՍԵՆԵՉԿԱ (Ցատկելով պատշգամբի աստիճանների վրա)։

Յեթե չպոկվեք ինձնից, յես ձեր բոլորի կերպարանքներից կապիկներ կըշինեմ։

ԱԳՐԻՊԻՆԱ

Դերասանուհու հետ կամուսնանաս ուրիշի յերեխայով։

Կոստյան հարձակվում է Սենեչկայի վրա, բայց Ռըկվինդն ու Բարեկամը հեռացնում են նրան։

ԱԳՐԻՊԻՆԱ

Ծավալեցեք նրա առջև փաստաբղուները։

ՌԸԿՎԻՆԴ

Ընկեր Պերչատկին, դուք կճանաչեք ինձ։ Յես ատամնաբույժ Ռըկվինդն եմ, դուք չե՞ վոր ինձ մոտ աշխատում եք։

Մոտենում է Սենեչկային։

ԱԵՆԵՉԿԱ

Իրականապես յես ձեզ համար ատամներ եյի շինում, իսկ այսոր կարող եմ ընդհակառակը՝ ջարդել։

Շարժում.

ՌԸԿՎԻՆԴ

Յես ձեր տարորինակ խելառությունների մեջ չեմ խառնվում։ Բայց տվեք ինձ ծնոտները, հիվանդները չեն սպասում։ Ձերդ վողորմածության պատճառով քննադատ Զաբորովը վոչ միայն խոսում և ֆսֆսացնելով, այլ նույն իսկ գրում և ֆսֆսացնելով։ Ո՛յ, յես Զաբորովի մասին չեմ մտածում, նա քննադատ է, նա ընտելացել է և առանց ատամների։ Բայց տվեք ինձ Իվանովի կամրջակները։ Իվանովը դատարանումն է ծառայում, նրան ատամները ամեն որ են հարկավոր։

ԱԵՆԵՉԿԱ

Վոչինչ, թող հանգստանա։

Դառնում է դեպի տուն։

Բաղաքացուհի Կարաուլովա գլխատառով...

ԲԱՐԵԿԱՄ

Ա՛յսվկա թող...

ԿՈՍՏՅԱ

Կանգ առեք, յես առաջինն եմ յեկել, հերթը իմն է...

ՍԵՆԵՉԿԱ (Գլուխը դարձնելով)

Յեթե ելի վորևե մեկը ընդդիմադրի, սուրը կապիկ կշինեմ։

Ամառանոցից դուրս է գալիս Մանյան։ Ասենչկան միջին աստիճանի վրա ծունկ է չոքում։ Մի ձեռքով ցույց է տալիս Մանյային, մյուս ձեռքով՝ իրեն ուղեկիցներին։

ՍԵՆԵՉԿԱ

Ահա յերկինքը, իսկ ահա, մեղմ ասած... գետինքը։ Բաղաքացուհի, անցյալ շաբաթ դուք մի սովորական և հասարակ որիորդ եյիք։ Ցեվ յես ասացի ձեզ իմ սիրո մասին։ Մի՞թե նրանք բառեր եյին։ Դրանք սեմիչկի կշեռք եյին...

Թքելով։

Այն ժամանակ յես բոլորը փչել եյի։ Սակայն հիմա, յերբ ձեր մեջ հայտաբերված է խորհրդավոր մի ծծկեր, յերբ դուք հպարտորեն փայլատակեցիք, ինչպես փարոսն իր ներսի լամպով, ձեր «այդ լուսավորության» շնորհիվ, յես տեսա ինչպես կարգն է, սրանց ապականված ռեխները։

Ուղեկիցներին։

Վոչինչ։ Ցեվ յես հասկացա, թե ինչ է սերը։ Դուք ինձանից նոր քաղաքացի յերևան բերիք։ Հրավիրում եմ ձեզ, վորպես խստիվ որինական կնոջ։ Ցեվ յեթե վորևե մեկը ժպտա ձեզ վրա, ապա յեթե նա իմ հարազատ մայրս էլ լինի, յես նրան այլակերպ դողոշ կշինեմ։ Ահա։

Տնից դուրս են գալիս Ոլգա Պավլովնան յեվ Կարաուլովը։

ՄԱՆՅԱ

Սենեչկա, սիրելիս։ Դուք ինձ ուղղակի հուզեցիք։ Դուք յերեք որում աճել եք... Շնորհակալ եմ։ Միայն թե ինչո՞ւ ամուսնանալ։ Ձեզ այդ չի սազում։

ՍԵՆԵՉԿԱ

Կսազի, են ատվածը՝ կսազի։

ՄԱՆՅԱ

Բայց դուք իմ լավագույն ընկերն եք։ Ներս յեկեք ձեզ մի բան ցույց տամ։

Գնում է ներս։ Սենեչկան ուզում է գնալ նրա յետեվից, բայց կանգ է առնում։ Ծերունիներին.

ՍԵՆԵԶԿԱ

Դե զոքանչ ու աներ, շատ թանգ նստեցիք դուք ինձ վրա։ Մի կասկածեք։ Վերցնում եմ ձեզ իմ խնամակալության ներքո։

Հպարտորեն նայում է իր ուղեկիցներին։

Բաղքենիներ։

Գնում է ներս։

ԱԳՐԻՊԻՆԱ

Դուք տղամարդիկ եք և չկարողացաք հետ պահել նրան։

ԲԱՐԵԿԱՄ

Չես պահի։

ՌԸԿՎԻՆԴ

Հեռանանք պլենում գումարենք թիվերում։

Գնում են։ Կոստյան հուսահատված նստում է նստարանին։

ՈՅԼԳԱ

Յերեկ մեկը, այսոր՝ մյուսը... Կարծես կինոյում վերջին սեանսին լինես. — շուռ են տալիս, պտտում են. — նստած ես ու բան չես հասկանում... Ի՞նչ ես ասում՝ գնանք, — սրբապատկեր, աղ ու հաց է հարկավոր պատրաստել։ Որհնենք։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Հառաչելով)

Որհնենք։

Գնում են ներս։ Գալիս է Յակովը։ Պտտվում է Կոստյայի շուրջը։

ՅԱԿՈՎ

Դու ի՞նչ է դեռ չե՞ս գնացել։

ԿՈՍՏՅԱ (Լալիս է)

Գնացի... Միայն թե չհասա։ Դարձյալ ճանապարհս կտրեցին։ Սենկան... Բոլորը — նոր մարդիկ են... միայն յես եմ յերբորդ գիլդիայի...

Վնռականորեն գնալով։

Ամեն ինչին վերջ և ֆինալ։

ՅԱԿՈՎ (Գոռում է նրա յետեվից)

Միջնորդությունը ինձ վրա յեմ վերցնում։ Լրագիր առ։ «Կրասնի դարոժնիկ»։

Տնից դուրս է գալիս Ռայան, Յակովի սեվագիր գծագրով։

ՌԱՅԱ

Յաշա, յես հստեղ չեմ ջոկում, — սա առվակ է։

Նստում է։

ՅԱԿՈՎ

Առվակ է։ Ա՛յ, Ռայիչկա, Կովկասում առվակներ կան, հա... Մեկ ել տեսար ել չկա. — գետնի տակ մտավ։ Նորից աղբյուրի պես դուրս բղխեց։ Յեվ թափվում է, կախվում է ժայռից վորպես արծաթե ժապավեն։ Յեվ շուրջը քարերի վրա խլեզներ, խլեզներ... տաքանում են արևի տակ։ Մեր գետերը սպիտակ են... յերկնագույն, դեղին... Իսկ ճանապարհները՝ ոսկեթական... Ռազմավիրական...

ՌԱՅԱ

Յես յերբեք չեմ յեղել Կովկասում։

ՅԱԿՈՎ

Ո՛խ, յերջանիկ եք...

ՌԱՅԱ

Ինչով։

ՅԱԿՈՎ

Ախր դուք կգնաք, կտեսնեք Կովկասը... Առաջին անգամ։ Ամենաչքնաղագեղ յերկիրն է, այս կլորագնդի վրա... Ե-Ե... Աջարիստան, Բաթում... Յերբ վոր կանգնած ես ծովից բարձր և տեսնում ես, թե ինչպես հոսում են ջրային ճանապարհները... Յերբ ողը հստակ է և

վոսկյա, արևի մառախուղից, յերբեք չի վերջանում... այն ժամանակ մեծանում են աչքերդ... և հոգիդ, յեթե այսքան է

Ցույց է տալիս:

ա՛յ, այսքան է դառնում — ահա:

Շարժում:

Ամուսնացեք, ինձ հետ, խնդրեմ:

ՌԱՅԱ (Վեր կենալով)

Ի՞նչ:

ՅԱԿՈՎ

Ինձ հետ: Կովկաս կգնանք:

Ռայան ձեռք է մեկնում Յակովին, անմիջապես թողնում է յեվ փախչում դեպի ամառանոցը:

Վազեց տոմսեր առնելու:

Գնում է հակառակ կողմը: Գալիս են. — Ագրիպինա Սեմյոնովնան, Ռըկվինդը յեվ Բարեկամը: Ամառանոցից հետ-հետ նահանջելով գալիս է Մանյան, նրա յետեվից՝ Սենեչկան, շփոթված, բարացած ժպիտով, նրա ձեռքերին Մանյայի ոբագիրն է:

ՍԵՆԵՉԿԱ

Ներեցեք... Այս ինչպե՞ս թե: Կնշանակի՝ ռեալ, փաստական մանկիկ չկա՞: Հետևապես դուք ինձ ձեռք եք առել ինչպես թատրոնում: Ուրեմն դուք հերոսական քաղաքացուհի չեք — այլ սովորական որիորդ: Շաբլոնային շտամպ: Բանից դուրս է գալիս, վոր յես սխրագործության փոխարեն ախմախագործություն եմ արել: Ախր յես գիշերները ինձ վրա նայելով առանձին հաճույք եյի ստանում, հեծկլտում եյի... Սկսում եյի ինքս ինձ հարգել: Ինքս ինձ հետ «դուք»-ով եյի խոսում: Ցեվ հանկարծ՝ մեկ-յերկու — կուկուրեկու: Չկա մանկիկը:

իմ սխրագործությունը: Խաբեցին: Պատվաղուրկ արին: Հետ տվեք իմ ուրիշի յերեխան:

Հրապարակ է գալիս Զինան: Տնից պատշաճ ձեվով դուրս են գալիս Կարաուլովը յեվ Ոյլգա Պավլովնան: Կարաուլովի ձեռքին սրբապատկեր կա: Ոյլգան բերում է ափսե, վրան՝ աղ յեվ հաց:

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Հանդիսավոր)

Մոտեցեք, զավակներս:

ՍԵՆԵՉԿԱ

Թագցրեք սրբապատկերը: Հեռացրեք պայտկը: Հրաժարվում եմ:

Ծերունիները նստում են:

Խաբեցին ինձ ինտելիգենտական տան մեջ:

ԶԻՆԱ (Ուղեկիցներին)

Իսկ ի՞նչ է վոր: Իսկ ի՞նչ է վոր: Միթե յերկրորդն ել է յերես դարձրել:

Գալիս է Յակովը: Տեսնում է ծերունիներին:

ՅԱԿՈՎ

Շուտափույթ ոգնության կառքը...

Բարձրացնում է Ոյլգա Պավլովնային յեվ Կարաուլովին

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Պոկվելով յեվ դիմելով Սենեչկային)

Յես... յես մենամարտի յեմ կանչում ձեզ, վորպես խուլիգանի:

ՅԱԿՈՎ

Միայն սեկունդանտի միջոցով:

Տանում է Կարաուլովներին:

ԱԳՐԻՊԻՆԱ

Սենեչկա գնանք, յես քեզ կսփոփեմ և սփոփանքներով կհանգստացնեմ:

ԲԱՐԵԿԱՄ

Սյոմկա, հայդա:

ՌԸԿՎԻՆԴ

Ընկեր Պերչատկին,

Ցեղունգներով խփելով ատամներին:

գոնե քննադատի ատամները տվեք

ՍԵՆԵԶԿԱ (Մատնացույց անելով նախ Մանյային, ապա ուղեկիցներին)

Ցերկինքը վարկաբեկվել է, իսկ գետինքից սիրտս է խառնում: Ցեվ կախված եմ յես, վորպես... ծաղիկ մի երկու բևեռների միջև:

Ուղեկիցներին:

Մի սպասեք, ըզեզն այլևս չի վերադառնա ձեզ մոտ:

Գնում է: Ուղեկցողները վազում են նրա յետեվից:

ԶԻՆԱ (Մանյային)

Ինչո՞ւ յե այսպես ստացվում, հա՞: Դու, այ, և՛ գեղասանուհի յես, և՛ լավիկն ես, բայց բախտ չունես:

ՄԱՆՅԱ (Հարձակվելով Զինայի վրա յեվ դուրս վանելով նրան բեմից)

Ճիշտ չե, յես ունեմ բախտ, ունեցել եմ և կունենամ: Ավելի քան դու ունես:

Մնալով մենակ:

Բախտս կգա թատրոնում: Հիմա յես ճանաչում եմ կյանքը: Սիրածս գնաց... Կոստյա... Ընկերուհիներս չարախնդում են... Մինչև անգամ, հայրս, կարծեմ, պատրաստ է ծախել ինձ այս անիծյալ տան համար: Բայց յես հասկացա դերս... «Ի՞նչ է սպասում իմ զավակին, փոքրիկ դեռ լեզուն չբացված, նա վողորմություն պետք է խնդրի... Ցես տեսնում եմ, տեսնում եմ՝ ահա նս մեկնում է իր նիհար կեղտոտ թաթիկը, տեսնում եմ՝ ինչպես անցորդները դիպչում են նրան իրենց մուշտակների հաստ փե-

շերով... Պատառոտած շապկի արանքներից տեսնում եմ նրա սուր, քաղցած ուսերը... Վոչ, վոչ, միայն վոչ այս»:

Ընկնում է նստարանի վրա, լալիս է, բարձրանում է:

Հիմա յես կխաղամ: Ահա նա, իմ յերեխան... փոքրիկ, կենդանի, ջերմ... Այստեղ է, կրծքիս մեջ: Ցես միայնակ եմ բեմի վրա: Դահլիճում լռություն է: Հիմա չեն համարձակվի հաղալ:

Տնից դուրս է գալիս Ցակովը: Մղում է սրբիչը, վայր է դնում սրվակը:

ՅԱԿՈՎ

Ծերունիներին բոլորովին ցնցել է: Հայտարարեցեք նրանց, վոր ձեր դերությունը կեղծ է: Հերիք է կոմիտրակեդիան:

ՄԱՆՅԱ

Այո, խաղալ պետք է բեմի վրա: Ցես կխոստովանեմ... Բայց Ռայային ինչպե՞ս ասեմ: Ցես չեմ հանդգնի... Ցաշա, սիրելիս, դուք խոսեցեք նրա հետ.— ապացուցեք, վոր նա կկործանվի յերեխայի հետ միասին: Աշխատանք չունի: Հայրը ֆանատիկոս է, նա կսպանի Ռայային:

ՅԱԿՈՎ

Լավ: Ցես բոլորը կհայտնեմ: Տվեք Ռայային:

ՌԱՅԱ

Մանյան ուզում է, վոր դուք խոսեք ինձ հետ...

ՅԱԿՈՎ

Վ. վոչ, այդ յես ինքս եմ ուզում: Թույլ տվեք, խընդրեմ, վորպեսզի ձեր տղան, չգիտեմ՝ ումն է, բայց ինձ նման լինի:

ՌԱՅԱ

Ինչո՞ւ տղան:

ՅԱԿՈՎ

Ասում եմ տղա, ուրեմն տղա յե։ Խոստանում եմ քեզ, վոր յես Նրան իմ յերեխաներից չեմ ջոկի։ Իսկ յերեխաներ մենք շատ կունենանք։ Ինձ միայն յերեք տղա յե հարկավոր։ Մեկը, փառք աստծո, արդեն կա։ Նա ինժեներ կլինի։ Մյուսը՝ ոդաչու։ Իսկ յերրորդը՝ գրող։

ՌԱՅԱ

Ինչո՞ւ գրող։

ՅԱԿՈՎ

Ե՛, ընտանիքն առանց այլանդակի կլինի՞։

ՌԱՅԱ

Ինչո՞ւ յես այն ժամանակ քեզ չնկատեցի, հասկացա։ Հիմա յես ինձ շատ լավ եմ զգում... վեց ամսվա ընթացքում առաջին անգամ յերգել եմ ուզում։

ՅԱԿՈՎ

Յերգիր, խնդրեմ։

ՌԱՅԱ

Յես ամբողջ կյանքովս յերեխատապարտ պիտի լինեմ քեզ։

ՅԱԿՈՎ

Զարժե, յոլա կգնանք։

Ռայան գրկում, համբուրում է Յակովին։ Նրանք արագորեն բաժանվում են։ Յակովը ամառանոցի անկյունի յետեվը կանգ է առնում յեվ կամացուկ ձեռք է տալիս իր այտը, կարծես ստուգելով թե «այտտեղ է համբույրը»։ Ռայան հանդիպում է ներս յեկող Պրիբելյովին։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Այսոր դուք ինչ գեղեցիկն եք, կենսուրախ ու յերջանիկ։

ՌԱՅԱ

Այո։

Յակովը լռում է։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Յես նայում և չեմ հասկանում՝ ինչպես կարող եյի յես հեռանալ ձեզնից։ Ռայա, Ռաֆոսա, Ռայո, յես սրիկա յեմ...

ՌԱՅԱ

Չեմ վիճում։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Վերադարձրեք ձեզ ինձ... Չե՞ վոր յես համբուրել եմ այդ շրթունքները... Նրանք իմն են...

ՌԱՅԱ

Վոչ, թույլ տվեք անցնել։

ՊՐԻԲԵԼՅՈՎ (Բռնում է նրա ձեռքը)

Մեզ կապում է յերեխան։

Յակովը բարացել է։

Յես կամուսնանամ... Վոչ, մի կարծեք, կամուսնանամ այս անգամ իսկապես յերկարատև։ Ռայա, յես ծերանում եմ, յես այլևս ձեզ չեմ դավաճանի... Հիշեցեք...

ՌԱՅԱ

Թողեք ձեռքս։ Յես յերբեք ձեզ չեմ մոռանա, վորպես մի վատ յերազ։ Յես սիրում եմ մի հիանալի մարդու։ Նա համարձակ է, ուժեղ, գեղեցիկ... Հեռացեք, մի փչացնեք իմ ուրախությունը։

ՊԵՐԻԲԵԼՅՈՎ (Նորից բռնում է նրա ձեռքը)

Չեմ թողնի...

Յակովը վնասաբար դուրս է գալիս անկյունից։

ՅԱԿՈՎ

Յեթե յես ձեզ նման մեկին հանդիպեյի անդունդի գլխին, լեռնային կածանի վրա, վորտեղ յերկուսի համար նեղվածք է, յես այսպես կանեյի...

Մի քայլ հետ է գնում յեվ կտրուկ ձեռքը հետ է տանում։

Անցեք խնդրեմ։

Պրիբելյովը բեվով ծածկված, կորացած հեռանում է։

ՅԱԿՈՎ

Խնդրեմ։

Պառզա։

Յես բոլորը լսեցի։ Ուրեմն դա Պրիբլյոմն է, նրա զավակն է։

ՌԱՅԱ (Արդարանալով)

Այն ժամանակ յես կուլյր եմ յեղել։

Յակովը պպզելով խփում է ծնկներին, հրիրում է։

ՅԱԿՈՎ

Պրիբլյոմն է։ Ո՛յ, շնորհակալ եմ։ Ո՛յ լավ է։ Մի բանից եյի վախենում, վոր առաջինը — յերիտասարդ, գեղեցիկ կլինի, դու նրան կհիշես։ Հիմա հանգստացա։ Պրիբլյոմը... Յես ավելի լավն եմ։

Պարում է։

Ռայան փախավ տուն։ Հրապարակի մյուս ծայրին յերևում է Ալեքսանդր Միրոնովիչը։ Նրա հագին մի հնամաշ, բայց մաքուր կոստյում։ Հանում է կեպկան, գլուխը սրբում է թաշկինակով։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Բարի յեղեք ասել, արդյոք այս ամառանոցում չի՞ ապրում մի յերիտասարդ գեղեցիկ աղջիկ, Ռաիչկա անունով, և նկատեցեք, վոր այս բանը արդեն քսանվեցերորդ անգամն եմ հարցնում։

ՅԱԿՈՎ (Կողմ)

Սոլիդ ավանդատու յե,

Ալեքսանդր Միրոնովիչին։

Նստեցեք, քաղաքացի։ Յերիտասարդ, գեղեցիկ։ Ռաիչկան։ Դե, ինչպե՞ս չե, ապրում է... Միայն հիմա նա զբոսնելու յե գնացել։

Դիտում են իրար։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Յեվ դուք լսվ եք ճանաչում Ռայիչկային։

ՅԱԿՈՎ

Մենք ախր մեկնույն ինստիտուտումն ենք սովորում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Այդպես, այդպես... Ընկերներ եք, կոլեգաներ... Ուրեմն յես ձեզ կասեմ, թե ով եմ յես։ Յես Ռայայի քեռին եմ։

ՅԱԿՈՎ

Մո՞ր կողմից։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Դե հոր կողմից քեռի չի լինում։

ՅԱԿՈՎ (Թեթևացած)

Յես կարծեցի հայրիկն եք։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Հայրի՞կը։ Յեվ ինչո՞ւ պետք է նրա հայրը քարշ գար այստեղ այս շոգին։ Նա հիմա նստած է Մոսկվայում, լուսամուտի առջև, կնճռոտել է իր ամբողջ դեմքը և ժամացույց է նորոգում։ Յեկել եմ յես՝ քեռին։ Ուրեմն դուք Ռայիչկայի ընկերն եք։

ՅԱԿՈՎ

Ընկերն եմ։ Ղարդաշը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ղարդաշ։ Դա լավ ընկեր է։

ՅԱԿՈՎ

Ամենաառաջինը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ուրեմն յես ձեզ կխոստովանեմ։ Ռայայի հայրը հուզվում է։ Նրա ականջին բան մտն է հասել։ Յես քեռին եմ, ամեն բան գիտեմ... ամբողջ պատմությունը։ Բայց հայրն ել մի թեթև գլխի յե ընկնում։

ՅԱԿՈՎ

Այդ վատ է։ Ասում են՝ նրա հայրը գաղան է։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Գաղմն։ Ռայայի հայրը գաղմն։ Ցույց տվեք ինձ, վո՞ր անզգամն է այդ ասել։

ՅԱԿՈՎ

Վոչ բոլորովին գաղան, մի քիչ գաղան։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Շնորհակալ եմ այդպիսի «մի քիչ»-ի համար։

ՅԱԿՈՎ

Այդ պապաշան խղուր է հուզվում։ Հասկացրեք նրան, վոր Ռայայի յերեխան լավ մարդու ձեռքի տակ կլինի։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ռայայի յերեխա՞ն։ Ո՞խ։

Բռնում է սիրտը։

ՅԱԿՈՎ

Ի՞նչ յեղավ ձեզ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ինձ վոչինչ չեղավ, բայց հորը կլինի։ Ցերը վոր նա լսի, ավելի վատ կլինի. յես ճանաչում եմ նրան։ Ցերբ՞խա։ Ցեվ վո՞ր տեղից։ Դուք գուցե կա՞տակ եք անում, իսկ յես քիչ մնաց մեռնեյի... Այսինքն՝ հայրը, հայրը կարող է մահանալ այդ տեսակ թեթև ու մեղմ յերգիծանքից։ Թույլ տվեք փոքր ինչ ընտելանալ։

ՅԱԿՈՎ

Խնդրեմ։ Իսկ դուք լսե՞լ եք, վոր Ռայան ամուսնանում է։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Հրաշալի կարգ ու կանոն է։ Առանց այն ել կարծես ամեն բան շուռ են տվել... Մի՞թե դժվար է նախ ամուսնանալ և հետո միայն...

ՅԱԿՈՎ

Այդ բանում նա՝ փեսացուն է մեղավոր. նրան գործուղման եյին ուղարկում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Մի՞թե գործուղումից առաջ դա անհրաժեշտ է։ Վո՞ր տեղ է հիմա այդ փեսացուն։ Ո՞վ է այդ փուչը։ Խընդրում եմ՝ միանգամից պատմեք, չափազանց հետաքրքիր է։

ՅԱԿՈՎ

Վոչինչ, մարդ է, ելի։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Բայց և այնպես, նա վորևե բանով զբաղվում է, թե՞ ուղղակի կինոյի աշխատող է, դեղին ակնոցներով։

ՅԱԿՈՎ

Մի՛ վիրավորեք, խնդրեմ։ Նա մեծ գործ է անում,— ճանապարհներ, փողոցներ է անցկացնում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ուրեմն, փողոցային փեսացու յե։ Իսկ չի՞ կարելի մի նայել նրա վրա։ Թեկուզ և պրոֆիլից։

ՅԱԿՈՎ

Դուք, քեռի՛, զբոսնեցեք, յես կկանչեմ նրան։

Յակովը գնում է դեպի տուն։ Ալեքսանդր Միրոնովիչը հակառակ կողմը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Մեր գլխին պայթեց և՛ յերեխան, և՛ փեսացուն և՛ բոլորը հայտարարական կարգով։

Անհետանում է թփերում։

ՅԱԿՈՎ

Ռա՛յա, Ռայի՛չկա։

Ռայան դուրս է գալիս պատշգամբ։

Ռայի՛չկա՝ քո քեռին է յեկել։

ՌԱՅԱ

Ի՞նչ քեռի, յես քեռի չունեմ։

ՅԱԿՈՎ

Չունե՞ս։ Դու լավ հիշիր, գուցե գտնվի։

ՌԱՅԱ

Ցեռ գիտեմ չե՞ւ։ Ի՞նչ քեռի, վո՞ւրտեղից է յեկել։

ՅԱԿՈՎ

Պառավուն քեռի։ Մորդ կողմից է յեկել։ Ա՛յ թփերի միջից յերևում է։

ՌԱՅԱ

Դա իմ հայրն է։

Վազում է դեպի Ալեքսանդր Միրոնովիչը։ Գալիս է Կոստյան։

ԿՈՍՏՅԱ

Ցիրը են արձանագրվում։

ՅԱԿՈՎ

Ո՞վ, ում հետ։

ԿՈՍՏՅԱ

Մանյան Սեմյոն Պերչատկինի հետ։

ՅԱԿՈՎ

Առայժմ միայն Սենկան է արձանագրվել։ Արձանագրեց իր հիմարությունը և գնաց։

ԿՈՍՏՅԱ

Ի՞նչ, ինչպե՞ս։ Ո՞ւր գնաց։

ՅԱԿՈՎ

Հեռու։ Իսկ հիմա հանիր շալվարդ։ Հանիր խընդրում եմ։

ԿՈՍՏՅԱ

Այսինքն՝ ինչպե՞ս թե։

ՅԱԿՈՎ

Ուղղակի հանիր։ Տուր փոխարինարար սպիտակ շալվարդ։ Գնում եմ ներկայանամ այդ... աներոջս...

ԿՈՍՏՅԱ

Ի՞նչ անե...

ՅԱԿՈՎ

Կարող ես դու առանց հոգիբանության հանել շալվարդ։

Կոստյային տանում է։ Մյուս կողմից գալիս են Ալեքսանդր Միրոնովիչը նրա յետեվից՝ Ռայան։

ՌԱՅԱ

Պապա, հայրիկ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ցեռ ձեզ համար հայրիկ չեմ։ Ձեր հայրիկը կենդանարանական պարտիզումն է։ Նստած է վանդակի մեջ, նա գաղան է։ Կամ թե՝ վոչ — ձեր պապան Տրետյակովսկի գալերեյայումն է. կախված է վոսկեզոծ շրջանակի մեջ — նա Իվան Ահեղն է, վորն սպանում է... իր աղջկան։ Գնացեք եկսկուրսիայի հետ զմայլվեցեք։ Եկսկուրսիայի հետ ավելի եժան է։

ՌԱՅԱ

Միայն մի՛ հուզվիր։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ցեռ չեմ հուզվում, յես արդեն ծառս եմ լինում։ Ցեռ գաղան եմ։ Ինձ նմանին բանտ պիտի նստեցնել։ Ցեռ պրոցես ունեյի թոքերումս, թող հիմա գերագույն դատարանում լինի։

ՌԱՅԱ

Հայրիկ, սիրելիս։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ռայիչկա, աղջիկս, չե՞ վոր յես փռել եմ քո անկողինը, սանրել եմ քո վարսերը... Դու ճշմարտասեր աչքեր ունեյիր... Ցեվ ահա յես չեմ ճանաչում իմ աղջկան... Առաջին հանդիպած... դարդաշն այստեղ նստարանի վրա ինձ թոռնիկ և մատուցում։ Ահա թե ինչպիսի ժամանակներ են։ Իսկ մենք ապրում ենք։

Նրանց մոտենում է Յակովը՝ սպիտակ անդրավարտիքով յեվ փողկապով։

Բանից յերևում է, վոր 19 տարի աղջկաս վրա դող-դողալու համար

Գրպանից լրագիր է հանում։

Ինձ պետք է խարազանել մամուլում խոշոր տառերով։

ՅԱԿՈՎ

«Կրասնի դարոժնիկ»

Վերցնում է յեվ արագ բաց անելով կարդում։

Կա։

Ալեքսանդր Միրոնովիչը զարմացած է։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ընկեր քաղաքացի... Դուք խոստացաք բերել փեսա-ցուցին։

ՅԱԿՈՎ (Ծալելով թերթը)

Ինչու՞ բերել, նա ինքը կգա։

Թփի շուրջը պտտվելով։

Հեշտ է ասել... Ահա և յեկավ։ Մի՞թե վատն եմ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ինչպե՞ս։ Դուք չե՞ վոր միայն են բանն եյիք... ղարդաշը։

ՅԱԿՈՎ

Դուք եյ միայն են բանն եյիք... քեռին։ Ցես հո չեմ նեղանում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Այս ինչ խորամանկ սերունդ է։

ՅԱԿՈՎ

Ներեցեք, դուք եյ ձևացաք ինչպես ծեր աղվես-աղվեսիկ։

Ալեքսանդր Միրոնովիչը պտտվում է Յակովի շուրջը, ճայելով ամեն կողմից։ Ռայան աչքերը հառում է մերթ հոքը, մերթ՝ Յակովին։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Թույլ տվեք զոնե հարցնել՝ ինչպիսի կրոնի յեք պատկանում։

ՅԱԿՈՎ

Աթեիստ եմ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Դե այդ հասկանում եմ։ Անկետներում մենք բոլորս եյ աթեիստներ ենք։ Իսկ ինքներդ ձեզ համար։

ՅԱԿՈՎ

Ինքս ինձ համար եյ եմ աթեիստ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Սրան չես շեղի։ Իսկ ձեր հայրը վո՞ր կրոնին եր պատկանել։

ՅԱԿՈՎ

Մահմեդական։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ավելին չեյի եյ սպասում։ Մահմեդական... Ռայա, բայց ըստ որենքի նա կարող է քառասուն կին ունենալ։

ՅԱԿՈՎ

Ճիշտ է։ Միայն Մուհամմեդը հրամայել է, յուրաքանչյուր կնկան առանձին սենյակ տալ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Այդ դեպքում սարսափելի չե։ Իսկ ինչ կասեք դուք Խորհրդային իշխանության համար։

ՅԱԿՈՎ

Ամեն բան։ Ամեն բան կասեմ ի պաշտպանություն Խորհրդային իշխանության։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Սրան չես շեղի։ Ո՞խ, և յես պետք է անիծեմ սրանց։

Չգիտեմ՝ ինչու չեմ կարողանում։ Ցավ ինչ կարող եմ ասել։

Հառաչանքով ձեռք է պարզում Յակովին։

Շատ հաճելի յես։

ՅԱԿՈՎ

Խնդրեմ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Վա՛խ, հայրդ գազան է, նա կարող է կծել։

Գնում են յերեքով, գնալիս յերկու անգամ փոփոխում են տեղերը։ Իվերջո Ռայան գնում է մեջտեղով, Ալեքսանդր Միրոնովիչը յեվ Յակովը Ռայային գրկում, ձեռքերը դնում են իրար ուսերի։ Գնալով։

Բայց ինչու չեր կարելի գործուղղումից հետո։

Տնից դուրս են գալիս Կարաուլովը յեվ Ոյլգա Պավլովնան, վերջինիս ձեռքին, կիսատ գործված յերեխայի չեպչիկ։

ՈՅԼԳԱ

Ախը տներս քանդում են, կյանքներս հողի հետ են հավասարեցնում։ Մեռնելու տեղ ել չենք ունենա։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Շենք պետք է տան։ Ա՛յ, նոր հանրակացարաններ են կառուցում, ենտեղ ել կմեռ... կապրես...

ՈՅԼԳԱ

Յե՞ս։ Հանրակացարանո՞ւմ։ Հիմարանում ես դու ամառը։ Ել ինչու՞ համար են ինձ քշում։ Ինձ համար այս հին տան ամեն մի գերանը հարազատ է, յուրաքանչյուր տախտակը յես նրա ճռռոցից, ձայնից եմ ճանաչում։ Սերգե՛յ Պետրովիչ, հանձնիր Մանյային, թող ամուսնանա Պրիբլյովի հետ։ Ծունկ չոքենք մեր աղջկա առաջ... մեր կյանքից հաղիվ մի քառորդ ժամ է մնացել։ Ազատենք ամառանոցը։ Հավեր, հավեր ունեմ յես այստեղ։ Նրանք հանրակացարանում կկոտորվեն։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Այն ժամանակ ուրիշները կառնենք։

ՈՅԼԳԱ

Դե ախը յես նոր, ոտաբ հավերին կընտելանամ։

Գալիս է Մանյան։

Աղաչիր նրան...

ՄԱՆՅԱ

Թանկագին ծնողներ, վերջապես յես ուզում եմ բանալ ձեր աչքերը։

ՈՅԼԳԱ

Դու ավելի լավ է փակիր մեր աչքերը։ Թող մեռնենք մեր հարկի տակ։

ՄԱՆՅԱ

Կարիք չկա մեռնելու... Այդ ինչ եք անում։

ՈՅԼԳԱ

Չեպչիկ եմ գործում։ Միայն չափը չգիտեմ։ Չեմ իմանում՝ ինչպիսի գլուխներ ունեն այժմյան նորաձիները։

ՄԱՆՅԱ

Եղ ուրեմն իմ... յերեխայի համար է։

Գրկում է մորը, ապա մոտենում է հորը։

Ներիր, ներեցեք ինձ... յես չգիտեի դուք ինչպիսին եք... Միայն հիմա հասկացա, թե ինչ եմ արել յես... և ահա յես պետք է ասեմ՝ հայրիկ, կարող է պատահել, վոր յես բնավ ել յերեխա չունենամ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ի՞նչպես թե չունենաս։ Ինչու։ Այսինքն դու ուզում ես... Չհամարձակվես մտածել անգամ։ Յես քեզ խընդրում և հրամայում եմ.— վորպեսզի յերեխան լինի

Իհարկե թատրոնը գլխավորն է, բայց փոքրիկը չի կաշկանդի քեզ... Մենք, մենք կհոգանք... Զհամարձակվես մտածել անգամ։

Աղջկան մի կողմ է քաշում։

Ցես արդեն կապվել եմ նրա հետ...

Մոտենում է Ոլգա Պավլովնան։

ՈՅԼԳԱ

Մանյուշա, խղճա մեզ, ամուսնացիր Ֆեո...

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Ցես ասում եմ՝ Մաշա, մենք միայն անցյալն ենք լավ տեսնում։ Մենք յերկուսս հարյուր տասը տարին ենք լրացնում... Ժամանակներս ուշ է... յերեկո յե մեզ համար։ Իսկ քոնը առավոտյան ճանապարհ է, գնա և մեզ վրա հետ եկ մի նայի։ Գնա, մի վախենա, գնա...

Քնքշարար հրում է աղջկան դեպի պատշգամբ։ Մանյան գնում է։ Կարաուլովը վերցնում է պատշգամբից թավ ջուրթակը յեվ վերադառնում։

ՈՅԼԳԱ

Դու այդ ինչքա՞ր ասացիր նրան։

Կարաուլովը չպատասխանելով նստում է, թեքվելով թավ ջուրթակի վրա, ապա սկսում է նվագել հին մելամաղձոտ մի ռոմանս։ Հետեվյալ բառերը նա ասում է նվագելով, բայց վոչ վորպես մելոդեկլոմացիա այլ պարզ։ Յերբեմն բառերը ասում է ակամա յերկար պաուզաների ժամանակ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Զխանգարենք նրան, Ո՛յլա։

Նվագում է։

Հիշիր քեզ քսան տարեկան հասակում։

Ոյլգա Պավլովնան կամացուկ մոտենում է ամուսնուն։

Ինչ լաթն եյիր դու...

Նվագում է վոգեվորությամբ։ Ապա թողնում է թավ ջուրթակը, յեղնում է։

Ո՛ւյա, չխանգարենք նրան... և յեթե հարկավոր լինի գնալ այստեղից, թողնել տունը, մի՞թե մենք միասին չենք գնա։ Մի՞թե դու ինձ չես ընկերակցի։

Ոյլգա Պավլովնան լալիս է։

Ե՛, ե, պառավս բոլորովին խենավացել է։ «Ամառանոց», «տուն», «բանջարանոց»։ Տան կարիք չեմ զգում։ Ցես պարզապես Մոցարտի մոտ եկ գնալ։ Ունեմ։ Ցես իրեն՝ Բեթհովենի պալատումն եմ լինում... Բանջարանոց... Ծաղկանոց... Դե մի՞թե ինձ շատ հող է հարկավոր։ Մի կետ, միայն մի կետ, վորպեսզի թավ ջուրթակիս ծայրը հենեմ հողին։ Արվեստը ընակարան չի պահանջում։ Իսկ ձեռքը, մարմինը և ինքը յերաժիշտը — այդ բոլորը աղեղի շարունակությունն է։ Թքել եմ յես Պրիբլյովի վրա յերեկվանից եկ շատ։ Եկ չի տեսնի նա մեր Մաշային։ Ամառանոցս կքանդե՞ս։ Դե յես ինքս այն արմատից կպոկեմ։

Լուսամուտից պոկում է հնացած փեղկը յեվ գցում գետնին։

Հերիք

է, գրողի ծոցը։ Դեպի Մոսկվա։ Պառնով, հավաքիր կապոցդ։

Վազում է տուն։ Ոյլգա Պավլովնան՝ նրա յետեվից։

ՈՅԼԳԱ

Ահա և յերբորդ փորձանքը։

Մանյան դուրս է գալիս պատշգամբ։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Դրսից)

Մանյա, հավաքիր իրերդ։ Մոսկվա յենք մեկնում։

ՄԱՆՅԱ

Իսկույն, իսկույն... Ինչպես խճճվել եմ յես։ Ի՞նչ անեմ հիմա։

Գալիս է Ռայան։ Մանյան վազում է նրա մոտ։

Ռայա, ներիր... Յակովը քեզ ասաց։

ՌԱՅԱ

Այո, այո... Յես յերջանիկ եմ...

ՄԱՆՅԱ

Յերջանի՞կ։ Նա ի՞նչ է ասել քեզ։

ՌԱՅԱ

Նա միշտ ինձ հետ կլինի... Նա կսիրի իմ դավակին... «Յես ուզում եմ, ասում է, վոր մեր յերեխաները լինեն հարազատների պես»։ Մանյա, դու ամեն ինչ արիր ինձ համար։ Յես կպատմեմ նրան քո մասին... Նա կնստի իմ ծնկներին, կլսի ու կնայի իր մեծ, սև աչքերով՝ ինչպես Յակովի, այո, ինչպես Յաշայի աչքերը... Իսկ դու ի՞նչ ես ուզում, տղա, աղջի՞կ...

Թփերից դուրս է գալիս Ալեքսանդր Միրոնովիչը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ռայա, քո այդ Յակովը բանասաղծ է։ Ասում է, իբր թե կարելի յե ոդով յերկաթուղի անցկացնել։ Յեթե միայն հնարավոր լինի, ապա միայն Ոդեսայում։

Ռայան վազում է հոր մոտ։

ՄԱՆՅԱ

Մի՞թե յես նախանձում եմ նրան։ Այո, նախանձում եմ։ Նա տղա կունենա... իսկական... Իսկ յես կունենամ մի սառը տիկնիկ, վորը բեմ դուրս գալուց առաջ ձեքս կխոթի ռեժիսյորի ոդնականը։ Բուտաֆորական յերեխա... Յես իսկականն եմ ուզում։ Յես ուզում եմ

լսել, թե ինչպես է նա շնչում... վորպեսզի նա քնի. սնմեղ քնով, իմ փոքրիկս։ Այսոր, այսոր յես տեսա նրա գլխանոցը։

Լալիս է։ Ներս է գալիս Յակովը։

ՅԱԿՈՎ

Քաղաքացուհի, մուծեք ձեր կուտակումները։ Խնայդրամարկղը փակվում է։

ՄԱՆՅԱ

Ի՞նչէ անում Կոստյան։

ՅԱԿՈՎ

Այն, ինչ վոր դուք, միայն թփերում։ Պատվով եմ յերդվում, վոր Կոստյան առաջինն եր գալիս ձեզ մոտ։ Ամուսնացեք Կոստյայի հետ, խնդրում եմ։

ՄԱՆՅԱ

Իսկ նա կառնի՞ ինձ։

ՅԱԿՈՎ

Վազելով։ Յես կհրեմ նրան։

ՄԱՆՅԱ (Գնալով)

Հրեցեք, խնդրում եմ։

Գալիս է Կոստյան յեվ Պրիբելյովը, իրենց հետ մի բանի ձող բերելով։

ՊՐԻԲԵԼՅՈՎ (Պատշգամբի մոտ)

Սերգեյ Պետրովիչ, Ո՛ւլյգա Պավլովնա.

Կոստյան յեվ Յակովը մի կողմ են կանգնած. Գալիս է Կարաուլովը։

Ի՞նչ է Մարյա Սերգևնայի վորոշումը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Նույնպես պաշտոնական)

Խորհրդակցելով մեր աղջկա հետ՝ մենք վորոշեցինք չամուսնանալ ձեզ հետ։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Շնորհակալություն։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Վողջ լինեք։

Գնում է դեպի պատշգամբ։

ՊՐԻԲԼՅՈՎ (Կոստյային)

Ճանապարհը կանցնի այստեղով։ Խփեցեք ձողերը։

Կոստյան հառաչելով խփում է ձողերը։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (պատշգամբից)

Կարծում եք — թաղեցիք ինձ։ Բարդու ձողը գերեզմանիս մեջ եք խրում։ Վոչ, յես դեռևս ինքս ձեր թաղման վրա առոք-փառոք ֆյուները կնվագեմ։

Գնում է տուն։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ընկեր Յակով, իմ դծագիրը պատրաստ է։

ՅԱԿՈՎ

Պատրաստ ի, խնդրեմ։

Դնում է սեղանին։

Կարող եք ստորագրել։

Պրիբլյովը հանում է ինքնահոս գրիչը։ Ամառանոցից դուրս են գալիս Կարաուլովը յեվ Ոյլգա Պավլովնան, հագնված են ճանապարհորդական զգեստներ։ Կարաուլովի ձեռքին՝ պատյանի մեջ փաթաթված թավ.ջուրակը։ Ոյլգայի ձեռքին՝ զամբյուղ։ Հետևից՝ Մանյան, վոր փակում է դուռը։ Ոյլգա Պավլովնան փակում է լուսամուտի փեղկերը։

Պատրաստ վե՞լ եք Կովկաս գնալու։

ՈՅԼԳԱ

Մեղք է ուրիշի դժբախտության վրա ծիծաղել։ Աստված սևահերներին ել է պատժում։

Գլուխ է տալիս ամառանոցին։

Սերգեյ Պետրովիչ, Մանյուշա... նստենք մի վերջին անգամ։

Ծերունիները նստում են պատշգամբի աստիճաններին։

ՊՐԻԲԼՅՈՎ

Գրող... Անհաճելի յե...

Թեքվում է, վորպեսզի ստորագրի գծագրությունը։

Թուլյ տվեք։ Այս ի՞նչ բան է։

ՅԱԿՈՎ

Գծագրություն է։ Ճանապարհի նախագիծը։

ՊՐԻԲԼՅՈՎ

Բայց այստեղ դուրս է գալիս, վոր պետք է քանդել իմ ամառանոցը։

ՅԱԿՈՎ

Անպատճառ։

ՊՐԻԲԼՅՈՎ

Լուրջ գործում յես կատակներ չեմ տանում։

ՅԱԿՈՎ

Յես ել։

ՊՐԻԲԼՅՈՎ

Դուք հանված եք աշխատանքից։

ՅԱԿՈՎ

Վոչ։

ՊՐԻԲԼՅՈՎ

Սա զեղծարարություն է։ Զեռքս խոթել գծագրություն, յենթադրելով, վոր յես առանց նայելու, առանց կարդալու կստորագրեմ։

ՅԱԿՈՎ

Ընդհակառակը՝ միայն կարդալով է, վոր դուք կստորագրեք։

Լրագիրը տալիս է Պրիբլյովին։

ՊՐԻԲԼՅՈՎ

Սա ի՞նչ է։ Լրագի՞ր։

ՅԱԿՈՎ

Յերրորդ եջում, ներքևում։ Ահա. — ինժեներ, Ֆ. Ֆ. Պրիբլյովը։

Ծերունիները, Մանյան, Կոստյան մոտենում են։

ՊՐԻԲԼՅՈՎ (Կարդում է)

«Ֆ. Ֆ. Պրիբլյովը, չնայած նրան, որ պատկանում է ինժեներական հին կադրերին, հանդիսացավ վորպես մեր դարաշրջանի իսկական քաղաքացի։ Նախագծելով խճուղային ճանապարհը՝ ինժեներ Պրիբլյովը համոզվեց, որ ճանապարհը նպատակահարմար տանելու դեպքում Պրիբլյովի սեփական ամառանոցն ընկնում է ոտարման շերտի մեջ։ Վոչ մի վարկյան չտատանվելով՝ ընկ. Պրիբլյովը դեն գցեց սեփական շահերը։ Կարգադրելով ջարդել իր սեփական ամառանոցը՝ Ֆեոդոր Ֆեոդորովիչն ավելորդ անդամ վկայում է իսկական սոցիալիստական գիտակցության աճման մասին։ Պրիբլյովները մեր հպարտությունն են»։ Ո՞վ է գրել այս զզվանքը։

ՅԱԿՈՎ

Ես եմ գրել։

ՊՐԻԲԼՅՈՎ

Դուք կենթարկվեք պատասխանատվության, իսկ ես այսոր ևեթ հերքում կուղարկեմ։

ՅԱԿՈՎ

Ուղարկեք, գրեցեք, — «Ես, ինժեներ. Պրիբլյովս, մեր դարաշրջանի քաղաքացի չեմ։ Իմ գիտակցությունը չի աճում և ես մեր հպարտությունը չեմ»։ Հերքում գրեցեք։

Պաուզա։

ՊՐԻԲԼՅՈՎ

Անելանելի, բայց իշային դրություն։

ՅԱԿՈՎ

Ճիշտ է։

ՊՐԻԲԼՅՈՎ

Սակայն գրողը ձեզ տանի, ինչո՞ւ ես դուք սարի պես կանգնած Կարաուլովների սեփականության համար։

ՅԱԿՈՎ

Ախր նրանք ծերունիներ են, չքավորական թեքումով։ Իսկ հիմա և՛ նրանց համար լավ է, և ճանապարհի համար։

ՊՐԻԲԼՅՈՎ

Ես այդ նախագիծը չեմ տանի հաստատության, սատանա... Ես չեմ ցանկանում ամբողջ ճանապարհին ծիծաղել ինձ վրա։

ՅԱԿՈՎ

Ես ձեր փոխարեն և՛ կտանեմ, և՛ կծիծաղեմ։ Միայն ստորագրեք։

ՊՐԻԲԼՅՈՎ (Զվճռելով, նայելով գծագրությունը)

Գրողը... հիմար դրություն է... Ա՛յ քեզ սատանայություն... Կորցնել ամառանոցը, թե՞ համբավս։

ՅԱԿՈՎ

Ամառանոցը, ամառանոցը։

ՊՐԻԲԼՅՈՎ (Ստորագրելով)

Դուք ստոր ու զզվելի վարվեցիք, սակայն սրամիտ, գրողը տանի...

Արագ հեռանում է։

ՈՅԼԳԱ (Գրկելով Յակովին)

Չեմ հավատա, որ այս տեսակ մի յերիտասարդը կարող եր ինչ որ Կովկասներում ծնվել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Իհարկե շնորհակալություն... Բայց մեզ արվեստի մարդկանց համար սեփականությունը դատարկ բան է

Անփույթ կերպով բացում է փեղկերն ու դուռը գնում է տուն։

ՈՅԼԳԱ (Գնալով)

Ցիպ, ցիպ, ցիպ... հավեր ջան, ճնում ենք։

Կոստյան հանում է ձողերը։ Նա յել Մանյան նայում են իրար։ Դառնում են։ Մանյան գնում է տուն, իսկ Կոստյան՝ անտառ։

ՌԱՅԱ

Մանյա։

Վազում է նրա յետեվից։

ՅԱԿՈՎ

Կոստյա։

Բռնում է նրան հրապարակի ծայրին։

Գնա, Մանյան քեզ առաջարկութիւն է անում։ Խոստացել է ամուսնանալ քեզ հետ առաջին հերթին։ Շտապիր, քանի դեռ ճանապարհդ չեն կտրել։

Գնում է։

ԿՈՍՏՅԱ

Հիմա յել վոչ վոք չի կտրի։

Մի քայլ է անում դեպի պատշգամբ։ Նրա ճանապարհը կտրում է Ալեքսանդր Միրոնովիչը։ Կոստյան յետեվից հարձակվում է նրա վրա։

Ինչպե՞ս չե։ Վոտքերդ կՁարդեմ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ոգնեցե՛ք։ Սպանեցին։

Անտառից գալիս է Ցակովը, ամառանոցից՝ Մանյան։ Կոստյան Մանյային վերցնում է ձեռքերի վրա։

ԿՈՍՏՅԱ

Հեռո՛ւ... բոլորիդ... կապիկ կդարձնեմ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ (Վորին բարձրացնում է Ցակովը)

Ինձ մի բան է հետաքրքրում — բանդի՞տ է թե՞ խելագար։

ՅԱԿՈՎ (Տանելով նրան)

Պարզապես պսիխ է, բանդիտիզմի սաղմերով։

ԿՈՍՏՅԱ

Մանյա, յես ձեռքերիս վրա կտանեմ քեզ Զագս։

ՄԱՆԱ

Տար, միայն՝ ասենք ծնողներիս։

Կոստյան իջեցնում է Մանյային, շուրջն է նայում, բռնում է ձեռքը։

ՄԱՆՅԱ (Կանչում է)

Հայրիկ, մամա։

Ծերունիները դուրս են գալիս պատշգամբ։

Մենք վաղուց ենք սիրում իրար։

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Անփույթ)

Խնդրեմ։

ՈՅԼԳԱ (Անտարբեր)

Մանրացել են փեսաները... Լավ, կորհնեմ։

Գնում է տուն։

ԿՈՍՏՅԱ

Մենք կցանկանայինք արձանագրվել։

ԿԱՐԱՈՒԼՈՎ

Կնշանակի՝ սերը, այդ չնաշխարհիկ, անուշարույր զգացմունքը դուք գնում եք արձանագրելու։ Ի՞նչ եք քարացել։ Նստեցեք։

Կոստյան յեվ Մանյան նստում են իրար կողքի յեվ յերկչոտ հետեվում են Կարաուլովին, վորն անց ու դարձ է անում նստարանի առջեվը։

Յես ձեզ լավ չեմ ճանաչում, յերիտասարդ, բայց դու... Դու դերասանուհի յես... ուր է ապա քո նրբագեղ զգացմունքները։ Արձանագրվել։ Ապա ինչպիսի՞ սկզբունքներով ես դաստիարակելու դու իմ թոռնիկին։ Մի՞թե չի կարելի սիրել առանց արձանագրության, առանց կազմոնշչինայի։

Գնալով տերասից։

Սերն ազատ պետք է լինի։

ԿՈՍՏՅԱ

Ստիպված պետք է լինենք թագուն գնալ Զագս։

ՄԱՆՅԱ

Հետո չի՞ կարելի մեզ յերեխա ունենալ։ Բայց վորքան կարելի յե շուտ։

ԿՈՍՏՅԱ (Մտածկոտ)

Կանեմ, ինչ վոր կարող եմ։

Ամառանոցից դուրս է գալիս Ոլգա Պավլովնան սրբապատկերով։

ՈՅԼԳԱ (Անտարբեր)

Ցեկեք, որհնվեցեք։

ԿՈՍՏՅԱ

Ներեցեք, կամ յես, կամ՝ սուրբ Նիկողայոսը։

ՈՅԼԳԱ

Ուսանող եք, բայց կիսագրագետ եք... «Սուրբ Նիկողայոս»։ Սա Հիսուս Քրիստոսն է։

ԿՈՍՏՅԱ

Միևնույն է, ընտրեցեք։

ՈՅԼԳԱ

Դե յես Քրիստոսին ուսանողի հետ չեմ փոխի։

Սրբապատկերը տանում է։ Անտառից գալիս են Յակովը յեվ Ալեքսանդր Միրոնովիչը։ Ամառանոցից՝ Կարաուլովը, Ռայան յեվ Ոլգա Պավլովնան։

ՄԱՆՅԱ

Ծանոթացեք, ընկերներ։

Ալեքսանդր Միրոնովիչը ձեռք է տալիս Ոլգա Պավլովնային յեվ Կարաուլովին, Կոստյային բարեվում է հեռվից։ Գալիս է Զինան։

ԶԻՆԱ (Մանյային)

Վերջապես կարելի՞ յե քեզ շնորհավորել։

ՄԱՆՅԱ

Յես սովոր եմ շնորհավորանքներին։

ԱԼԵՔՍԱՆԴՐ (Կարաուլովին թեվանցուկ)

Յես ժամադրած եմ։ Ժամանակը գիտեմ իմ հինգ մատիս պես։ Բայց նրանք ժամանակի հետ այնպես են վարվում, ինչպես կվարվեյին ծառայի հետ.— «սպասի՛ր, վազի՛ր շուտ»։ Հնգի փոխարեն նրանց մոտ և՛ չորս է, և՛ յերեք։ Յեվ մեխանիզմը դիմանում է։

Հեռանում են։

ՅԱԿՈՎ

Հարսանիքը կանենք Կովկասում։ Ենտեղ ամեն բան կա։ Հռոմեական կամուրջ 4-րդ դարու, իսկ կողքին՝ ելեկտրակայան, հնգամյակի չորրորդ տարվա։

ՌԱՅԱ

Պետք է սովորել կառուցել ամուր՝ ինչպես հռովմեացիք և արագ՝ ինչպես բոլշևիկները։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Դուք լսեցի՞ք։ Աղջիկը կամուրջ պետք է կառուցի։ Հիմա ամեն ինչ հարկավոր է, բայց առաջինն այդ կամուրջով չեմ անցնի։

Հեռվում անցնում է Պրիբելյովը։

ՅԱԿՈՎ

Լավ չի — մարդը մենակ, չաղալի նման, ման է գալիս։ Ֆեոդոր Ֆեոդորովիչ, մի բաժակ գինի կովկասավարի։

Պրիբելյովը անվնասական մոտենում է։ Բարեվում է։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Յես վախենում եմ փչացնել ձեր տոնը։

Դառնում է, տեսնելով Զինային, մոտենում է նրան։ Մյուսներն զբաղված են սեղան պատրաստելով։ Զինային

Ի՞նչպես է ձեր անունը։

ԶԻՆԱ

Զինա...

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Զի՛նա, Զինո՛ւշա... Դուք յերբևիցե սի՞րել եք։

ԶԻՆԱ

Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում։

Նա նրան թեվանցուկ է անում, անցնում են։

ՄԱՆՅԱ (Բաժակը ձեռքին)

Թանկագին ծնողներ։ Յես ձեզ շատ անախորժություն-

ներ պատճառեցի։ Բայց բոլորը կքաջեմ։ Խոստանում եմ խաղալ դերս տաղանդավոր և փառավոր...

Գալիս է փոստատարը։

ՓՈՍՏԱՏԱՐ

Պրիբելյովին հեռագիր։

Տալիս է ու գնում։

ՈՅԼԳԱ (Պրիբելյովին, վորը կարդաց հեռագիրը, բոբեց բունքը յեվ ժպտաց)

Գուցե անհաճելի հեռագիր է։

ՊՐԻԲԵԼՅՈՎ

Վ... վոչ, վոչինչ։

Կարդում է։

«Կարդալով «Կրասնի դարոժնիկ» մի խումբ բարեկամ-պաշտոնակիցներ հղում են ձեզ իրենց շնորհակալությունն ու ջերմագին վողջույնը»։

ՅԱԿՈՎ

Յես նրա համար կարյերա արի։

ՊՐԻԲԵԼՅՈՎ (Հեռանալով Զինայի հետ)

Զինա, Զինուշա... Զինո...

ԿԱՐԱՈՒԼՈՎ (Բաժակը ձեռքին)

Զավակներս, բարեկամներս... Կյանքը բազմատեսակ է ու լայնածավալ... և մենք ալտիստներս, արվեստագետներս առաջինը նրա մեջ պետք է գտնենք գեղեցիկը և ցույց տանք այն ուրիշներին։ Տանք ուրեմն մեր թոռնիկներին մեր խնամքը, սերը, մեր մելամաղձոտ ու խնդալից լավագույն յերգերը։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՀՍՍՀ-ՍՍՀ Ա.

Ազգային գրադարան
NL0315979

12461

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

В. ШКВАРКИН

ЧУЖОЙ РЕБЕНОК

Комедия в 3 д. и 5 карт.

АРМЕНГИЗ ЭРИВАНЬ